



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15m8
581 ✓


3. Մ Ո Ւ Թ Ա Գ Ե Ա Ն

2

ՀԱՄԴԵՆՑԻ ՀԱՅԵՐ

Ա ր ա ս տ ա լ ա ծ

Ա զ գ ա գ ր ա շ կ ա ն ։ Հ ա ն դ ի ս ի ց



Բ ի ժ է լ ի ս

Տար, Ա. Մարտիրոսեանցի || Տիտ. Կ. Մարտիրօսանց.
Օրբելյանուանցի պատճենահանուանցի
Օրբելյանովսկայ պատճենահանուանցի
1901

Ման
581

Վրացական Կ. Հայոց Թագավորութեան
Պատրիարքական Տարբա Աղյօթական:

1999

Յ. ՄՈՒՐԱԴ ԵԱՆ

ԳԵՂԱԶ ԳԵՂԱԶ

ՀԱՄՃԵՆՑԻ ՀԱՅԵՐ

Ա բ ա տ ա տ ա լ ա ծ

Ա գ ա գ ա ր ա կ ա ն զ ա ն դ ի ս ի ց

— ՞ ՞ ՞ ՞ ՞ —

Ա Կ Ա Գ Ե Մ Ի Կ Ա Խ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս


Կ. Մարտիրոսիսկի տպարան || Տիկ. Կ. Մարտիրոսիսկա.
Օբելյանովսկա պլ., թ. № 1—

1901

8981

ԳՐԱԴԱՐԱՆ

Дозволено цензурою Тифлисъ 5-го марта. 1901 г.



581
581
h-8



ԱԿԱԴԵՄԻԿՈՒ

ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱԳՅԱՆ

ՀԱՄՇԵՆՑԻ ՀԱՅԵՐ

Ա Զ Գ Է Գ Ք Բ Կ Ա Ն . Ն Ի Ի Թ Ե Ր

ՀԱՄՇԵՆՑԻ ՀԱՅԵՐԻ ԿԵԸՆՔԻՑ ՈՒ ԱՃԽԱՐՀԻՑ:

Ամբողջ Սև Տոպի Կովկասեան ափերին, սկսած Սուխումի մօտեր՝ քից՝ Ռէբէլգալից ու Կոդօրից՝ մինչև Անապա և Նրանից էլ դէնը մինչև Կուբանի վիճակի Մայզովի ու Եկատերինովարի շրջակաները և մինչև Խրիմի ափերը—կորած ու ցիրուցան ապրում են մօտ տասնե հինգ հազար թիւրքահայ գաղթականներ: որոնք իրանց մայր երկով, անցեալով, բարբառով, աւանդութիւններով ու սովորութիւններով կապուած են Սև Տոպի Անատօլիական ափերին ապրող թիւրքահայերի հետ: Նրանց ամենամեծ բազմութիւնն այսօր կենդրոնացած է Սուխումի շրջանում, ուր թիւրքահայ գաղթականները մեծ անուն են հանել թութունի արդիւնաբերութիւնով, արտադրելով թիւրքական տեսակի ընտիր թութուն՝ տասնեակ հազարաւոր փթերով: Խոկ առհասարակ ամբողջ Կովկասեան ափերում այդ թիւրքահայերը իրանց բարքով ու վարքով, հայրենաւանդ սովորութիւններով աշխատավիրութիւնով և կուլտուրական յատկութիւններով մի շատ պատուաւոր տեղ են բւնում ափերի բազմատեսակ ու բազմալեզու գաղթական ազգերի մէջ, հանդիսանալով երկրի կօլօնիզացիայի մէջ իբրև ամենաընդունակ և կուլտուրական տարրերից մէկը:

Կարելի է ասել, թէ Կովկասեան ափերի ծաղկելն ու առաջ զնալը սկսւում է հայ գաղթականների գալու օրերից: Այդ հաստատապէս նկատուում է այսօր Սուխումի շրջանում, որ ութունական թերի սկզբներին, երբ դեռ նոր էին սկսել հայերը գաղթել այդ կողմերը, մի աննշան, յետ ընկած, ամայի ու աւերակ տեղ էր, այն ինչ այսօր Կովկասեան ափերի ամենածաղկած տեղերիցն է, իսկ թութունի արդիւնաբերութիւնով առաջինն է ամբողջ Ռուսիայում: Դրա պատճառը հայ գաղթականներն են: Միևնույն է նկատում և Սօչիի կող-



ՀԱՄՇԵՆՑԻ ՀԱՅԵՐ

Երևան Եկատերինովան

մերում, որ մինչև թիւրքահայերի գալը՝ անյատութեան էր դատապարտուած, մինչդեռ վերջին տարիներս նա էլ է սկսել տնտեսական զգալի քաղաք անել, դարձեալ հայերի թութունի մշակութիւնով:

Հայերի գալուց յետոյ՝ ամեն տեղ Կովկասեան ափերում—շարժում, կենդանութիւն է ընկնում: Հետզհետէ առաջուան դարեսոր ճահիճներն ու անտառները մաքրուելով, նոր նոր սիրուն արտեր ու սլանտացիաներ են բացւում. հարիւրաւոր գեսեատիններով նոր վարելահողեր են աւելանում այդ վայրի ու խիտ անտառներով ծածկուած երկրի մէջ: Եւ ամենամեծ մասով այդ բոլոր արտերը թիւրքահայերի ձեռքովն են փորուել ու բացուել, որոնց համար քանի-քանի հազարներով փող ու հսկայական աշխատանք է թափուել: Մի խօսքով թիւրքահայ տարրը Կովկասեան ափերում ամեն տեղ կուլտուրական յեղափոխութիւն է զցել և թերևս ամենքից աւելի նպաստել նրա խաղաղ, տնտեսական զարգացման:

Երկրի մշակութեան մէջ ցոյց տուած գործնէութիւնից անկախ, այդ թիւրքահայերը արժանի են մեր համակրութեան իրանց անցեալով ու հայրենական ցիշատակներով: Նրանք բոլորն էլ եկել, գաղթել են Սև ծովի անատօլիական ափերից. համարեա բոլորն էլ փախել եկել են մեր կողմերը իրանց հայրենական երկրի խեղճութիւնից, հալածանքից ու սարսափիներից: Նրանց գաղթելը դէպի Կովկասեան ափերը սկսում է վաժուունական թւերից, Կովկասեան լեռնականների վերջնական նուածումից յետոյ, երբ հարիւր հազարաւոր վայրենի ու լեռնցի չերքէզներ ու աբխազներ լցուում, հեղեղում են անատօլիական ափերը: Խոկ առանձնապէս գաղթականութիւնը սաստիկանում է վերջին պատերազմից և մանաւանդ ինսնական թւերի կոտորածներից յետոյ:

Թէ այստեղ, հայենի և թէ այստեղ, Կովկասեան ափերում ապրող թիւրքահայերը բոլորն էլ մի ժողովուրդ են. խօսում են մի բարբառով և կապրւած են իրար հետ մի անցեալով ու հայրենաւանդ սովորութիւններով: Նրանք աւելի յայտնի են համեմնեցի, կամ ինչպէս իրանք, գաղթականներն են ասում, հօմենցի, անունով: Նայելով իմ կարդացած ու լսած գրաւոր ու անգիր աւանդութիւններին, համշէնցի անունը մնացել է նրանից, որ մի ժամանակ նրանք ապրելիս են եղել Սպերի և Իրզէի մէջտեղը, համշէնի վիճակում, ուր նոյն աւանդութիւններին նայելով, եկած պիտի լինին նրանք Անիից, նրա վերջնական աւերումից յետոյ: Բաց այդտեղ էլ նրան հանդիսա չեն թող. նում: Մօտաւորապէս 17-դ դարու վերջերին՝ Տրապիզոնում տեղի են ունենում կրօնական հալածանքներ և համշէնցիներից հազարաւորներ մորթում, նահատակում են հաւատի անունով. շատերը ուրանուա-

են, իսկ շատերն էլ սարեր-ձսրերն են փախչում, անանց անտառներն ընկնում, օրերով քաղցած, սարսափած, գաղտագողի ճանապարհ կրտրում հետզհետէ դէպի Կարագէրէ, Սիւրմէնէ, Տրապիզոնի մօտերքը և Ճանիկի կողմերը (Սամօն), իսկ մի փոքր մասն էլ անցնում է Բաբերդ: Հետզհետէ, տարիների ընթացքում մահմէդական հալածանքներից նեղուելով, Կարագէրէ, Սիւրմէնէ և Իրզէ փախած հայերը քիչ-քիչ խմբում են զիսաւորապէս Տրապիզոնի մօտականներում և Ճանիկի կողմերում (Սամօնի սանչակ): Խոկ այս վերջին վիճակից էլ մի փոքր հատուած գնում հաստատում է Սինօպի վիճակում:

Այնուհետև երկար տարիներ մնում են նրանք այդ տեղերում, մինչև որ վերջապէս իրանց սոսկալի կացութիւնից վերջին ծայր յուսահատուտծ, դիմում են օտար ափերը: Վերջին պատերազմից յետոյ՝ Կովկասեան ափերը գաղթելու հետ միաժամանակ մի քանի տասնեակ տուն նրանցից, Տրապիզոնի և Օրդուի կողմերից, գնում նստում են Քրուսալի կողմերը, հեռաւոր Նիկօմիդիայի գաւառը, ուր մնում են նրանք մինչև այսօր:

Այսպիսով մեր Կովկասեան ափերի և նրանց մօտիկ տեղերում ապրող թիւրքահայերը համշէնցիներ են, համարեա բացառապէս Տրապիզոնի վիլայէթից, Տրապիզոնի և Ճանիկի կողմերից եկած. նրանց մի շատ աննշան մասն է միայն, մի քանի տասնեակ տուն, Սինօպի վիճակից գաղթած:

ՏԵՂՄԻՐՈՒԹԻՒՆ:

Համշէնցիները համախմբուած մէծ զիւղեր չունին. Նրանց զիւղերը սովորաբար կազմուած են լինում մի քանի իրարից հեռու ընկած տների խմբերից կամ հատ-հատ տներից: Տների ամենամեծ խմբեր, որ կարելի է տեսնել նրանց մէջ, հազիւ 20-30 տուն կունենան: Նրանց մէծ զիւղերը սովորաբար մի քանի այդպիսի խմբերից կամ զիւղամատերից են բաղկացած, որոնք Չոկ-ջոկ, ժողովրդական անուն են կրում, սովորաբար թիւրքերէն և կամ թէ չէ խմբերում ապրող հարուստ, «իշխան» ու առաջաւոր մարդկանց անուններով են լիշտում. օրինակ՝ «Փափազցոց գեղ», «Անապցոց գեղ», «Արթին ուստի գեղ», «Սիւնդիւրդցոց գեղ» և այլն: Երբեմն զիւղի մի ծայրից մինչև միւսը ժամերով ճանապարհ է քաշում. այնքան հեռու են լի-

նում թաղերը իրարից: Դրա պատճառը զլխաւորապէս երկրի տեղագրական պայմաններն են. հարթ, ընկած մեծ տարածութիւններ շատ քիչ են պատճառմ Աւ ծովի ափերին, ծովից մի տասնեակ վերստ հեռու, որտեղ որ հայ զիւղերն են շինուած. սովորաբար բոլորը թեք ու խորդուքորդ զառեվայրեր են, ձորերով կտրտուած: Բացի երկրի զիրքից, մասամբ էլ իրանց երկրագործական պարապմունքն է պատճառը: Տեխնիկական մի քանի բոյսերի մշակութիւնն ընդհանրապէս շատ աւելի ինամք ու հողացողութիւնն է պահանջում, քան սովորական հացարուսերը: Այսպէս օրինակ անկարելի բան է տնից հեռու վերստերով հեռու թութուն մշակել. պէտք է վերստերով հեռու տեղից տակառներով ջուր հասցնել տնկելու ժամանակ, քաղածը սալերով տուն բերել և ալին: Դեռ հիմա, երբ թութունի պլանտացիաները տներին մօտիկ են, ջրելն ու քաղածը կրելը ահագին նեղութիւն են պատճառում երկրագործին, ինչ կը լինի, եթէ վերստերով հեռու լինին: Այդ է պատճառը, որ նա ստիպուած է իր կացարանը մօտեցնել աւելի իր արոտին, քան հարեւանին: Այս էլ կայ, որ համշէնցին ամեն տեղ տուն չէ շինիլ. պէտք է ջուրն էլ մօտիկ լինի: Ջուրը ահագին զեր է կատարում նրա տնտեսական կեանքում. տանը խմելու, կերակրի, լողանալու համար—ջուր պէտք է բերուի, մալերին պէտք է ջուրը տանել, իսկ ձմեռը, խորը ձնին, երբեմն էլ տանը պէտք է խմեցնել. թութունի և «ածուքի» ցանած հնդերն ու «Փիղաները» պէտք է ջրել և ալին: Հեռու տեղից ինչպէս պէտք է այնքան ջուր բերուի, մանաւանդ որ նրանք սովորութիւն չունին տան համար ձիով կամ էշով ջուր կրելու. միայն թութունի «Փիղան» ջրելու և տնկելու ժամանակն են տակառներով ջուր կրում. իսկ սովորաբար տանը բանեցնելու ջուրը կրելը կանանց պարտքն է. նրանք են շալակով ջուրը բերում փայտէ ամաններով («գուֆա» թ.): Վերջապէս տունը պէտք է անպատճառ «ածուքտեղ» ունենայ: Անկարելի բան է երեւարկայել մի համշէնցի հակի տուն, որ մօտը, իրան կից «ածուք» չունենայ: Բացի «ածուքից», պէտք է իր շէնքերը շինելու համար տեղ ունենայ տան մօտիկ, աւելի թութունի հա-

մար, որը չորացնելու և պահելու համար շինուած շէնքերն ու պահեստները ահագին, հարիւրաւոր սաժէններով տեղ են բռնում:

Եւ պէտք է նկատել, որ առհասարակ նրանք՝ գոնէ այս- տեղ, կովկասեան ափերում, թութունի համար աւելի լաւ շէն- քեր ու յարմարութիւններ ունին, քան սեփական իրանց հա- մար: Նրանցից շատերի թութունի պահեստները—«մաղաղա- ները»—իրանց տներից զեղեցիկ են և ցրտից ու խոնաւութիւ- նից շատ աւելի պաշտպանուած, քան իրանց տները: Այդ պա- հեստները սովորաբար տախտակաշէն են լինում, մինչդեռ ի- րանց տները ծուռումուա, կլոր փայտից են շինուած, անտաշ ու ծակ- ծակ արաներով:

Խօսելով կովկասեան ափերի կլիմայական պայմանների մա- սին, չի կարելի ասել, թէ հայերի բոլոր նստած տեղերը վատ են: Ոչ, այստեղ էլ են պատճառմ լեռնային ու հովասուն գե- ղեցիկ տեղեր, ուր ոչ միայն ջերմը քիչ է լինում, այլ և լեռ- նային, մաքուր ու առողջարար կլիմա ունին: Ինչպէս օրինակ՝ Սուխումի շրջանում Ֆէբէլդա, Զէրնօմօրի վիճակում՝ Պօլթա և ալին: Բայց ընդհանրապէս անելով, հայ զիւղերից շատերի զիրքը առողջանական կողմից լաւ պայմանների մէջ չէ: Տեղ-տեղ համարեա ծովին հաւասար, ձորերում ու նեղ հովիտ- ներում ցրտած, անստառների մէջ կորած: տեղ-տեղ էլ անտա- ռապատ ըլուրների ու լեռների լանջին, ծովից մօտաւորապէս մի $\frac{1}{4}$ վերանդ կամ քիչ էլ աւելի բարձր և սովորաբար ծովա- հայեաց, համարեա բոլորն էլ ծովին են մտիկ տալիս:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ:

Մեզ մօտ, կովկասում, համշէնցի հայերը նստած են զլխաւորա- պէս Աւ ծովի կովկասեան ափերում և մասամբ էլ նրանց մօտիկ տե- ղերում կուբանի վիճակում, Եկատէրինոգարի ու Մալիօպի շրջակաց- քում և Խրիմի ափերում: Նրանց ամենամեծ բազմութիւնը, ինչպէս կերևն էլ ասեցի, կենտրօնացած է այսօր Սուխումի շրջանում, ուր նրանց թիւը հասնում է մօտ 900 տան և մի հազարի չափ էլ, մէն-

մենակ ապրող՝ անտնւոր պանդուխտների: Հայերը նստած են բացառապէս շրջանի երկու բաժիններում՝ Գուղառութիւն ու Գումառացի: Նրանց ամենանշտնաւոր կենտրօնական գիւղերն են՝ ՄՇարա և Ծէբէլդա: Երկուսն էլ նախկին արխագներից պարապուած գիւղերն են, որ հիմա ամբողջապէս համշէնցի հայերով են բնակեցնուած: Ամեն մէկը նրանցից 150 տնից աւելի բնակիչ ունի, եթէ այդ տեղերում ժամանակաւրապէս ապրող թիւրքահայերին էլ հաշուելու լինինք, Բացի իրանց մեծութիւնից ու բազմամարդութիւնից, այդ երկու գիւղերը ամբողջ շրջանում միակն են, որ հայերի սեփականութիւնն են կազմում: ՄՇարան թէկ պետական հող է, բայց իբրև համայնական սեփականութիւնն տրուած է հայերին 117 տան անունով գեռ ևս 1880 թւի վերջերին, Կովկասի նախկին փոխարքայ Մեծ իշխան Միխայիլի օրերում: Խսկ Ծէբէլդան հայ զաղթականներն են դնել մասնաւոր կալրածատէրներից այս մօտիկ տարիներում: Ամբողջ գնած հողի տարածութիւնը հազար դեսիատնից աւելի է, խսկ մասնակցողները 40 տուն են: Այսպիսով ամբողջ շրջանում մօտ 900 տնից հողի կողմից մի քիչ ապահովուած հազիւ մի 160 տուն կը լինին: Թէկ նրանց ձեռքի հողն էլ մեծ բան չէ, բայց մի կերպ անդում են իրանց համար. կալրածատէրի ձեռքին գերի չեն: Մնացած հարիւրաւոր հայ տներ ցրուած. ապրում են շրջանում, օտարապատկան, վարձով վերցրած հողերի վրայ, կազմելով փոքրիկ գիւղեր և. խմբեր, որոնք երեմն մեծանում, երբեմն էլ բոլորովին պարապւում են: Ամբողջ Կովկասեան ափերում էլի ամենից աւելի միտիթարական հանգամանքներում այդ շրջանի հայերն են, որոնք թէ մեզ և թէ հայրենական ափերին աւելի մօտիկ են, իրարից էլ ուրիշ տեղերի պէս ցրուած ու կտրուած չեն և նիւթապէս ու բարոյապէս համեմատաբար աւելի լաւ ու բարեկեցիկ վիճակի մէջ են:

Սուլուումի շրջանից ինչքան հեռանում ենք դէպի հիւսիս, այնքան աւելի աչքի է ընկնում հայերի ցրուած ու անջատ ապրելը, նիւթական ու բարոյական անխնամ վիճակը: Զէրնօմորի ահազին վիճակում նրանց թիւը հազար տնից քիչ աւելի կը լինի, խմբուած լինելով գլխաւորապէս Աղէրի, Սօջի ու Ջափշուկայ շրջականներում: Ամենից քիչ Աղէրի կողմերն են մնում. ընդամէնը՝ 170 տուն: Մի սեփական գնուած կալրուածք էլ այնտեղ ունին հայերը (ՄՇարա գիւղից), մօտ 1300 դեսեատին տեղ: Մնացած հայերի կէսը Սօջի կողմերն են, կէսը Ջափշուկայ: Այս վերջին վիճակումն էլ (Ջափշովա), որի մի մասը կազմում է պաշտօնապէս յայտնի Վելիամինովեան շրջանը, կան 130-ի չափ հայ տներ, որոնք սեփական հող ունին կառավարութիւնից ստացած. նրանց կէսը միայն Ջափշուկա կոչուած գիւղի հողի վրայ են, որ համշէնցի հայերի հիմսած առաջին գիւղն է Կովկասեան ափերում:

Թուսները նրան անուանում են Հայոց գիւղ (Արմանսկայ), թէկ մի քանի տարի է՝ իրանցից էլ մի քանի տուն մնում են այդտեղ հայերի հետ խառը: Սօջի հայ գիւղերի մի ծայրից մինչև Ջափշուկայի վիճակի հայ գիւղերը՝ օրերով ճանապարհ կայ. հարիւրաւոր վերստեր է քաշում: Մի 4—5 հարիւր տուն էլ Անապարի, Եկատէրինօդարի, Մայկոպի ու Խրիմի կողմերում կը լինին: Դրանց վիճակը ամենքից աւելի կորած ու անմիտթար է:

Այդքան հայերից միայն մի փոքր մասն է ռուսակատակ. շատշատ մի 300 տուն. գոնէ այսօր Կովկասեան ափերում նրանց թիւը շատ չէ: Գուցէ թիւրքահայերին Կովկասի սահմաններից հեռացնելու վերաբերմամբ կայացած բարձրագոյն կարգադրութիւնից յետոյ՝ շատերը կաշխատեն ռուսակատակութիւն ընդունելու, այդ ըլ գիտեմ: Այնքանը գիտեմ միայն, որ այսօր նրանց ամենամեծ մասը, հազարաւոր հայեր գեռ ևս մնում են թիւրքահապատակ, չուզենալով բոլորովին կտրուել, բաժանուել իրանց մայրերից:

Այսպիսով Կովկասեան ափերում և նրանց մօտիկ տեղերում ապրող բոլոր համշէնցի հայերը ամենաշատը հազիւ մի 2500 տուն կը լինին. եթէ մի 2—3 հազար էլ մենակ, աշխատելու եկած, անտնուր բանուորների թիւը գցենք, կը ստանանք մօտաւորապէս 15 հազար հոգի. ամենաշատը այդքան կը լինին. Կովկասում և Թուսիայում ուրիշ ոչ մի տեղ (բացի վիշուած Խրիմի ափերից) համշէնցի հայեր չկան: Բոլորը դրանք են և մէկ էլ՝ հայրենական ափերում մնացողները: Եթէ նրանց էլ սրանց չափ ընդունենք (Խրիմի գիւղին), կը ստանանք բոլոր համշէնցի կոչուած թիւրքահայերի թիւը՝ ընդամենը 30 հազար:

ՀԱՄԱՀԵՆՑԻ ՀԱՅԵՐԻ ԿԱԶՄՈՒԱԾ-ՔԲ, ԲԵՍԱՊՐՈՒԹԻՒՆԸ, ԶԳԵՍՏԸ ՈՒ ԲԵԱԿԱՐԱՆԸ:

Տեսքով՝ Սև ծովի ափերի հայ զաղթականները վիշեցնում են մեզ մեր տեսած ու գիտցած թիւրքահայ հայրենակիցներին, թէկ ընդհանրապէս սրանց կազմուածքի, շարժմունքի ու վարմունքի մէջ բաւական տարբերութիւն է նկատում, համեմատելով սրանց Մշի, Վանի և առհասարակ հայաստանի գաղտավիճակի գիւղացիների հետ: Համշէնցի հայր, մանաւանդ անատօլիական ափերից նոր եկածը, իր շարժմունքների մէջ աւելի կրակ ու կենդանութիւն է ցոլացնում, քան այն տեղերից եկողները: Սա իր հայրենիքի լեռնացին բնութեան համեմատ, զերից եկողները: Սա իր հայրենիքի լեռնացին բնութեան համեմատ, զերից շարժմունքներով ու ձևերով իսկական լեռնցու պատկերն է վիշե-

ցնում: թեթև ու արագաշարժ, ժիր ու ճարպիկ. իսկ հագուստն իսօսուածքն էլ մի առանձին լեռնային գոյն են կրում: Ճիշտ է՝ կազմուածքով նրանք այնքան առողջ ու յաղթանդամ տեսք ընենին, ինչպէս առհասարակ բոլոր լեռնցիները, թէև քիչ չեն նրանց մէջ հսկաց ու քաջառողջ կորիճներ, բայց բնաւորութիւնով շատ սրտու ու համարձակ մարդիկ են, զէնքը գոտուց ու ձեռքից անբաժան: Իրանց ամեն մի քայլով ու տարագով սրանք ցիշեցնում են լավերին:

Սրանց հագուստի մէջ էլ անբաժան է Ք. «Հայոց» շավառն» ու «Հայոց» նրանց տակը «Էւլու» ու «Էլու», և կաշուէ լայն գոտին — «Հայոց»: մի խօսքով զգեստի այն բոլոր տեսակները, որ յատուի են Թիւրքիակի շատ կողմերի ժողովուներին: Բայց սրանց «Հայոց» այնպէս լայն չէ, ինչպէս սովոր ենք տեսնել էրզումցոյ և կամ վանեցոց մօտ, որոնց հագածը ջուալի նման կախուում է ներքեւ և լաւ չի նստում: Սրանց «շալվարը», ընդհակառակը, ներքեն այնքան նեղ է լինում, որ բոլորովին կպչում է սրունքներին և ցի խանդարուում բանելուն ու շարժուելուն: «Շալվարի» վրայ նա կապում է բազմանալ կաշուէ գոտին, որի ծալքերում նա պահում է թութունը, «Հայոց» և երբեմն զանապան հարկաւոր թղթերը: Գոտուց կախած կը տեսնէք ու վոլիվէրը կամ անբաժան դանակի՝ պատեանի մէջ դրած: Նրանց կանանցից շատերի մօտ կը գտնէք այդպիսի դանակներ, թէև նրանք այդտեսակ կաշուէ գոտին էն կրում: Ֆէսը, սովորաբար, փաթթում են «Հայոց», որ մի բարակ քօղ է և յատկապէս ֆէսի համար են բանեցնում:

Կանանց հագուստն էլ թէև թիւրքական տարագով է, բայց պէտք է ասեմ, որ այնքան գեղեցիկ չէ, ինչքան տղամարդկանցը: Սրանց մօտ էլ աչքի է ընկնում թիւրքական ձեկ հագուստներից «Հայոց», որ սովորաբար «Հայոց»: ու մետաքսէ նաշխուն իրեղէններով է լինում զարդարուած: Իրանք դրան պարզապէս «Հայոց» են ասում (մահուդի կտորից լինելու համար, չուսա-մահուդ): Երբ որ «Հայոց» չեն հագնում, նրա տեղը հագնում են անթե ու երկայն չմէ «Էլու», որ եթէ «գունաւուր», է՝ երբեմն մետաքսից ու գոյն-գոյն թելերով են շինում: տակից հագնում են «իշխող», և վերջապէս երկայն շապիքն շինում: տակից իսկ դրամից «Ելաղի», ու շապիքի վրամից կապում են գոյն գնուց՝ «Հայոց»: Սովորական, ամենօրեաց «Էւլու», ու «Ելաղի», չափուու ու ձեռով իրար նման են լինում, այնքան որ առաջինը թևով է ու տակիցն են հագնում, միւսը անթե է ու վրամից: Եցդ բոլոր շորերի մէջ ամենքից աւելի աշքի է ընկնում նրանց կարմիր ծաղկաւոր, վթէ լայն-լայն վարտիքի, որ նրանց խելքով ու ձաշակով անպատճառ պէտք է ներքեւ երևայ, թէ չէ անպատշաճ բան կը լինի: Ջրջագիսն և առհասարակ կանանց երկար հագուստ ոչ միայն չունին, այ-

և, ինչպէս երեսում է, այդ տեսակ հագուստով նրանց մէջ այնքան էլ համարմունք չի վայելում: Նրանք էլ են գլխին ֆէս դնում, բայց առանձին կերպով յարմարեցնում գլխին, ներս ծալելով ու դէպի յետ ծուելով, ճակատի կողմից էլ մի բարակ, ծալած քօղով՝ կապելով ֆէսը գլխի հետ, մի ուրիշ բարակ, գունաւոր քօղով էլ — «Հայոց» — փաթթելով գլուխը բլի տակից: Այդ ճակատէկապին նրանք «Հայոց» են ասում և միայն կանացքն են կապում: աղջկերք չեն բանեցնում: «Հայոց» — սովորաբար տղամարդիկն էլ են կապում ֆէսների վրայ, բայց այնպէս ծալձելով ոլորում են ֆէսի վրայ, ամերողապէս չեն ծածկում: Պլիսի գարդարանք համարեա չեն բանեցնում: Ուկեղէն բոլորովին չունին: շատ քիչ անգամ է պատահում նորահարսների գլխին տեսնել արծաթէ զարդեր՝ կախիսած մագերի հիւսերի հետ, երբեմն էլ արծաթէ ճտնոցներ — «Հայոց»: Այսանց ծակելու սովորութիւն թէև ունին, բայց սովորաբար օդեր չեն բանեցնում: բանեցնողներն աւելի նորահարսներն են լինում: Դրանց ամենասարածուած զարդարանքը մատանին ու ապարանջանն են, որոնք բոլորն էլ հասարակ, կոպէկանոց բաներ են լինում, սովորաբար երկաթից կամ գեղին պղնձից, շատ-շատ միայն մատանիներն են լինում երբեմն արծաթից: Մատանիներ դնելու սովորութիւնը տղամարդիկն էլ ունեն:

Այսեղ հագուստին վերաբերեալ բոլոր ասածներս վերաբերում են աւելի Անսատօլիական ափերից նոր եկած համշէնցիներին: Հին, տասնեակ տարուան եկողները, ինչպէս շատ բան հայրենական կեանքից ու սովորութիւններից, այնպէս էլ հագուստը քիչ-քիչ սկսել են փոխել, ենթարկուելով շրջապատող ազգերի ազգեցութեանը: Այսպէս սկսել են արդէն ֆէսի տեղ մորթէ զլիսարկներ ու «Բաշլըներ» բանեցնել, տրեխների տեղ չուսա («շափուլա») կամ ճտով կօշկիներ հագնել: Քիչ-քիչ սկսել են վերի շորերն էլ փոխել. միայն «շալուարն» է մնացել. իսկ ներքին հագուստը համարեա ամեն տեղ՝ հայրենական սովորութիւնով իրանց ձեռագործ կտաւից են կարում: Նոյն փոփոխութիւնն է նկատուում և կանանց շորերում: կամաց կամաց նրանք էլ են սկսում կին ձեկ փոխել: Հետզհետէ կաբանները տեղ են տալիս նոր ձեկ, ուռած թեւերով «Հայոց»: իսկ մերչերս խիստ ձգտում են ցոյց տակիս շրջազգեստ հագնելու, թէև մի քանիսը շրջազգեստի վրամից դեռ էլի հայրենական գոգնոցն են կապում: Զգեստի փոփոխութիւնը, ինչպէս և ամեն բանի, աւելի աշքի է ընկնում Զերնօնօնօրի վիճակում, ուր համարեա թէ հայրենական տարագից նշովներ էլ չեն մնացել: թէ տղամարդիկ և թէ կանացք իրանց տարագով համարեա բոլորովին ուռածների են նմանում:

Համշէնցիների տները համարեա կլոր փայտից են շինուած, բայց

կան տախտակաշէն և կաղնու ճղներից հիւսուած տներ էլ. վերջին տեսակներին «չիթ» են ասում: Քարաշէն տներ համարեա թէ զ կան. սովորութիւն չեն ունեցել: Նրանց եկեղեցիներն էլ թէ հայրենիքում և թէ այստեղ, փացտից են շինուած: Ամբողջ Սուխումի շրջանում քարաշէն տուն հագիւ թէ երկու-երեք հատ գտնուի: Ջինած տների մեծ մասը երկյարկանի է. տակը՝ գոմ, վրան՝ տուն: Նրանցից շատերը համարեա մի հատ կարգին պատուհան չեն ունենում: Կոյսի համար փոքրիկ ծակեր են թողնուում պատերի մէջ և մի փոքր բացուածք էլ ծածքի մէջտեղը, օջախի դլսին, այդ էլ աւելի ծիսի, քան լոյսի համար («բաջա», թ.): Կրակի համար ջոկ տեղ չեն շինում, տան մի անկիւնում: Նոյն խակ լաւ տներումն էլ առաջուան ժամանակների պէս նահապետական օջախն է լինում տան մէջտեղը, որ ամառ-ձմեռ վառում են: Սովորաբար՝ խաւարը, ցուրտը, ծուխն ու խոնաւութիւնը անպակաս են նրանց տներից: Հողէ կտուր՝ բոլորովին ըրկաց նրանց մօտ: Նրանց սովորական ծածքը — մանր կորտած տախտակից է լինում, որ հանում են աւելի կաղնու և հաճարի ծառերից, («ծածուկի տախտակ», «խարդումա» թ. դրանք). Խակ աւելի խեղճերի տները «ըմփրով» («իմփր»՝ խոտ է, պաորտանեք) կամ «ծեղով» (սիմինդրի չորցողուն) են լինում ծածկուած:

Համշէնցիները, ինչպէս և մեր կողմի զիւղերում, սովորաբար տները իրանք տէրերն են շինում, երբեմն միայն դրսից վարպետներ վարձում, աւելի իրանց համագիւղացիներից, այդ էլ աւելի այն ժամանակ, երբ իրանք շատոր չեն լինում և գործ էլ շատ են ունենում: Վերջին տարիները շինած նրանց բոլոր լաւ տները դրսից եկած օտար վարպետների շէնքեր են: Տներ սովորաբար շինում են աշնան, թութունի քաղը վերջացնելուց յետոց, խակ թութունի համար պահեստի շէնքերը՝ աւելի գարնան, թութունը «սաղբելուց» (տնկել) յետոց: Տները սովորաբար չեն սուաղում, միայն ձմեռը մօտեցած ժամանակին ձեռքով աղբ են քսում արաներին, որ ծակերը ծեփուին, վերջերս սկսել են լաւ տները կրով սուաղել: Նրանց տները սովորաբար վերեներքև երկ-երկու աշք են ունենում, միջի դռնով իրար կցուած: Վերին յարկի աչքերից մէկը մեծ է լինում, միւսը փոքր: Մեծ աչքը է կրչում. այդտեղ են սովորաբար նստում-վեր կենում, ուտում ու պակում. փոքրին՝ «մառօն» են ասում. այդտեղ են գլխաւորապէս տան աւելորդ իրեղէնները պահում, փոխնորդներ կախ անում, իրանք փոխում: Խակ հարսանիքի ժամանակ էլ հարսի առանձնասենեակն է: սովորաբար պասկն էլ ացդտեղ են անում: Այդ տեսակ տներն առհասարակ լայն պատշգամ էլ են ունենում — «հայեաթ», որ սովորաբար փողոցի կողմից տախտակներով փաթթուած է լինում՝ քանուց ու

ցրտից պաշտպանուելու համար, և աւելի տան մանր բաներ ու երկրագործական բերքեր պահելու և մաքրելու համար է ծառայում, քան տեսարանին: Սովորաբար այդտեղ են պահում ամբարը. կանաչըն էլ իրանց ճախարակը այդտեղ են սարքում ու կտաւ գործում և իրանց ձեռագործ նաշխուն եալլուխները հէնց այդտեղ կախում պատից, դռան մօտիկ. Պատշգամբի տակը անսառնների կանգնելու տեղ է. անձրևին ու վատ եղանակին այդտեղ են կթում կովերը:

Մի քանիսը տան պատշգամբի կամ ջոկ տեղում, տան մօտիկ, մի սենեակ են շինում հիւրերի համար, որին «օր» են ասում: Յատուկ «օդա» են շինում և թութունի ծրարը կապելու համար. երբեմն միւնոյն աչքը հիւրերին էլ է ծառայում, թութունին էլ. մանաւանդոր տարուաց մեծ մասը պարապ է լինում և միայն ծրարը կապելու ժամանակն է հարկաւոր գալիս: Դրան էլ «բամբէ օր» են ասում: Բացի այդ «օդավից», թութունի համար երկու ուրիշ շէնք էլ են շինում: մէկը ծառայում է որպէս թութունը չորացնելու տեղ միւսը իրը պահեստատեղ երբեմն երկու շէնքերը միացնում են: տակը չորացնելու համար են գործածում, վրան՝ կախում ու պահում են չորացած թութունը, երկուան էլ մի ծածքի տակ: Չորացնելու տեղը, կամ ինչպէս հայերն են ասում, «մաշինա»ն — սների վրայ կանգնած մի պարզ շէնք է, որ առջևի կողմից բոլորովին բաց է, խակ երեք կողմից ցախով կամ ծառի ճղներով պատաճ, որպէսզի քամին ներս ըրփէ: «Մաշինա»ն մի քանի աչք է ունենում, նայելով թէ ինչքան տեղ է բռնում թութունի պլանտացիան. ի հարկէ եթէ շատ է, տեղն էլ շատ կուզէ: Սովորաբար երկու աչքից պակաս չի լինում, բաց լինում են և մինչեւ 10 աչքանի շէնքեր: Երբ որ պակաս է գալիս, մի կողմից կցում, աւելցնում են: «Մաշին»՝ առջևից՝ ամեն մի աչքի դիմաց — հորիզոնական կերպով ձողեր են լարուած. գետնից մարդաշափ բարձր, նեցուկների վրայ հաստատուած: Այդ հողերի վրայով գուրս ու ներս են հանում փայտէ շրջանակներ — «մաղեր», որոնց վրայ թէլերով թութուն է շարուած: Թութունի պահեստատեղը — «մաղազա» — շինում են բոլորովին գետնի վրայ և չորս կողմից տախտակով լաւ պատում են, որպէս զի դրսի օդի խոնաւութիւնը չը ներգործէ ներսը կախած թութունների վրայ: Համշէնցիների շինած բոլոր շէնքերի մէջ ամենամեծ շէնքերը աչք երկուսն են լինում. դրանց վրայ շատ անգամ աւելի ծախս ու աշխատանք են թափում, քան իրանց սեփական կացարանների վրայ: Մնում են էլի երեք ջոկ-ջոկ շէնք, մէկը՝ որ ամենքն անպայման ունենում են, զիսով սիմինդր պահելու համար է. սովորաբար փոքրիկ շէնք է, տան ձևով, ամուր սների վրայ հաստատուած, գետնից մի սամշէնաշափ բարձր.. դրան հայերն ասում են «կօրօբ»: Հասարակ «կօ-

րօքները՝ կաղնուռ ճղներից հիւսուած կլոր կամ քաւանկիւնի ձև ունին, «Ճեղով» ծածկուած: Կաւ շէնքերը շինուած են տաշած կլոր փայտից և մանր տախտակով են ծածկուած: Միւս երկու շէնքերն են փուռը և մարդզը: Փուռը տան մէջ շեն շինուած, այս ջոկ տեղ, առանձին ծածքի տակ: իսկ մարդզը հասարակ չըթէ՛ շէնք է, խոտով կամ «Ճեղով» ծածկուած Սովորապար այդ բոլոր շէնքերը շինուած են տներին մօտիկ, գիւղամիջուած: Երբեմն միայն պայխա եկած, նոր շինուելիք «մաշխնաները» շինուած են թութունի սլանտաշիաներուած, եթէ տեղը յարմար են դտնուած:

ՊԵՐԵՊՄՈՒՆՔՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ:

Համշէնցիները թէ իրանց հայրենական ափերուած և թէ այստեղ բացառապէս երկրագործութիւնով են պարապուած: Եթէ համեմատելու լինինք մեր կողմերուած ապրոցներին հայրենական ափերուած մնացողների հետ, նրանց պարապմունքի ու տնտեսութեան ձւերի մէջ շատ քիչ փոփխութիւն կը գտնենք, եթէ քիչենք ու մի կողմ դնենք թութունի մշակութիւնը, որ շատ տեղ հայրենիքուած արդէն բոլորովին վերջացել է, իսկ եղած տեղերուածն էլ հետզհետէ աւելի յետ է գնուած: Մինչդեռ մեր Կովկասեան ափերուած այդ բոյսի մշակութիւնը մի քանի տարուց դէսը դարձել է մի այնպիսի տիրապետող ու գլխաւոր պարապմունք, որ անկարելի է երևակացել այդտեղ, մասնաւորապէս Սուլխումի շրջանուած մի հայ գաղթականութիւն, մի հայ գիւղ, նոյն ինչ մի հայ գաղթական, որ դրանով պարապելիս ըլ լինի: Թութունը մեր կողմի համշէնցի հայերի արդիւնաբերութեան մէջ առաջին ու ամենակիսաւոր տեղն է բռնուած: Սուլխումի շրջանուած տասնակ հազար վութ թութուն միայն համշէնցի հայերն են արտադրուած: Թրանից կարելի է հասկանալ, թէ ինչքան մեծ չափեր է ստացել այդ բոյսի մշակութիւնը նրանց մօտ: Ճիշտ է՝ Չերնօսօրի կողմերուած, բայց Սօյի շրջանից, թութունի մշակութիւնը այնքան մեծ ծառալ չենի, բայց հաստատապէս կարելի է առաջին տեղը տալ համշէնցի հայերին ամբողջ Կովկասեան ափերի թութունի արդիւնաբերութեան մէջ:

Հացաբոյսերի մէջ առաջինը և ամենաստարածուածը նրանց մօտ միմինդրն է, որ ինչպէս հայրենիքուած, նոյնպէս և այստեղ, կազմուած է նրանց գլխաւոր ուտելիքը, նրանց ամենօրեաց հայր: Ամբողջ Կովկասեան ափերի համշէնցիների մօտ այդ բերքը համարեա ոչ մի տեղ չէ արտահանուած, միայն իրանց համար են ցանուած: ՏԵղ-տեղ էլ եր-

բեմն, երբ թութունի պատճառով ցանքը քիչ է լինուած, իրանք պափուած են լինուած ուրիշներից գնելու:

Ցորեն թէկ շատերը ցանուած են, բայց մէկ որ ամենքը չեն ցանուած, մէկէլ որ՝ տեղ-տեղ ցանանը չի լինուած, լաւ չի գալիս: Իրանց ասելով, էլի հայրենիքուած ցանողները թէ հիմիկուանից շատ են եղել եւ թէ լաւ էլ տուել է: Բայց էլի չնայելով աննպաստ պացմաններին, ցորենի մշակութիւնը հետզհետէ աւելի ու աւելի է տարածուած հայ գաղթականների մէջ, թէկ էլի առաջուան պէս՝ նրա հացը միայն պասս ու տօն օրերին են բանեցնուած:

Միւս հացաբոյսերից ցանուած են վարսակ ու գարի: աւելի առաջինը: Վարսակը նրանց հայրենիքուած, մասնաւորապէս հանիկի ափերուած (Զարշամբայի գաւառամասուած) մեծ արտահանութիւն է ունեցել:

Տէկնիական բոյսերից, բայց թութունից, ցանուած են էլի կանեփ, թէկ ոչ այնքան շատ ինչքան հայրենիքուած: Այստեղ թէ կանեփ շատ են ցանել և թէ տեղ-տեղ վուշ էլ են ցանել: Իսկ այստեղ սովորաբար միայն կանեփն են ցանուած և այն էլ հազիւ մի «առնուքի» չափ տեղ: Կանեփի թելից են գործուած իրանց բոլոր ներքին հագուստը և տանը բանեցնելիք բազմատեսակ «եազուվները»:

Այգեգործութիւնը թէկ առհասարակ կանոնաւոր կերպով ու մեծ չափով չէ տարածուած նրանց մէջ, բայց հետզհետէ պտղատու նորոնոր ծառեր են աւելցնուած իրանց «ածուքներուած» ու արտերուած, մասնաւոր նրանք, որ սելիական հողեր ունին, բերելով պատուաստները իրանց հայրենիքուած ցատնի ու գովուած տեսակներից. գլխաւորապէս՝ տանձի, խնձորի, թթի, սալորի, բայլի և շագանակի ծառերից: Տեղտեղ սկսել են նաև բաւական մեծ չափով խաղողի որդեր տնկել տեղական, ծառի վրայ բարձրացող տեսակից (իզիբէլլա, տեղական լեզուով՝ «աղէս»): Տեղ-տեղ պատղահուած են և պտղատու ծառեր այդ ափերի հին բնիկներից մնացած, ինչպէս օրինակ՝ տանձենիներ զափշուկայի հին բնիկներից մնացած, ինչպէս օրինակ՝ տանձենիներից մնացած, և խաղողի ու կողմերուած (Զերնօմօրի վիճակ), չերքէզներից մնացած, և խաղողի ու թզի ծառեր Սուլխումի շրջանուած արիսապների ժամանակից: Իրանց պատմածներին նայելով, հայրենիքուած նրանք պտղատու ծառեր շատ են ունեցել, այն էլ ընտիր տեսակներից, թէկ այնտեղ էլ կանոնաւոր ապիներ չեն ունեցել. պատուաստների մեծ մասը ճանապարհների, որ ապիներ չեն ունեցել. պատուաստների մեծ մասը ճանապարհների, ու անտառների մէջ է եղել ցրուած և մի մասն էլ տներին մօտիկ:

Զերամապահութիւնով այստեղ համարեա բոլորովին չեն պարապուած, էլի հայրենիքուած քիչ-շաբ պարապէլ են: Դրա պատճառով մէկ թութունն է, մէկ էլ իրանց անհող վիճակը:

Մեզու պահուած են, բայց ոչ ամենքը. աւելի քէերը, քան

տերը: Տեղ-տեղ պատահում են 40 և մինչև իսկ հարիւր փեթակով մեղու պահողներ, բայց դրանք հազարիւտ են. սովորաբար քիչ են ունենում:

Ինչպէս հայրենիքում, նոյնպէս և աշտեղ, ամեն տուն ունի իր բանջարանոցը, կամ ինչպէս իրանք են ասում, «ածուքը», որ համարեա բացառապէս համշէնցի հայ գեղջկուհիների ձեռքով է ցանում ու մշակում: Այստեղ՝ գոզնոցը կապած, փետար ձեռքին՝ բանում ու աշխատում է նա ժիր տղամարդու պէս, հետն էլ ժամանակ գտնելով մի կողմից երեխանց ու տան պակասներին նայել, միւս կողմից մասնակցել իր մարդու աշխատանքներին: «Ածուքի», բոյսերից ամենից շատ տարածուածը «բօնջարն» ու լոբիան է: Խսկապէս լոբիան «ածուքում» այնքան չեն ցանում, ինչքան սիմինդրի հետ խառը՝ մէկ արտում կամ առանձին: Խսկ «բօնջարը», որ կաղամբի մի տեսակն է (կանաչ ու յոզիսող), «ածուքի» ամենասովորական բոյսն է, առանց դրան համշէնցի հայր չի կենալ. պաս օրերին զլխաւրապէս այդ են գործածում: «Բօնջարից» յետոյ «ածուքում» մեծ տեղ են բւնում պրասր, սովո՞ւ ու սխտորը: Բացի դրանցից, «ածուքում» պատահում են էլի՝ տօմաթ, բաղրիջան, կարտօֆիլ, վարունգ, դղում, ձմերուկ ու սեխ, թէւ միևնոյն բոյսերը աւելի մեծ չափով արտերում էլ են ցանում, սիմինդրի կամ թութունի հետ խառը:

Բացի բուն երկրագործութիւնից ու տեխնիկական բոյսերի մշակութիւնից, համշէնցի հայեր պարապում են նոյնպէս անսանվահութիւնով և տնային մանր արհեստներով։ Անսանվահութիւնն այնքան զարգացած չէ նրանց մէջ. պահում են միայն այնքան, ինչքան հարկաւոր է երկրի մշակութեան և իրանց տան կարիքների համար, դրանք են՝ եղ, կով, ձի Սովորաբար մի տուն պահում է մի զոյգ եղ (հասարակ կամ «գոմշաեղ»). շատ քերն են երկու զոյգ ունենում։ Կթելու համար պահում են մի-երկու կով, երեքից ոչ աւելի, կամ մի-երկու կիթի գոմէշ։ Աւելի ունեցողը ամենաշատը մի-երկու կիթի գոմէշի հետ մի-երկու էլ կիթի կով կունենայ. գոնի Սովորումի շրջանում դրանից աւելի ունեցողները հազվագիւտ են։ Մալերի մէջ ամենից շատ տարածուածը «գոմշամալն» է. այդպէս է գոնի Սովորումի շրջանում, ուր գոմէշը ընդհանրապէս լաւ է դիմանում։ Եւ պէտք է ասել, որ այդ կողմերի համար, ուր ճանապարհներ չկան, չորս կողմը անտառ է, անձրևն ու ցեխը անպակաս է, շատ դժուար կը լինէր երկրագործի բանը, եթէ գոմէշը չկինէր։ Կաթնատնտեսական արդիւնքները բոլորը կրանց համար են գործածում։ Երբեմն նոյն իսկ նրանցից շատերը իւղը դրսից են գնում. տեղ-տեղ՝ միայն պատահում են նրանց մէջ իւղ ծախողներ։ Պանիր համարեա չեն շինում. քոյվ շինում են միայն Տրա-

պիզօնին մօտիկ գիւղերից եկողները։ Անասնապահութիւնով աւելի պարապում են Ձերնօմօրի կողմերի հայ գաղթականները։ Ոչսար ու իսրայէլովին չեն պահում։

წოდ բոլորպված շահ կամ համշենցի համը դարձեալ ժամանակի է գտնում տնային մանր արհեստով զբաղուելու; Հագուստից ու ձեռադործ գործուածքներից սկսած՝ մինչև իր տան շէնքն ու այլ և այլ երկրագործական սարքեր շինելը, բոլորին նա հասնում է. բոլորը նրա ձեռքից գալիս է; Գատերը գիտեն իրանց մէջ սապ, լուծ, արօր, տափան շինելը; Հիանալի ամաններ են շինում փայտից—ջուր կրելու, թթու գնելու, կաթնեղին արդիւնքները պահելու համար տակառներ, օշնակներ, եղածաններ, նոյնպէս և տաշտեր խմորի համար և տեսակ-տեսակ մեծ ու փոքր զամբիւղներ՝ զանազան բաններ պահելու և կրելու համար; Բոլորն էլ ամուր ու գեղեցիկ, դիմացկուն փայտից շինուած:

Խօսելով նրանց տնային արդիւնաբերութեան մասին, աւելով
չեմ համարում մի քանի խօսք ասել նրանց երկրագործական սարքի
վրաց. Նրանց արօրը շատ պարզ կազմութիւն ունի. ամբողջապէս փայ-
տից է, միայն խոփն է երկաթէ. Մի անկիւնաձև ծակած փայտ է.
մի կողմը գետնի վրայ է քաւում («ընեղ») և նրա ծացրին է ամրա-

ցած խոփը. միւս ծայրը մի քիչ թէք կերպով ցցուած է և մանի տեղ է բռնում («պոչ»). Ծակած տեղին մօտիկ կցուած է մի երկայն փայտ («օք»), որի ծայրից լծում են եզներին. Վերջապէս արօրի ներքեւ կողմը, գետնին մօտիկ, մի փոքր տախտակ է մեխուած ակօսի հողբ մի կողմ թափելու համար. Այդ է բոլոր կազմութիւնը. ուրիշ ոչ անլւ ունի և ոչ մի բան. Արօրում միայն եզներ են լծում, ձի չեն բանեցնում. Այդ արօրով թէւ կարելի է ուզած խորութիւնով հերկել. բաց սովորաբար նրանք խորը չեն հերկում. Պութան բոլորովին չեն բանեցնում. Երբեմն միայն պատահում են երկխոփաւոր արօրներ («չաթալ յարօր»), որ սովորականից շատ են հերկում. Նրանց արօրը առհասարակ շատ հեշտ ու թէթէ է բանում: Համարձակ կարելի է ասել, որ այնպիսի խորդ ու բորդ, քարքարոտ ու անհարժ տեղերում, ինչպէս Կովկասեան ու հայքենական ափերի հայերի նստած տեղերն են, նրանց արօրը մէծ յարմարութիւն ունի երկիրը մշակելու համար. Ինքը շատ թէթէ. տեղը ինչքան զատի վեր լինի, դժուար չի լինի շարժել ոչ եզան համար և ոչ քշողին:

Միւնոյն յարմարութիւններն ունի և նրանց սազը, որ չը նայելով որ բոլորովին թիւրքական չէնք ունի, ճանր ու դանդաղ բան է, միապաղատ անլւներով, բաց ինչ կամէք, որ նրանց տեղերի համար ամենալաւ սայն է: Թէւ ճանր է գնում, բաց ամուր ու դիմացկուն բան է: Ինչքան կուգէ ցեխոտ ու անհարժ լինի ճանապարհը, եթէ միայն քարքարոտ չէ, բան չի լինի սազին, մանաւանդ եթէ գոյշաեղներ են լծուած: Եւրօպական կատարելագործուած չորս անւաւոր սազերի մասին չի կարելի խօսել, քանի որ դեռ անբողջ Կովկասեան ափերում հաղորդակցութեան համար հազիւ միայն մի մէծ ճանապարհ կայ, այն է՝ ծովեղբեաչ խճուղին, իսկ դէպի հայ գաղթաշէնները ամբողջ ափերում ոչ մի օրինաւոր, բացուած ճանապարհ չի կայ:

Երկրագործական ոչ մի մեքենայ ու կատարելագործուած սարք չունին նրանք հացաբոյսերի մշակութեան համար: Բոլոր աշխատանքները կատարում են սովորական նահապետական ձեռվ ու գործիքներով: Մի քիչ աւելի յարմարութիւններ գտել են թութունի վերաբերութեամբ, չորացնելու համար հնարելով բաւական յարմար չէնքեր, որոնք իրանց այժմեան ձեռվ այս վերջին տարիներս են հնարուել ու գինուել:

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԷԼ ՆՐԱՆՑ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ:

Համշէնցի հայերի ապրուսոր շատ խեղճ է ու պարզ: Ոչ միայն երեխաները, այլ և մեծերից շատերը; աւելի կանաչք՝ շատ անգամ օրերը բորբկ ոտով են անցնում, մանաւանդ խորը ցեխերին Խակ երեխաները հորբիկ ոտով են անցնում, մանաւանդ խորը ցեխերին Խակ երեխաները հօ համարեա տարուայ մէծ մասը բորբկ են մնում: Բանելիս շատ խեղճ է համարեա տարուայ մէծ մասը բորբկ են մնում: Աւելի ու պարզ են հագնում: միայն տօն օրերին են զարդարուում: Աւելի ու պարզ են հագնում: միայն տօն օրերին են զարդարուում: Աւելի խեղճ ու աղքատիկ է նրանց սնունդը: Ինչպէս վերևս ասեցի, նրանց խեղճ ու աղքատիկ է նրանց սնունդը: Ինչպէս վերևս ասեցի, նրանց սովորական հացը սիմինդրի հացն է. ցորենի հացը աւելի պաս օրերին են ուտում, իսկ չունեցողը ողջ տարին համն էլ չի առնում: Նրանց ամենասովորական կերակուրը թանն է, ուտիս օրերին նրանց գլխաւոր ուտելիքը դա: Պասին բանեցնում են աւելի «բօնջար», լոբիա, սոխ, պրաս, սխտոր, թթու, «բէքմէզ» (պտուղներից շինած մեղը), երբեմն էլ իսկական մեղը՝ սովորաբար ջրած. «բէքմէզն», էլ նոյնպէս: մէկ որ ացպիկ լաւ կը բրդուի և մէկ էլ որ շատ կը դիմանայ: Մածուն քիչ են ուտում, տեղ-տեղ՝ ուր կաթը քիչ է, գուցիչ ամիսը մի անգամ: զուտ մածուն այնքան չեն ուտում, ինչքան մածնախառը թան: Իւղ սովորաբար դրսից չեն գնում. եթէ կթուան ունենում են, ուտում են. եթէ ոչ ամիսներ բանեցարելններով են անցկացնում: Երբեմն միայն աւելցած խողը ծախում են: Խողեղէն կերակուրներից գործ են ածում աւելի խմորեղէններ (ցորենի ալիւրից): Նրանց սովորական խողալի կերակուրը «ճաշն» է (սիմինդրի ալիւրը ջրով եփած և վրան խող լցած): Ճիշտ է՝ օրը երեք անգամ ուտում են, բաց կերածը խեղճ ու անսունդը բան է: Ամենից շատ ուտում են թանը. միշտ որ մածուն ուտեն, եթէ կթուան էլ ունենան, իւղ չի մնեն էլ ամենքին չի ձեռք տալ: Դրսից գնածը սովորաբար աղը, բրինձը, նաւթն ու կտորեղէնն է լինում: Բննձից շինած ուտելիքը (հասարակ ու կաթով փլաւը), ձուաձեղի, «նշատախ» (ցորենի ալիւրը կաթով եփած), հաւի ու խմորեղէննի հետ կազմում է նրանց ամենամոխ սեղանը, որ տարին հազիւ մի քանի անգամ է լինում, ամենահանդիսաւոր օրերին և կամ պատւաւոր հիւրերի համար:



ՍՊԱՌՈՒԿԻՓԻՒՆԵՐ

ԱՄՈՒԾՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԱՐՄԱՆԻՔ

Համշէնցի հայերը սովորաբար 16—18 տարեկան ժամանակից են սկսում ամուսնացնել իրանց տղաներին: Համարեա նոյն հասակից են սկսում մարդու տալ և իրանց աղջիկներին, այնպէս որ մօտաւորապէս տղի ու աղջկայ հասակը մէկ է լինում: Սովորաբար աւելի տղի համար են շտապում, քան աղջկան: Մէկ որ՝ աղջկան համար շտապելու կարիք չկայ. ով լինի՞ կը տանի. առանց այն էլ աղջիկ քիչ կայ, գոնէ մեզ մօտ, կովկասեան ափերում. միւս կողմից՝ աղջիկը մարդու գնալով, տան բանողի մէկը կըպակսի. իսկ այդ գիւղացու համար ոչ ցանկալու բան է, ոչ շտապելու: Եթէ չեմ սխալում, ամուսնութեան հարցի մէջ, գոնէ ծնողների համար, այդ բանելու տեսակէտը առաջին դերն է կատարում: Ահա դրա համար է, որ աղջկայ համար այնքան չեն շտապում: Սովորաբար՝ եթէ մօտ հասակից տղայ ու աղջիկ են ունենում, առաջ աշխատում են տունը հարս բերել և ապա աղջկանը մարդու տալ: Աղջիկը եթէ մի քիչ աւելի էլ մնայ, ոչինչ նրան երբ լինի, կըտանեն: Համարձակ կարելի է ասել, թէ ամբողջ կովկասեան ափերում տանը մնացած, պառաւած աղջիկներ բոլորովին չկան. նոյն իսկ այլիներ չեն պատահում, հազուագիւտ են նրանց մէջ, ուր մնան թէ ջակիլ աղջիկները: Տղի բանը ուրիշ է. գիւղացին մէկ-մէկ տարիներ է համրում, թէ երբ պէտք է ժամանակը գայ, որ իւր տղին պսակի, տան ու արտի գործերը մի քիչ թեթեացնի: 16 տարեկան հասակն արդէն ժամանակ են համարում. 18 տարին հօ լաւ ժամանակ է, իսկ այնուհետև քանի գնայ, այնքան ժամանակը կանցնի: 23—25 տարեկան երիտասարդը նրանց մօտ ժամանակն անցած է համարում և դժուար է հարս գտնում իւր համար: Այդ է պատճառը, որ

նրանց մօտ շատ անգամ կինն աւելի է մեծ լինում, քան տղամարդը: Վերջին տարիներս միայն համշէնցի դաղթականների մէջ նկատում է զրան հակառակ մի երկութիւն. հարուստ ու այլիացած համշէնցիները հետղհետէ աշխատում են վողի ուժով հակառակ հայրենաւանդ սովորութեան՝ ջահիլ աղջկերանց հետ պսակուիլ քաղքցիների պէս, որ նրանց համար բոլորովին խորթ բան է: Եթէ այս տեղերում չեն գտնում, կամ չեն տալիս, գնում են ուղղակի հայրենական ափերից վերցնում բերում իրանց հետ. ինչ խօսք որ աջ ու ձախ առատ-առատ կաշառքներ տալով դիւղի աղջեցիկ իշխաններին ու աղջկայ աղջականներին:

Աղջիկ առնելը համշէնցիների մօտ, շատ դժուարութիւնների հետ է կապուած. երկար բանակցութիւններ, տրան-նրան միջնորդներ գցել, բաւական վողեր պէտք է փչացնել, մինչեւ որ կաջողուի աղջկայ ծնողներից համաձայնութիւն ստանալը: Այդպէս դժուար է եղել աղջիկ առնելը նոյն խոկ իրանց հայրենական ափերում, ուր, իրանց ասելով, այսպէս չէ, աղջիկ շատ է եղել, բայց էլի առանց կաշառքի ու նուելների չէ անցել: Նեղ ու անճար մնացած տղի տէրը, տեսնելով որ ըլ պիտի կարողանայ իր ուզած աղջկան տանել, իր կողմը մարդիկ է գտնում և հարսների կամ երիտասարդների միջոցով փորձում է փախցնել աղջկան ուղղակի իր տունը, առաջուց հարսների բերանով նախապատրաստելով աղջկայ տրամադրութիւնը տղի օգտին և նրա կամքը առնելով: Աղջիկ փախցնելը նրանց մէջ շատ է պատահում. սովորական բան է նրանց համար: Հէնց որ աղջիկը տեսնում է, որ իր ուզածն չեն տալու իրան, կամ տեսնում է, որ ծնողները դեռ միտք չունին շուտով իրան մարդու տալու, անմիջապէս մօտենում, գտնում է իրան ուղղ տղերանց կողմնակից հարսներին ու աղջիկներին, և մէկ օր, սովորաբար եկեղեցի գնացած ժամանակ, նրանց հետ միասին փախչում է ուղղակի իրան ուզողների տունը, ուր նրան սիրով ընդունում են և մինչեւ ըրպակեն, ինչ էլ լինի, եթէ որով ութրով էլ գան, դուրս չեն հանիլ: Աղջիկը տղի տունը գնալուց յետոյ՝ ամեն բան վերջանում է. այնուհետև բանը մնում է

միայն տէրտէրին. սա էլ զալիս պատկռում է և այդպիսով խընդիրը վերջանում է: Երբեմն այդ փախցնելու պատճառով ահագին ընդհարումներ են լինում. իրաք վրայ են դնում, զէնքերը մէջտեղն են բերում և, եթէ կարողանում են, զոռով յետ են տանում փախչող աղջկան. իսկ եթէ ոչ, հօ աղջիկը դնում է ու մնում: Սովորաբար, վերջիվերջոյ, մի քանի ժամանակից յետոյ երկու կողմն էլ անցեալը մոռանում, հաշտուում են և իրաք խնամութիւն անում:

Փախցնելու մի պատճառն էլ մասամբ աղջկայ տիրոջ կողմից պահանջուած դրամական փարձատրութիւնն է: Ճիշտ է, այս սովորութեան ամենքը չեն հետեւում, բայց հետեւողներն էլ քիչ չեն: Աւելի այդ սովորութիւնը կայ Տրապիզոնին մօտիկ զիւղերից եկած համշէնցիների մէջ. սովորաբար՝ նրանք առանց փողի աղջիկ չեն տալիս: Այդ փողը տրուում է աղջկայ տիրոջը, իբրև ժամանակաւոր աւանդ, մինչև մի-երկու տարի բանեցնելու համար, այնքան որ տոկոս տրուելու չէ դրանից: Բայց երբեմն էլ փողը ստացողը պարտք չի համարում վերապարձնելու, մանաւանդ որ այդ բանի համար երեք զրաւոր պայմանաթուղթ չեն շնում: Իսկապէս՝ խնամախօսութեան ժամանակ այդ փողը տրուում է իբրև նուէր կամ աւելի ուղիղ՝ իբրև գին և ոչ իբրև փոխ: Բայց հարսը տանելուց մի-երկու տարի անցնելուց յետոյ, տղի տէրը կամաց-կամաց լիշեցնում է խնամուն իր տալիքը և եթէ վերջինը մերժում է, խնդիրը պահանջի ու զիւղական դատարանին է հասնում, որ սովորաբար վճիռ է կայացնում նրա օգտին:

Աղջիկ ընտրելիս ի նկատի են առնում արենակցութեան ու խնամութեան աստիճանները, իրանք առաջուց համրում, յետոյ մէկի միջոցով տէրտէրին հաշուել են տալիս՝ կրհասնի թէ ոչ: Սովորաբար այսքանը նկատել եմ, որ մեր այժմեան ընդունուած աստիճանների որոշումը նրանց միշտ շատ է երեսում: Իրանց ասելով, հայրենիքում այսքան խիստ չի եղել: Կայ որ՝ տէրտէրից մերժում ստանալուն պէս, ուղղակի թողնում է միտքը զրածը և աշխատում ուրիշը գտնելու: Բայց պատահում են և այնպիսիներ, որ մտքում դնում են միայն իրանց հաւանա-

ծին առնելու: Դրա համար նրանք սկզբում փողի դօռ տալով, աշխատում են մի կերպ գործը զուս բերել, առատ-առատ բաժին հանելով ամենքին, ի հարկէ ամենից առաջ պսակող տէրտէրին: Եթէ չի լինում, ուղղակի փախցնում են: Փախածին պէտք է անպատճառ պսակել. այնպէս թողնելը աւելի «մեղք է». գոնէ այդպէս է ասում նրանց բարոյական աշխարհայցողութիւնը և այդպէս էլ եղել է հայրենիքում: Թօնրի վրայ պսակի սովորութիւնը նրանց մէջ բոլորովին չկայ. իսկ ապօրինի կնապահութեան դէպքերն էլ համարեա թէ չեն լինում:

Աղջիկ ընտրելու և ուղելու հոգացողութիւնը ամենից աւելի տղի հօր վրայ է թողնուած, ի հարկէ՝ մայրն էլ է խառնըում, բայց աւ ելի կողմնակի միջնորդներին ասող, զրկողը հայրն է լինում: Վաշջուց տղի յօժարութիւնը չեն հարցնում, բայց երբ իմանում են, որ տղան յօժար չէ, թողնում են: Կարելի է ասել, թէ առաջ աւելի աղջկայ յօժարութիւնն են հարցնում, քան տղինը. ինչպէս առանց տղի, նոյնպէս էլ առանց աղջկայ յօժարութեան՝ ոչ մի պսակ չի լինում. անպայման հարցնում են: Ինչպէս տղի կողմից, նոյնպէս և աղջկայ կողմից սովորաբար բանակցողը հայրն է լինում. զլիսաւրապէս ամենից առաջ նրա համաձայնութիւնն են աշխատում ստանալ: Նա շուտով խօսք չի կտրում. զնում զալիս են, նոր-նոր միջնորդներ են զցում, մինչև որ վերջապէս խօսք է տալիս: Մինչեւ խօսք տաւը նա ժամանակ է գտնում խորհրդակցելու իր կնոջ ու մօտիկ ազգականների հետ տալու կամ չըտալու մասին:

Խօսքը կտրելուց յետոյ, որ են նշանակում (սովորաբար նոյն շաբթին). մի երեկոյ տղի հայրը կամ տէրը մի-երկու բարեկամի հետ պատրաստութիւնով գնում է հարսնացուի տունը, տանելով հետները մի ոչխար, զինի, մի քանի զաթայ և հետն էլ հինա՝ հարսնացուի ձեռքերին զնելու համար. այնոեղ զինով ու «թօնլիով» պաշտօնապէս կնքում են իրանց խնամութիւնը: Կերուխումին մր-երկու բարեկամ էլ աղջկայ կողմից է լինում: Տարած հինան տան կանաչք զնում են աղջկայ ձեռքերին, իսկ վերջը նրանց բերած ու պարպած «հարիզէն» դարքերին,

սում են ընծալի համար պատրաստած աղջկայ կարած ու դրած շապիքներն ու նաշխուն ծաղկաւոր «եաղլուխներ» և դրկում խնամոնց տուն:

Այս նախապատրաստութիւնից միքսնի օր յետոյ մկում են հարսանիքը: Պատկից ամիսներ ու տարիներ առանձին նշանգրէքի սովորութիւն համարեա բոլորովին չըկայ նրանց մէջ: Միայն նոյն առաւօտը, որ իրիկուն որ պիտի պսակը կատարեն, փեսացուի տէրը իր բարեկամներից մէկի ձեռքով զըրկում է եկեղեցի կամ տէրտէրի տունը հարսի համար պատրաստած «հալաւներն» և մատնին՝ օրհնել տալու համար: Հալավի հետ դրկում են մի կամ երկու խաշած հաւ, խմորեղէն, ձուաձեղ, մի կամ երկու «խաչ-քաթալ», որ սովորաբար տէրտէրի համար է լինում, և մի «օխա» (շտօֆ) դինի: Հալաւ օրհնենքին ներկայ են լինում կամ անձամբ երկու կողմի լսնամիները և կամ նրանց կողմից եկած բարեկամները: Օրհնելուց յետոյ նստում, ուտում են բերած ու տելիքը և առա օրհնուած հարս դրկում նորահարսի տունը: Նոյն իրիկունը կատարում են պասկը և հարսանիքն էլ վերջանում է:

Հարսանիքի հանդէսը պատկի առաջին իրիկուանից են մկում: Սկսելու առաջին նշանը հրացանի ձայնն է լինում: Այդ օրը վաղ առաւօտից տղի տէրը երեսասարդներ ու երեխաներ է դրկում գիւղի տները, և նրանցից ամեն մէկին բարակ մոմեր բաժնելով, հրաւիրում է նրանց հարսանիք: Երբեմն պատուաւորներին հրաւիրելիս, երեկոյեան դէմ «զաւու-գուռնի» ձայնով են դէմ գնում: Հրաւիրուածն էլ, եթէ ուզում է, մի քան է բաշխում նուազողներին, փող կամ «եաղլուխ» և կամ քան է բաշխում նուազողներին, փող կամ «եաղլուխ» ձայնով գնում նրանց հետ օղի հրամցնում և ապա «գուռնի» ձայնով գնում նրանց հետ փեսացուի տունը: Բոլոր եկողներին ընդունում է տանտէրը միմի բաժակ գինի առաջարկելով:

Հարսը բերելուց առաջ «թագուրին» գարդարում են նորահարսի զրկած ծաղկաւոր «եաղլուխներով», նախապէս լողացնելով ու հազցնելով ամենալաւ շորերը: Լողացնողն ու զարդարողը քաւորն է լինում: Երեսն էլ նա է ածիլում. ինչքան է բողը գաւորն է լինում: Երեսն էլ նա է ածիլում. ինչքան է լուսական գաւորն է լինում:

լուխներից» մի երկուսը կախում են նրա կողքերից, մէկն էլ ձեռքն են տալիս, որ բերանը ծածկած պահէ: Այդպէս զարդարուած «նքարի» առաջնորդութիւնով դալիս ներկայանում է հանդիսականներին, համբուրելով նրանցից ամեն մէկի ձեռքը և ապա իր քաւորի հետ անխօս կանդնում պատի տակ, ուղղակի գետնին, կամ մի տախտակի վրայ, սովորաբար արևելեան կողմը: Ոմանք էլ նստեցնում են, իսկ ունեւորները «թագուրի» կանգնած կողմի պատը զարդարում են կարպեսով:

«Թագուրը» բերած ժամանակը այս երգն են երգում.

«Թագուրի հայն *» ալ էրի իւ.

Խաչ էհօն ու,

Խաչ խաղաղութեան,

Խաչ սուրբ խաչի տէրունի:

Դեօլվաթն Աստղձմէ:

Սյուպէս երդում են ամեն մէկի համար, ում մօտ որ տանում, ներկայացնում են. նա էլ միքանի կողիկ ընծայ է տալիս: Կանանց համար էլ ջոկ երգում են. նրանք էլ մի-մի «եաղլուխ», կամ օրհնէնք ու աչք-լոյց են տալիս: Երգով գովելը հին սովորութիւն է. հիմա շատերը չեն երգում: Դրանից յետոյ նստում հաց են ուտում:

Բոլորը մի սեղանի շուշը չեն բոլորում, միքանի խմբերի են բաժանում. դրանցից ամեն մէկի մէշտեղը դնում են թիւրքական ձելի կլոր սեղանը, կերակուրները վրան դարսած: Կանանց համար էլ ջոկ են տալիս: Հարսանիքի սովորական կերակուրները սրանք են. «բղուր», փլաւ (իւղով կամ կաթով), «բարակ հաց» (բարակ բացուած, տապակած խմորեղէն), մոեղէն, մածուն, թան և վերջապէս միքանի հատ հաւ, մեղը ու կարագ՝ տէրտէրի ու պատուաւոր հիւրերի համար: Սովորաբար հարսնոց կերուխումներին ամենից ստելի պահանջներն անողներն ու «նազութուղ» ծախողները նորահարսի հետ եկած «հայնախաղերներն» են լինում. նրանց ամեն ուզած ուտելիքը պէտք է մօտ բերեն, թէ չէ կըծաղրեն, իսկ երեսն էլ վէճ ու կռիւ կըսարքեն տանեցոց հետ:

* Հայրն (կամ քեռին):

Կերուխումը վերջացնելուց յետով, եթէ եղանակը լաւ է լինում, դուրսը մի հարթ տեղ են ընտրում, «դուռնան» ածել են տալիս և «դիպնուշ» (գոտեմարտ) են սարքում:

Հարսանիքն սկսած իրիկունից «դաւուլ-դուռնան» անբաժան է լինում նրանց հանդէսից: Սովորաբար զուռնաչին մէկն է լինում: Կայ «զուռնի» մի տեսակն էլ, որ աւելի մեծ ձայն է հանում և աւելի սիրում են. նրան «բօրու» են ասում: Երբեմն «զուռնի» տեղ «քամանչա» ու «տիկ» են ածում. այդպէս են անում աւելի Տրապիզոնի մօտերքից եկողները: Հարսանիքի ժամանակ երգած բոլոր խաղերն ու նուադները և զօտեմարտը - ասւում ու կատարում են թիւրքերէն խօսքով ու եղանակով: Խմբովին երգ կամ խաղ բոլորովին չեն ասում: Ասած կտորներն էլ սովորաբար՝ Պարիից, Քեօռօղլուց կամ Ճահ-Խսմալիից են լինում: Գոտեմարտն էլ թիւրքական ձեռվ ու ձէսով են կատարում՝ մերկ, առանց շապքի, մինակ վարտիքը կամ «շալուարը» հազին: Առաջ միքանի բոպէ իրար բարեներ ու «թէմէնաներ» են տալիս, պտոյտներ ու փորձեր են անում իրարից բռնելու, մենչեւ որ երկար իրար քաշքշելուց յետով, մէկին աջողում է միւսին մէջքի վրայ զցել. դա է համարում յաղթութեան պայմանը: Գցելուց յետով՝ յաղթողն իսկոյն վեր է բարձրացնում իր ախոյեանին և համբուրում նրա հետ: Ապա երկուսը միասին, ձեռքները իրար ուժներին դրած, զալիս են ու մի ստով ծունկ չոքում «աղաների» ու «իշխանների» առաջ և «բաշիլշ» պահանջում: Ստացած փողը կիսում են իրար մէջ, իսկ յաղթողը բացի դրանից, ստանում է նաև մրցանակ զլուած «եաղլուխը»:

Գոտեմարտը վերջացնելուց յետով, հարսնեոր բազմութիւնը ձիերով ու հեեւտակի, նուադողներին առջեւը զցած, գնում են նորահարսի տունը, ամբողջ ճանապարհին սարերն ու ձորերը դլրդեցնելով հրացանի ու ռէվոլվէրի թնդիւններով: Մի քիչ ժամանակ էլ այստեղ են անցկացնում, ուտում, խմում, զուարձանում, գոտեմարտ են սարքում, մենչեւ որ նորահարսին զարդարում, դուրս են բերում, դնում ձիու վրայ: Այդ ժամանակ սկսութիւնը կամ տէրի միքանի նրա վրայ միքանի սև փող է շաղ

տալիս. մօտիկ եղաղները խլխելով հաւաքում են զետնից: Իսկ իրան վզից էլ հարսի տնից բերուած մի երկայն «եաղլուխ» են կապում: Թրանից յետով բազմութիւնն ուղղում է կամ զէպի եկեղեցին և կամ «թաքւորի» տունը, նայելով թէ որտեղ է լինելու պսակը: Սովորաբար պսակը տանն են կատարում. խակ երրեմն լաւ եղանակին, մանաւանդ երբ միւնոյն օրը ուրիշ պսակուողներ էլ են լինում, բոլորին միասին բերում, լըցնում են եկեղեցին. զոյզերը իրար մօտ կանգնեցնում և մէկ անգամից բոլորին պսակում: Տանն են պսակում, թէ եկեղեցում — ոչ մի գէպքում «թաքւորին» նորահարսի տունը չեն տանում. նրան մէնակ թողնում են տանը՝ իր քաւորի հետ, մինչեւ հարսոր կըբերէն: Եկեղեցում պսակուած ժամանակն էլ «թաքւորի» մէնմենակ իր քաւորի հետ է գնում եկեղեցի. այնտեղ սպասուժ մինչի նորահարսի գալը:

Վերջապէս նորահարսն առնում, զալիս են եկեղեցի: Առջեւից յետեւից ձիու կամ ստով նրան ուղեկցում են իր քոյրերն ու եղբայրները կամ նրանց վոխարէն, մօտիկ բարեկամ հարաներ ու երիտասարդներ — «հայտնքոյրներ» ու «հայտնախալապարներ». Իսկ նրա ձիու կողքերից ու արջեւից մարդիկ են զնում: Հարսին ու նրա ձիու սանձը բւնելու, որ չըլինի թէ վայր ընկնի, որավիշետև դլիխն երկայն քոլ է ունենում դնած («բիւրիւղ»): Եկեղեցում քաւորը ձեռքին ոչինչ չի բռնում. այնքան որ մօտը կանգնում է և կատարում է քահանայի տասձները: Թուրը բռնելու և կամ դլիխն թագ դնելու սովորութիւնը բոլորին չըկայ. միայն արբէշումէ կարմիր ոլորած թէկիլից նարօտ են կտպում երկուսի դլիխներին, որ կամ անմիշապէս պսակից յետով և կամ յաջորդ օրը, չորեքշաբթի կամ ուրբաթ չ'եկած վերացնում են: Խորհուրդը կատարելուց յետով, առաջաւան հանդէսով, նուադով ու հրացանների ձայնով շատապում են զէպի «թաքւորի» տունը: Հասնում են տուն. զեռ հարսին ձիու վայր չառած, զրոխ կանչում են. «Ի՞ն բաշիլշ» տաք պիտի հայուն»: Բերում են մի պղնձէ աման. Հարսոր սորը տապանդակից միքիչ վեր վերցնում ու դնում են ամանը նրա սորի տակին: Իսկուն հարսնեղբարայրները մէջքի դանա

աղջկայ հօր կամ տիրոջն ու նրա բարեկամներին տուած կաշուքներն են լինում, որ երբեմն երեք հարիւր բուրլու է հասնում: Այսուհետև աշազին վող է նստում նորահարսի համար պատկի հաղուստ կարել տալը: Ոտնամանից, գուլպալից, զլիի ֆեսից, շապքից ու վարտիքից սկսած մինչև վրայի հագնելիքն ու գարդերը - բոլորը տղի տիրոջ վրայ է, նա պէտք է առնէ կարել տայ: Բոլորը, բայց շապքից, արքէշում, ատլաս, զումաշ ու չուխա պէտք է լինի: Ամենաքիչը 50—60 բուրլի միայն դրա վրայ է դնում, եթէ զարդերն ել չըլինին: Սրանք մի կողմից. հարսանիքին նորահարսի տանը պատրաստած բոլոր ուտելիք-խմելիքն վեսի կողմից է զրկւում. մինչև չպըրկին, չեն պատրաստիլ: Խօսքը կտրած ժամանակն էլ «թօլիլն» ու զինին և քահանային ու աթուահասը՝ նա է տալիս: Եթէ նոյն իսկ ընդունենք, որ աղջիկ ուղելու ժամանակ՝ առանց զժուարութիւնների գործը շուտով զալիս, ուստի ուղիղ մաս չըլիութեանութիւն է անում, իսուքի չի խառնում, իր համար սուս ու անխօս կանդնում է պատի տակին: Ոտները առաջին անգամ լուացած ժամանակը, անեցիք փող են բաշխում հարսին:

Հարսանիքից մի շաբաթ անցած, «մորէհոր» են զալիս. այն է՝ նորահարսի ծնողները զալիս են փեսի տունը, հետները բերելով տանը մնացած հարսի մանրունք բաները, նրա հին զգեստները, «ռօկը», դանակը, մկրատը և այլն: Այդ իրիկուն էլ փեսի տանը խնջուք-ուրախութիւն են սարքում: Նորահարս բոլոր ելսղների ստները լուանում է և նորանցից միքանի կոպէկ ընծայ ստանում: Գրանից մի-երկու շաբաթ յատու էլ սկիսրայը կամ տան մեջը՝ հարսին տանում է մարանց հիւր: Այն իրիկուն էլ այնտեղ են ուրախութիւն անում և միւս օրը նորից դառնում իրանց տեղը:

Սովորաբար հարսանիքին աղջկայ կողմից շատ քիչ ծախս է լինում. համարեա ոչինչ: Նրանք աղջկայ համար ոչ միայն օժիտ ու փող չեն տալիս, այլ գեռ իրանք են ստանում փեսի կողմից: Դախսերի ամենամեծ մասը պատկին աջողցնելու համար

| | |
|-----------------------------|-----------|
| 1 ջուալ ցորենի սպիտակ ալիւր | 8 բուրլի. |
| 1 ջուալ բրինձ | 10 » |
| 1 երինջ, աչառ կամ կով | 20 » |
| 10 օխա իւղ | 10 » |
| Գինի և օղի | 25 » |

| | |
|-------------------------|------|
| Խօսքը կտրած ժամանակ | |
| «Թօլիլի և զինու ծախս | 10 » |
| 1 ձեռք շոր իր համար. | 15 » |
| Նորահարսին հալաւ | 60 » |
| Քահանային և ալճ ոռ ահաս | 15 » |

Գումարն է՝ 173 բուրլի:

Սմբաթիւնը, ինչպէս և ամեն տեղ հայ դիւզերում, համ-
շէնցի հայերի մօտ էլ նախատինք է համարում և երբեմն
դժգոհութիւնների ու ապօրէն կնապահութեան պատճառ լի-
նում: Երեխան՝ բացի այն որ տան «Ճաղիկն» և ուրախութիւն
է, տան յուտն ու ապագան նրա մէջն են տեսնում: Անորդի
գիւղացու բանը շատ դժուար է, մենակ որ մէկին հասնի: Տուն
է, արտ է, «ածուք» է, մալ է, ջրաղաց հատիկ պիտի տանել,
անտառից փայտ պիտի բերել, քաղաք պիտի գնալ ու էլ ինչ
գիտեմ՝ քանի-քանի տեղ պիտի վազէ ու հանի գիւղացին,
թէ չէ բանը կը մնայ, ինքն էլ հետը. ինչքան էլ շատոր
լինի, տան գործը չի պակսիլ: Այդ է պատճառը, որ գիւղացին
սաստիկ մեծ ցանկութիւն ունի որդի ունենալու, որ մէկը իրան
ժառանգ լինի, թև ու թիկունք տայ, նեղ օրին մենակ ու
անօդնական ըլ մնայ: Ճատ որդիք ունենալը գիւղացու պար-
ծանքն է կազմում, տան հարստութիւնը, նրա բարգաւառումը,
և հակառակը՝ չունեցողը կորած ու անբախտ է համարում:

Սովորաբար ամլութիւնից ազատուելու համար, որիշ տեղերի պէս, սրբերի և ուխտագնացութեան չեն դիմում: Առաջ տնային միջոցներն ու խորհուրդներն են գործ դնում, աշխատելով դեղերով մի ճար անել: Եթք դրանք չեն օգնում, դիմում

Են բժիշկներին, երբեմն հեռու տեղեր գնալով և մեծամեծ ծախսեր անելով: Երբ բժիշկներից էլ յոյալ կտրում են և ճար չեն գտնում, մօլլաներին ու իրանց «տիրացուներին» «զիր» ու «նուսկա» են անել տալիս, և կամ էլի իրանց լսած ու իմացած տնապին կախարդական միջոցներն են գործ գնում: Աւելի այս են անում. մի մօր առջնեկին 40 ջրաղացի տակից ջուր են ժողուել տալիս և նրա հայրենական մնացած օջախի շղթալի բոլոր ծակերից անցկացնել տալիս: Ապա ամուլ կնոջը նստեցնում են գետնին, երթիկի տակ, կշտին կանգնեցնում մի ուրիշ կին, որ մաղ բռնէ նրա գլխին: Առջնիկը վեր է ելնում կտուրը և այստեղից, երթիկի միջով ջուր լցնում մաղի մէջ, իսկ նրա միջից էլ ջուրը թափւում է ամուլ կնոջ մարմնի վրայ: Այդպէս կրկնում են Յ անգամ: Վերջապէս, երբ ոչ մի դեղ օգուտ չի անում, ճարը կտրած՝ համբերում են, համարելով այդ իրանց ճակատի գիրը և մեղքերի պատիժը:

Համշէնցի հայ կնոջ լդութեան շրջանը անցնում է շատ պարզ. մինչև վերջին ըովիէն նա ոտի վրայ է: Վերակրի, աշխատանքի ու կենցաղավարութեան մէջ առանձին ոչ մի փոփոխութիւն չի լինում. ոչ ուրիշ յարմարեցրած թովթովիկ շորեր են հագնում, ոչ առանձին պահանջներ ու նազեր բանեցնում, ոչ էլ աշխատանքից խուսափում: Ճատերը մինչև ծնընդեան ըովիէն անխօս ու անտրոտունց կատարում են իրանց սովորական ծանր աշխատանքները, մինչև որ վրայ է համնում չափնարձ երկունքի ըսպիէն:

Երկաւնքի ժամանակ լղի կնոջը առանձնացնում են և տան ու հարեւան կանայք տատմէրի հետ միասին շրջապատրւմ են նրան: Երբ հասնում է ծնելու ժամը, ծննդկանին չոքեցնում են գետնին, մէկը յսուելի կողմից իր կրծքին է յենում նրան, իսկ տատմէրը առջեւի կողմից սպասում երեխայի դալուն: Եթէ ծնունքը գժաւար է լինում, կամ ընկերքը ուշ է դալիս, յսուել նստողը աւելի երկու ծայրերից բռնելով, սխմում է նրանով ծննդկանի արգանգը: Ֆանր ըովէներին, երբ ծննդկանը ուշադիմաց է լինում, հրացան են արձակում, կամ տիրացուի լիտե-

պազում՝ «կաշտոմ» են անել տալիս, սատանաներին ու չարերին հալածելու համար:

Նորածնին ձեռքի վրայ են վերցնում, լողացնում, բալուլում և պառկեցնում ծննդկանի կողքին: Նորածնի վրայ աղցանելու սովորութիւնը բոլորովին չըկայ նրանց մօտ: Ծննդկանին լուանալուց ու տեղաւորելուց յետոյ, տատմէրի և օգնող կանանց համար սեղան են դնում, հաց են տալիս:

Ինչպէս շատ տեղ, նոյնպէս և սրանց մօտ, աղջիկ նորածինը սովորական դժողովութեան ու տրամութեան պատճառ է լինում: «Է՛ս, քած մըն է», ասում են նրանք այսպիսի դէպքերում, ուզենալով արտայատել իրանց դժողովութիւնն ու արհամարանքը այնքան երկար, լարուած հետաքրքրութիւնով պամակուց յետոյ:

Խոկապէս տնտեսական կէտից նայելով հարցի վրայ, ոչ մի նշանակութիւն պիտի չունենար նրանց համար սեռը, քանի որ թէ աղջիկ և թէ տղան մինչև տնից բաժնուելը, հաւասարապէս օգնում են տան բոլոր դորձերին: Ինչպէս երեսում է, աւանդական նախապաշարմունքն ու սովորական, տարածուած, անմիտ կարծիքն է կանանց սեռի մասին—նրանց այդ եղբակացութեան ըերել:

Լուրը առնելուն պէս, աղգականներն ու հարեւանները շտապում են ծննդկանին տեսութեան, բերելով իրանց հետ ձուածեղ, կաթնապուր և ալյու:

Ուրիշ տեղերի պէս՝ սրանք ծննդկանին անսուրը չեն համարում և ոչ էլ նրա ամաններն են զատում: Տունը վարատելու համար քահանապէն հրատիրելու սովորութիւնն չունին:

Կնունքը կատարում է ծննդից մի քանի օր յետոյ, սովորաբար նոյն շաբթին. ուշացնել չեն սիրում: Կնքելուց առաջ կնքահօրը իմաց են տալիս, որ գայ քահանայիլ հետ խօսի ու երեխին կնքէ: Կնքում են կամ եկեղեցում, կամ իրանց տանը և կամ քահանայի տանն են դնում: Եկեղեցում երեխմն մի քանի հատին մէկ անգամից է կնքում քահանան: Սովորաբար երեխին մօտի հարեւան կանայքն են եկեղեցի տանում, թէ որ տատմէրը հեռու է լինում բնակուելիս: Փողով տատմէրութիւն

նրանց մօտ բոլորովին չկայ. նա իր պաշտօնը կատարում է վարձքի համար, որովհետև «խախր» է: Կնունքի ժամանակ միայն մի քանի կօպէկ (10—20) բաշխում. է նրան կնքահայրը, եթէ այն էլ մտքին մնայ ու չը մոռանալ, պարտաւորական չէ: Առհասարակ անունի ընտրութիւնը քահանային են թողնում, թէ որ իրանք որոշած չեն լինում:

Աղջկերանց տեղական անուններից, բացի սովորականներից, ամենից աւելի տարածուած են նրանց մօտ. Լուսիկ, Պայծառ, Զալթար, Օսկէկ, Մանիկ, Նազիկ, Համաս, Միմզար (Նոյեմզար), Զօնակ (Զանազան), Սաչին (Սաթինիկ), Սաբեր, իսկ տղերանց տեղական անուններից՝ Խաչիկ, Սըթին, Գալուստ, Ալէդ, Օհօն, Զօրիկ, Զատիկ, Հօմբիկ (Համբարձում) ևայն:

Երեխին եկեղեցի կնքելու տարած ժամանակ սովորաբար հետն էլ ուտելիքն են զրկում. մածուն, փլաւ, հասարակ կամ կաթով, խմորեղէն ձուածեղ, երբեմն էլ եփած հաւ: Կնունքի պատճառով տանը յատուկ հրաւերք սարքելը շատ քիչ կը պատահի գիւղում. այդ էլ հարուստներն են անում:

Կնքահայրը ոչ երեխին, ոչ էլ ծննդկանին ոչինչ չի տալիս: Երեխին խաչ տանելու սովորութիւն էլ չունին: Կնքահայրը մենակ քահանակի փողն է տալիս, սովորաբար մի րուբի. մէկ էլ մի քանի կոպէկ դայեակին. ուրիշ ոչինչ: Իրան էլ կնքելոց յիտոյ իրանց ձեռագործ «եաղլուխներից» մի հատընծայ են տալիս. իսկ այնուհետև տարուայ ընթացքում սանամայրը նրա համար նոյն կտորից շապիք է կարում, ինքն էլ իր սանիկին շոր կամ մի ուրիշ բան է նուիրում: Ինչպէս երկում է, կնքահայր լինելը ցանկալի ու նախանձելի բան է համարում. ամենքն են ուզում սանիկ ունենալ: Դա չամշէնցիների կարծիքով մեծ վարձք է: Մարդ անպատճառ գոնէ մի սանիկ ունենայ կնքած: Նրանց կարծիքով՝ ով որ իր կեանքում բոլորովին երեխայ չի կնքել, միւս կեանքում նրա զրկին մի շուն կը դնեն:

Ծննդկանը երկար չի պառկում. հազիւ 3—4 օր, եթէ միայն հիւանդ չէ: Դեռ մի շաբաթ չանցած և բոլորովին ըլ

կաղզուրուած, սկսում է իր առաջուան չարքաշ ու ծանր աշխատանքը:

Երեխային խնամք տանելն ու մեծացնելը ամբողջապէս մօր վրայ է թողնուած: Նա է ծիծ տալիս, օրօրում, պառկեցնում, ուտեցնում, հազցնում մինչև մեծանալը: Սովորաբար մինչեւ 2—3 տարի ծիծ են տալիս, եթէ միայն տարուայ զիխին ուրիշը նրա տեղը չը բունէ: Կաթ չունեցած ժամանակ, կովի կաթ են տալիս. ուղղակի այնպէս, առանց ջրի ու շաքարի փառնուրդի: Ֆճից կտրելու ժամանակ ուրիշի ձեռքն են տալիս, ման բերում, մօրից հեռու պահում, հարեանների տները դրկում, որ մօրը մտեհան անէ:

Ում որ երեխայ չի մնում, պէտք է որ երեխային տանէ անցկացնէ մի այնպիսի կնոջ շաղքից, որի որդիներից ոչ մինը չէ մեռել. վերջը նրան մի քիչ փող տալով, պէտք է երեխին լիս գնի. զրանից լիսոյ երեխան շուտ չի մեռնիլ:

Մինչեւ ծիծից կտրելը և նրանից էլ դեռ շատ յետոյ, երեխին պառկեցնում են օրօրոցում, առաջին օրերից սովորեցնելով երեխին դիմանալ ու համբերել ամուր ու ձիգ կապանքներին: Որորոցից կախում են «լիլուններ» երեխին չար աչքից աղատ պահելու համար: Կոյնպէս այդ նպատակով ապակէ «լիլուն» են կապում երեխանց ձեռքերին ու ոտներին. սովորաբար տղաներին՝ աջ ոտին, իսկ աղջկերանց՝ աջ ձեռքին: Թէկ այս էլ են ասում, որ մանչ տղի ձեռքին եթէ «լիլուն» կապէն, ձիուրախտ չի ունենալ:

Որպէս զի երեխան շուտով ոտքի կանգնի, երկու քառանկիւնի տախտակ են վերցնում. մէկի մէջտեղից մեծ ծակ են շինում և ամբացնում տակի տախտակի վրայ 3—4 ոտներով, երեխայի հասակի համեմատ, այնպէս որ այնքան բարձր չըլինի, որ երեխան միջից ընկնի, ոչ էլ այնքան ցած, որ վրայից դուրս թռչի: Տակի տախտակը, ի հարկէ, պէտք է հաստ ու ծանր լինի, որ չըլինի թէ երեխի հետ միասին շրջի: Իրան ասում են «կօյնիչ» (կանգնիչ):

Նոր ոտին կանգնող երեխին շուտ ման գալ սովորեցնելու համար այսպէս են անում. երեխին կանգնեցնում են տան շէմքի-

վրայ, երկու ուրը իրար կապում «խաչքը-մէջքը». մէկը բռնում է երեխին որ չընկնի, իսկ նոյն կամ ուրիշի տնից անդրանիկէ տղան կարում է մէջտեղից: Կտրած ժամանակ բռնողը հարցնում է. «ինչ կտրեա կու». — կտրողն ասում է. «ագուն քեօստաղը (քրիստոնութիւն) կտրիմ կու»: Այսպէս կրկնում են Յ անդամ տան բոլոր շէմքերի վրայ, և ասա երեխի ձեռքից բռնած՝ ման են բերում «Քողէ, գօղէ» ասելով: Ելի տանում են երեխին հետները աղբիւրը կամ զետը, կանգնեցնում «աւղօնի» չորս անկիւնում, առաջուան պէս տոները կապում և կապը մէջտեղից կորում: Արդ կապին «օտնառ» են ասում:

Ման չեկող փոքր երեխին շասլիքը ոտներից են հաղցնում և ոչ զլիից, որ շուտ մեծանայ և բոյ քաշէ:

Գուտ մանդալու համար մի զորտ են քռնում, զջում ամանը և երեխին նրա վրայ լողացնում. յետոյ ջուրն ու զորաք դուրս թափում և Յ անդամ այս խօսքերն ասում. «Ֆեջուն (գորտ). տղուն զայլը առ, գնա կոտուէ» (կրթիք):

Փոքր երեխին քուն զրած ժամանակ, եթէ մալքը մօտը մնայլու չէ, աւելի հետը ցից են անում, իբրև երեխի ընկեր, որ չըլինի թէ քնի մէջ վախենայ: Նոյնպէս՝ վախից ազատ պահելու համար երեխի օրօրոցի յետելը «ջազուի թաթէ» ու «բուքձ» (վրձին) են կախում, զլիսի տակ էլ կիպրիանոս դնում:

Գեռ չը խօսող փոքր երեխին եթէ մէս ուտեցնեն, լեզուն ուշ կը հանէ, իսկ դալ, հօ բոլորովին չը պէտք է տալ, թէ չէ և ուշ կը խօսի, և էլ թոթով կը լինի:

Փոքր երեխի եղունդները չեն կտրում, ասում են, թէ հրեշտակն է կտրում:

Մալք որ երեկոյեան դուռը զայ, բերանին կը նայեն. թէ որ խոտ ունենայ, կառնեն շատ լացող մանկան օրօրոցի զլիի տակը կը դնեն, որ լացը պակսեցնէ:

Ասում են էլի՛ երեխի վրայ սերմ զցելը լաւ չէ. երեխան չի մեծանալ:

Երբ նորածին կամ փոքր երեխան առանց պատճառի յետէ դնում, հետզհէտէ նիկարում, նուազում է, ասում են, թէ «կեօխ» ըղած է: «Կեօխը» միայն փոքրերին չի բռնում, այլ

և մեծերին, նոյն իսկ կովերին, բայց աւելի պատճառում է նորածիններին ու փոքրերին, նոյնպէս և ծնած կովերին, և այդ լինում է շատ պատճառներից:

Այսպէս եթէ երկու մարդ կամ կին «քաւսունաց» երեխայ ունենան, մէկը միամի տունը դնացած ժամանակը առանց իմաց տալու ուղղակի ներս չի մտնիլ, թէ չէ դնացած տան երեխան «կեօխ» կը բռնուի: Դրա համար զնայողը դրսից ձայն է տալիս, թէ վեր կացէք, զալիս եմ, երեխին զրկեցէք. այդ տեղուց յետոյ միայն կարող է ներս մտնել: Մայրը երեխին գրկած կանգնած սպասում է, մտնողի զերիկն է դնում երեխին և էլի յետ առնում: Մտնողը զետնին պէտք է նստել: Նրա նստելուց յետոյ միայն երեխի մայրը կարող է նստել: Եթէ արդպէս չանեն, երեխան «կեօխ» կը լինի:

Թէ որ «կեօխի» պատճառը միւս երեխի հարն է եղել, զնում են նրա պառկած կողմի պատից մի վայրի կտոր հանում, օրինակ մի «Ճեփրկալ» (ծալը Ճեփելու վալալ), կամ նըրա պառկած կողմի կտուրից ծածքի մի տախտակ գողանում, բերում են տուն, իրանց երեխին վրան լողացնում: Յետոյ այդ բերում են տուն, իրանց երեխին վրան լողացնում: Միայն կտորը կամ տախտակը զցում են տնից հեռու, մի անյախտ տեղ, այնպէս որ չը գտնեն ու իր առաջուան տեղը ըլդնեն, թէ չէ «կեօխը» նրանց երեխին կանցնի:

Թէ որ «կեօխը» ուրիշ տան «քաւսունաց» կնոշից է եղել; դրա համար «կեօխ» բռնուածի մալքը լուր է զրկում նըրան, և երկուազ միասին երեխանցով, հետները մի-մի կին առած զնում են առուակի ավը, իրար դէմուդէմ կանգնում և ուղեկից կանանց միջոցով փոխագարձաբար երեխաններին իրար զիրկը դնում, ծիծ ուտեցնում և էլի նրանց միջոցով իրանց երեխաններին յետ ընդունում ու տուն դնում, մէկը իր ուղեկից հետ մի կողմը, միւսը ուրիշ կողմը, առանց յետ նայելու:

«Կեօխը» կարող է լինել և մսից. այսպէս եթէ մի տեղ միս մորթեն ու բերեն այն տունը, ուր փոքր երեխայ կայ 40 օրեկան չեղած, բերողը պէտք է դրսից կանչի ու իմաց տալ, թէ չէ երեխան «կեօխ» կը լինի: Դրանից լաւացնելու համար

պէտք է անկշիռ միս առնել և «կեօխ» եղած երեխին նրա վրայ լողացնել:

Երեխին «կեօխ» ըռնած ժամանակ արակէս էլ են անում. վերցնում են նրա հօր «շալվարը» տան մէջտեղն են դցում, տունը վրան աւելում, ժողված «կախը» «դէգ», աղբ) տանում լցնում են մի տարեկան «պատրուսի» (պատուաստած ծառ) արմատի մօտ և երեխին Յ առաւօտ տանում նրա մօտ, ոտով կոչվեցնում:

Պալն էլ կարող է «կեօխ» ըռնուել: Թէ որ մէկն ունենայ նործին կով և մի «քառսունաց» ծննդկան դաւ նրա տունը, կովը «կեօխ» ըլ լինելու համար՝ եկող կինը հացի մի կտոր «քերիջը» (կեղկը) բերանն է առնում, ծամում. և ապա դրնում նործին կովի բերանը, նրան ուտեցնում:

Նոյնպէս նործին կով (կամ զոմէշ) ունեցած ժամանակը, միս չեն բերիլ տուն, մինչեւ քառսունքը լցուի, թէ չէ կովը «կեօխ» կը բռնուի:

Գիւղը նոր «քօչ» (զաղթական ընտանիք) եկած ժամանակ կովը դոմից դուրս են հանում և յետոյ ներս բերում, որ «կեօխ» ըլ լինի:

Նործին կովի տէրը մինչեւ 40 օր իր տնից կրակ ըլ պէտի տայ տրիշի. լաւ չէ. կովը կաթը կը քչացնէ կամ կը հիւանդանայ: Եթէ անպատճառ պլտի տայ, զոնէ պէտք է ձեռքով չը տայ. կրակը պէտք է դնի շէմքի մօտ, եկողը պէտք է ինքը վերցնի տանի:

Գտնում կովը ծնած ժամանակ վրան ալիւք են ցանում, խունկ ծխում ու մի քիչ ժամանակ դուրս հանում, յետոյ նորից ներս տանում:

Ասում են, թէ ծակ «չաչլ» (սկմինդքի հասկի պատիճն) մէջ ըլ պէտք է փէկ, թէ չէ մալլ չի լցանալ:

Էլի ասում են, եթէ մանածի ^{*)} խուսը կովին տան, չի լցանալ:

^{*)} Մանածը („մօնածը“) ջրում խաշում են. ջրին մի քիչ ալիւք լցնում, որ թելն ամբանայ. թելը ջրից հանելուց յետոյ, ջուրը պէտք է թափել. դըրան են ասում „մօնածի խուս“:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՆՔԸ

Ընտանիքի մէջ ամենից յարգուածը հայրն է: Քանի որ չափահաս որդիք չունի, նրա ձեռքին է ընտանիքի ղեկը և նրա անմիջական իրաւասութեան տակ է գտնւում ընտանիքի ներքին ու արտաքին կառավարութիւնը: Ֆերանալով հետզհետէ այդ իշխանութիւնը քանի դնում թուլանում է և կամաց կամաց որդուն անցնում: Նոյն կերպ են վարւում և մօր հետ քանի որ երեխաները փոքր են, նրան ամենքը լսում են, իսկ որդոց չափահաս դատնալուց յետոյ, նրա յարգանքն էլ հետզհետէ պակասում է. նրա խօսքին մտիկ են տալիս միայն հարսներն ու տան փոքրերը:

Ցան մեծի առաջին ու դիխաւոր բանը աշխատանքը կարգադրելն է տնեցոյ մէջ. նա է ամեն օր նշանակում միւս օրուայ զործը, որոշելով ամեն մէկի աշխատանքն ու չափը, իւրաքանչիւրի որդի, ու ինելքի համեմատ:

Գիւղի երկրադրժական աշխատանքը կապում է ընտանիքի անգամներին միմեանց հետ: Մեծ, փոքր, կին, տղամարդ՝ ամենքը աշխատում են. աշխատում են շատ անզամ իրար հետ և միշտ էլ իրար համար. մէկը ամենքի համար, ամենքը մէկի համար: Պէտք է աշխատել, ուրիշ ճար չկայ. այդպէս է կարգը. արդպէս է հրամանել տան մեծը. եթէ նրա խելքը չը կտրէր, չէր ասիլ. որ ասել է՝ ասել է թէ պէտք է կատարել: Փոքր երեխան էլ զիտէ, հասկացել է, որ մինչեւ ըլ բանեն, չը ցանեն, հաց չի լինիլ, քաղցած կը մնան. ոռնկի ու փողի երես նրանք նրանք կը տեսնեն: Եթէ փող էլ գալիս է բերքի ծախուելոց, զա էլ միմիայն հօր ձեռքն է մնում. քանի որ տան մեծը նա է, ուրիշ ոչ ոք չի կարող խառնուել նրա հաշիւների մէջ: Կտոր է, սրարոք է, տան պակասներն են, — բոլորը նա է հաշում ու մտածում: Փիչ անգամ է կնոջը զիմում ու հարցնում, այն էլ աւելի կտոր առած ժամանակ, միշտ էլ աշխատելով չափաւորել նրա պահանջները և մի քանի բան պակսեցնել նրա առածներից: Այդ է պատճառը, որ կինն աշխատում է իր համար ջոկ փող ձեռք զցել

կամ պարապ ժամանակին ուրիշի մօտ օրավարձ բանելով, կամ տան աւելցած իւղից, հաւից ու ձուից ծախելով: Դախածի փողը անպատճառ կնոջն է պատկանում: Սովորաբար իւղ ծախած ժամանակ, կանաչք պահանջում են, որ գիսը իրանց ձեռքը տրուի և ոչ իրանց մարդոց: Եթէ մարդն իմանար կամ չէր թողնել որ տան իւղը ծախուէր, քանի որ իրանց էլ հազիւ է հերիք գալիս և կամ կը պահանջէր, որ փողը իրան տրուէր: Գրա համար էլ շատ անդամ կանաչք իրանց տղամարդկանցից ծածուկ են ծախում իւղը:

Աշխատանքի անընդունակ անդամին ոչ ոք չի սիրում նրան ծաղրում, ատում են: Իրանց սիրելի անձի երկար ժամանակով հիւանդանալը նոյն իսկ ատելի է թւում նրանց, ուր մնայ առողջ, բայց ծոյլ ու անընդունակ մարդու զոյտթիւնը: Եւ պէտք է ատել, որ խստապէս ծոյլեր, աշխատանքի անընդունակ մարդիկ շատ հագւագիւտ են համշենցիների մէջ: Նրանք բոլորն էլ չափից դուրս բանուկ, աշխատանէր մարդիկ են: Տուէք նրանց մի կտոր հող, ուր էլ լինին, նրանք իրանց ճարպիկ ձեռքերի ու տնիքուն ոյժի շնորհով ամեն տեղ դլիները կըպահեն, քաղցած չեն մնալ:

Հօր մահից յետու ընտանիքի կառավարութեան դեկը անցնում է որդիներից նրան, որ աւելի ընդունակ է ու խելօք, որ աւելի դիրք ունի հասարակութեան մէջ: Միմիայն աշխատանքը բաւական չէ ընտանիքը կառավարելու համար. խելքն աւելի է հարկաւոր: Նրան է յանձնում աշխատանքի ընդհանուր հսկողութիւնը և ընտանիքի շահերի պաշտպանութիւնը դրսի շրջանում: Եթէ խելք չունենայ, լեզու չունենայ, տանն էլ, զարսն էլ նրան մտիլ անող չի լինիլ: Այդ է պատճառը, որ լեզուանի, խելքով տղան նոյն իսկ կենդանութեան ժամանակ շատ անդամ տան ներկայացնեցիչն է համարում հասարակութեան մէջ: Տանը թէ և նա ամենքից քիչ է բանում և ամենքից աւելի նոր ու մաքուր է հաղնում, որովհետև շինամէջ է դուրս գալիս, բայց էլլ տանը նրան պատռում են, ամենքից աւելի նրա խոսքին են լսում: Եւ ադր նրա համար, որ ամենքն էլ զիստեն, որ միայն աշխատանքը ոչինչ է. ձեռ-

քի հայը կը խլեն դիւղի զօրեղներն ու ցեցերը, եթէ քամակին օգնող չը լինի, եթէ իրանց շահերին պաշտպան չունենա՞ւ:

Եզրակացութիւն ու խնամութիւն:

Տատին ատում են — — — մօմ.

Մօրը « — — մէ՛ր կամ մէր. իսկ կանչելիս՝ կմա.

Հօրը « — — մէ՛ր կամ հէր. իսկ կանչելիս՝ կբա.

Հօրեղբօրը « — — հօրիվէ՛ր կամ հօղբէր.

Հօրեղբօր կնոջը « — — մօմէ՛ր կամ հօղովկին.

Մօրեղբօրը « — — քեռի:

Մօրեղբօր կնոջը « — — քեռեկին.

Մօրաքրոջը « — — մօրքուր.

Հօրաքրոջը « — — հօրքուր.

Եղբօրը « — — ալսպէ՛յ կամ ուղղակի անունն են տալիս.

Քրոջը « — — քուրիկ կամ ուղղակի անունն են տալիս.

Կնքահօրը « — — կնքեար.

Կնքամօրը « — — կնքակին.

Կնքահօր մօրը « — — կնքամար.

Կնքահօր քրոջը « — — կնքաք.ուր:

Խնամոնց համար, աներոց ու դրբանչի մասին խօսելիս փեսան վիշում է նրանց «միր պապը» կամ «միր մօմ» ասելով. կանչելիս էլ սովորաբար նրանց պապ կամ «մօմ» է ասում. աներորդուն ուղղակի անունն է տախիս, իսկ նրա մասին խօսելիս՝ թուրքերէն բառով է վիշում: Խօսելիս էլ սովորի այդ չորսի համար ուղղակի թուրքերուն վիշում: Խօսելիս էլ սովորի այդ չորսի համար ուղղակի թուրքերէն բառուն են գործածում. դրանց հայերէն անուններ չը կան. (աներուն բառուն, զոքանչօնալուղ, աներորդի-կախնչի. քենակալ-բաջնաղ): Հայերէն բառուն պահել են՝ սկեսուր, սկեսուրէ՛ր, տէ՛քը, ներ, տալ-քենի-անուններուն:

Կինը իր մարդու մասին խօսելիս՝ սկեսուր առաջ նրա համար «տղամար» է ասում, տալի մօմ՝ «ախազէ՛ց», տէ՛գրկնոջ մօմ՝ «տէ-քողամար»՝ իր ծնողների առաջ՝ «ընիշուէ՛ց», օտարների մօմ՝ «ինքը», քրոջ՝ իր ծնողների առաջ՝ «ընիշուէ՛ց», օտարների մօմ՝ միր կտրիմ, միր տօնը մեծը, միր կտրիմ, միր տող հէ՛րը (կամ երեխի անունը տալուն):

Տղամարնը իր կնոջ մասին խօսելիս՝ ծնողների մօտ ասում է՝ նրա համար՝ «հայսը». աներանց մօմ՝ «ախազիկը», օտարների մօմ՝ «միր տօնիկօնը», միր ընտանիքը. երբեմն էլ վիշում է՝ նրան ծագումով, այս ինչի աղջիկը կամ թոռը, իրանց հայրական ազգով («միր Պար-

վաշտը, միր Մումցին, միր Միւսէլիմը...»), Անուն տալ, ոչ իրար մօտ, ոչ էլ ուրիշների մօտ բոլորովին չէ ընդունուած։ Իրար կանչելիս՝ սովորաբար ասում են—«քա՞ և կամ թէ չէ, եթէ մի քիչ հեռու են, նախապէս իրար «ո՛» են ձայն տալիս ու ապա աւելցնում։ «քա՞ լսես կու տէ?» (լսում ես)։

Սովորաբար Համշէնցի համերի մօտ բազմանդամ ընտանիքներ ըլքան։ Հաղողիւտ են նրանց մօտ այնպիսի ընտանիքներ, ուր մի քանի եղբայրներ երկար ժամանակ միասին միւնոյն յարկի տակ ապրէին։

Եղբայրներից ամեն մէկը համարեա պսակուելուն պէս՝ բաժնում, իր համար ջոկ տուն է կազմում։ Ծնողները մնում են փոքր որդու մօտ։ Գա նրանց մօտ այնպիսի մի բնական սովորութիւն է դարձել, որ որդու բաժնուելու մասին նախապէս ոչ կուր է լինում և ոչ էլ խօսակցութիւն։ Որդիք բաժնուում, հեռանում են ուղղակի հէնց այնպէս, որովհետև կարդն այնպէս է, էլ յարմարութիւն ըլ կայ մնալու, այնպէս ինչպէս նոր ելած մեղրուի ձագը անմիջապէս թողնում է հին փեթակը և նոր տեղ տեղաւորուում։ Բոլորովին այդպէս է և նրանց մօտ։ Զը նակելով որ նրանք անխտիր երկրագործութիւնով են պարապում և արդ պարապմունքն էլ պահանջում է շատ աշխատաւոր ձեռքերի միութիւն, բայց և այնպէս նրանք գերազատում են մեն-մենակ, իրանց համար ադատ-անկախ, քչւորով հողը մշակել, չարքաշութիւն քաշել, անոք, անօդնական մնալ, քան թէ շատորով շատ գործ անել, բայց շարունակ տրտունջներ ու անբաւականութիւն ունենալ իրար դէմ։

Բաժնուելու պատճառը ոչ այնքան տէզրիկներն ու հարսներն են, կամ ոկեսուրի բոնութիւններ, ինչքան հէնց իրանց տղամարդկանց կամքն ու զղացմունքները։ Եւելի իրանք որդիքն են ուզում հեռանալ հօրենական օջախից, որ առաջ ազատուել հօր իշխանութիւնից ու հսկողութիւնից, իրանց աշխատանքի կատարեալ տէրը լինել։ Ճիշտ է՝ նրանց մօտ ընտանեկան բոնութիւններ չկան, բայց գիւղական նահապետականութիւնը դեռ ևս ընդունում է այնպիսի կարգեր, որոնք

կապում, կաշկանդում են ջահել որդու ազատութիւնը։ Այսպէս նա պարտական է հօր-մօր և առհատարակ տան մեծերի առաջ ըլ ծխել, ամօթ է. նրանց բոնած գործում ըլ խառնուել, նըրանց սխալը չուղղել, պատշաճ խոնարհութիւն ցոյց տակ, մեծից առաջ խօսքը չասել ևայն ևայն։ Բայց ամենից աւելի նըրան վշտացնում է այն բանը, որ այնքան աշխատելոց իտոյ գրաբանը մի կրպէկ չի մտնում, որ ինքն էլ երբեմն-երբեմն, քաղաք դնացած ժամանակը սիրտն ուզած բանն առնի, կամ հագնելիք կամ ուտելիք։ Քանի որ փոքր է, ջահել է, հօր իշխանութեան տակ է, գրամական ոչ մի հաշուի մէջ նրան չեն խառնում, նրա ձեռքը ոչինչ չեն տալիս. բոլորը հօրը ձեռքն է դնում. նա է որոշում իր խելքով, թէ ում ինչ է հարկաւոր առնել։ Ել ինչի մնայ ինքը, քանի որ տանը իրան բանի տեղ դնող ըլքան։ Ինքն էլ վեր է կենում, դնում է, իր համար ջոկ ապրում։ Մենակ հօ ինքը չէ արապէս. ուղիշներն էլ այդպէս են արել. ոչ ոք զրա համար ոչ նեղացել է, ոչ էլ մի բան ասել. երեկ կարդն այդպէս է. ինչի ինքն էլ ըլ դնայ։ Եւ դնում է, նոյն խակ հաշու կերպով, առանց զալմաղալի, զրսէ գուրս շարունակելով իր կապը հարենական օջախի հետ, շատ անգամ օգնութեան հասնելով հօրը նեղը մնացած ժամանակ, նոյնպէս իր հերթին վայելելով հօրանց օգնութիւնը իր նեղ ժամանակը։

Տէզրինիկների, հարսների ու սկեսրի անհամութիւնները երկրորդական, երրորդական պատճառ կարող են լինել. դրանց մասին գանգատներ շատ քիչ են լինում։ Վրդէն բանը դեռ դրանց ըլ հասած բաժանումը լինում է, էլ երբ պէտք է ժամանակ գտնին իրար հետ ընկնելու։

Նոյնպէս շատ աղջիկ բերելը տնեցիներից ոչ ոքի համար ախորժելի չէ, բայց և այնպէս հաստատապէս կարելի է ասել, որ նրանց մէջ ոչ մի դէպք պատահած չի լինիլ, որ զրա համար հարսին սկսած լինին ծուռ աչքով նայել և կամ տնից դուրս արած լինին. այդ տեսակ բան նրանց մէջ երբէք չէ պատահել։ Ճիշտ է՝ աղջկայ ծնունդը նրանց մօտ այնպէս ուրախութիւնով չէ ընդունում, ինչպէս տղինը, բայց և այնպէս

աղջիկը ոչ մի կերպ բեռ չի լինում ծնողների համար: Նրան էլ այնպէս են պահում ու հագնում, ինչպէս տղին. ոչ մի դարդարանք, ոչ ոսկի, ոչ արծաթ չեն կախում նրա վրայ մինչև մարդու գնալը, եթէ չը հաշուենք կոպէկանոց պղնձէ ապարանջաններն ու հասարակ օգերն ու «լիլունները»: Պսակի ժամանակ եթէ մի գարգարանք տալիս են, այն էլ տղի տիրոջ կողմից է ընծայ զալիս, ինչպէս և հարսի պսակի բոլոր հագուստեղինն ու նրա տան ուտելիքի պատրաստութիւնը:

Վաղ նշանել, այսպէս կոչուած՝ օրօրոցախաղի սովորութիւն բոլորսկին չկայ նրանց մօտ, ոչ էլ դրա պատճառով խնամոնց յաճախ հիւրասիրելն ու «խօնչա» ուղարկելը: Հակառակը, ինչպէս տեսանք, աղջկայ տէրը աւելի նազ ու թուզ է ծախում, լիզուն երկար է պահում, աւելի մեծ արտօնութիւններ է վայելում, քան տղի տէրը, որ հաղիւ հազ, հաղար նագով ու փողով կարողանում է աղջկայ տիրոջ հաճութիւնն ըստանալ:

Հարս ու սկեսրի յարաբերութիւններն առանձին անհամութիւնների պատճառ չեն լինում: Առասպելական հոչակ սոտացած սկեսրական բռնութիւններ դրանց մօտ լսուած չեն: Աիշտ է՝ հարսը սովորաբար ակնածութիւն ու պատշաճ խոնարհութիւն է ցոյց տալիս սկեսուրին, բայց այդ խոնարհութիւնը երբէք սորկութեան չի հասնում. ոչ էլ սկեսուրն է այդպիսի պահանջներն անում: Կինը աւելի կախում ունի մարդոց, քան սկեսուրից, սկեսուրը երկրորդական դեր է կատարում: Սկըզբներում՝ երբ հարսը նոր եկած է, տղան ջահէլ է, ամօթ է նրան խառնուել կիսջ գործերում. Հարսը սկեսրի հսկողութեան տակ է. նա է նրան տան բաները սովորեցնում, տեղ դրկում, սովորեցնում անեցոց ու օտար մարդկանց ընդունելու և վարույու կարգը, ում հետ և երբ խօսելու և ըստ խօսելու ժամանակը ևալին: Հարսի ըստ խօսքանութիւնը կարճ է տեսում, հաղիւ մի քանի շաբաթ. այնուհետեւ կատարեալ աղատութիւն է վայելում խօսելու ամենքի հետ, լինի նա տան մարդ թէ օտար, երեսն, էլ միշտ բայց, առանց որևէ կապի ու քնթէկալի: Միշտայն հարսներից լիսոյ առաջի շաբաթն է, որ գլխին երկար

քող դցած, տանն է մնում. դրանից յետոյ բայց երեսով, արձակ-համարձակ ամեն տեղ էլ կարող է գնալ:

Կինը ընդհանրապէս համշէնցիների մօտ վայելում է կատարեալ աղատութիւն. մանկութիւնից նրան տղերանց հետ հաւասար աղատութիւն է տրւալ. նրանց հետ միասին մեծանում աղատ ու մարդու բնութեան ծոյտմ, ամեն աշխատանքին նրանց հետ մասնակից մինչև մարդու գնալը: Մարդու գնալուց իւսոյ էլ նա չի կտրում իր կապը բնութիւնից. մարդու անբաժան մասնակիցն է արտի ու դաշտի գործին: Փետատն ու մանգաղը ձեռքին՝ նա բանում է արտում ոչ միայն իր մարդու, այլ և դրախ բռնած մարդկանց հետ, առանց քաշուելու և ամաչելու: Նրանց հետ խօսում է, ծիծաղում, հէքիաթներ պատճում, արտի ու բերքի մասին դատողութիւններ անում: Եւ այդ վարմունքի համար նրան ոչ ոք չի դատապարտիլ, զործն այնպէս է, որ տղամարդը միշտ ամեն տեղ չի կարող համանել. մէկը պէտք է՝ որ բանուրների հետ լինի, նրանց հետ բանի, նրանց վրայ հսկի, թէ չէ նրանք էլ չեն բանիլ, զործը կը մնայ: Գրա համար ոչ սկեսուրը կը նեղանայ, ոչ էլ մարդը մի բան կասի: Նեղանան, նեղանան շատ-շատ մի քանի հայկոյանքներ կը թափեն, բանը ծեծի երբէք չի համնիլ: Ջատ հաղիւ պատճաճ կը լինի, որ մարդը իր կնոջը ծեծած լինի, իսկ սկեսրի կողմից հարսին ծեծելը հօ իմացուած չէ: Նոյն իսկ ամենամեծ պատճառի համար, որիշների հետ ծածուկ կապերի համար անդամ մարդը քաշում է իր կնոջ վրայ ձեռք բարձրացնելու. շատ-շատ մի քանի հայկոյանք ասի, կը թոգնի, համոզուած լինելով, որ օրէնքը իրաւունք չի տալիս մարդուն կնոջը ծեծելու:

Աշխատանքն ընտանիքի անդամների մէջ այսպէս է բաժնուած. հերկը, տափան ու պատ քաշելը, լուծ ու սալ բանեցնելը՝ անպայման տղամարդու գործեր են. մնացած բոլոր երկլագործական-տնտեսական գործերում անբաժան մասնակցում է կինը: Զուտ տնալին գործերը կարը, լուացքը, մանելն ու գղելը, կերպակուր եփելն ու հաց թիելը, կթելն ու խնոցին,

ջուր բերելը, տունը սրբելն ու մաքրելը, «ածուքի» աշխատանքը — միմիայն կանանց բանն է, տղամարդը չի խառնուում։ Տղամարդը «ածուքը» հերկում է, պատը քաշում է, մնացածը թողնում կնոջը։ Կինն է փորում, ցանում, փնջում, տնկում, խոտերը մաքրում, քաղում, չորացնում, հնդացու պահում։

— Կերակուրն ու հայը սովորաբար կանանցից նա է պատրաստում, որը որ տանն է մնում, լինի նա հարս թէ սկսուր։ Եթէ հարսը փոքր, ծծկեր երեխայ է ունենում, տանն է մընում. այդ բաներն էլ նա է տեսնում. իսկ երեխայ չունեցողը արտն է գնում, կերակուրն ու հայ պատրաստելը սկսրին թողնում։ Սովորաբար՝ որովհետեւ բանելն աւելի դժուար է, դրա համար տանը բանելու պառաւներն են մնում, իսկ հարսներն ու չահէլները գնում են արտը։ Տանը մնացողը՝ կերակուրը պատրաստելուց և հայը «քարից» կամ փուից հանելուց յետով, դարսում է «կալաթը» և տանում արտը՝ աշխատաւորներին։ Ով որ կերակրի ու հայի նայում է, ջուրն էլ ինքն է բերում. իսկ երեկունները սովորաբար ջուրը հարսներն ու աղջիկերքն են ըերում։ Տունը աւիլելն ու մաքրելն էլ տանը մնացողին է մնում, թէև այդ էլ ուրիշ ժամանակ հարսներն ու աղջիկերքն են անում։ Կովը կթելը, խնոցին հարելն ու խմոր հունցելը աւելի հարսների գործ է. տղամարդկանց գլուխն ու ոտները լուանալը նոյնպէս. բայց եթէ տանը մի քանի հարս կայ, ամենից փոքրըն է անում այս վերջինը։ Բուրդ զգելը, «սօկ» ու «ստորին» մանելը աւելի պառաւների բան է. իսկ կանեփից թել քաշելուն ու խափը կապելուն ամենքն էլ մասնակցում են։ Կարը լուացքն ու «լաթ» գործելը աւելի չահէլներն են անում։ Երբեմն էլ անտառից փայտ նրանք են շալակով բերում, իսկ զուզա գործելն ու տրեխ շինելը, նոյնպէս՝ կանեփից թոկ ու թել հիւելը տղամարդկանց բանն է։

Վաղ առաւտեան, զեռ լուսն ու մութը չը բացուած, ամենքը վեր են կենում տեղերից երեսները լուանում և ապա անմիջապէս «ծնրի» (աղօթք) կանգնում։ Միծ, փոքր, կին, տղամարդ — ամենքը աղօթում են. եթէ մէջները «տիրացու» — կարդացող ունին, ձախով «ծունը» են անում։ Ելի «ծունը» են

անում երեկոյեան, երբ դործից դալիս են, և մէկ անգամ էլ պառկելուց առաջ։ Ճաշից ու լնմթրելից առաջ ու վերջը երկար աղօթելու սովորութիւն չունին. սովորաբար միայն երեսներն են խաչակնքում։ Հայի նատելուց առաջ ձեռքերը լուանում են, իսկ ուտելը վերջացնելուց յետով՝ ձեռքերի հետ բերանն էլ են լուանում։ Հայի ժամանակ ամենքը միասին են նատում, կին թէ տղամարդ. կիւր ունեցած ժամանակը՝ երեմն միասին, երեմն էլ չոկ։ Եթէ հիւրը տղամարդ է, տան մեծի հետ են նստեցնում, կամ չոկ տալիս, իսկ երբ կինմարդ է լինում, տան կանանց հետ է ուտում։ Սեղանը դնելու ժամանակ սովորաբար հարկ եղած ծառալութիւնը տան վոքը հարսի վրայ է. նա է սպասաւորում սեղանին։

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Վ

Կոլիկասեան ավերը գաղթելուց յետով, չամշէնցիների ինչպէս հայրենական կեանքի շատ կողմերի, նոյնպէս և բարք ու վարքի մէջ հետղհետէ փոփոխութիւններ են մտել։ Հայրենական պարզ ու նահապետական կեանքի հետ տեղ-տեղ նկատում են նրանց մէջ ապականութիւնը ու անբարույականութիւնը, մանաւանդ Զէրնօմօրի վիճակում, ուր շրջապատող ուռա կաղակ զիւղացիների ընտանեկան յայտնի բարքերի ապականութեան շնորհով նահապետական հայը կողցըել է եր բարքերի վաղեմի մաքրութիւնը։ Այստեղ բարքերի ապականութիւնը ծալրակեղ աստիճանին է հասել. ասօրինի կապեր և օջախի պատուի խախտումը, առևանգութիւններ ու կանանց փախցնելը շատ տարածում, առևանգութիւններ են նրանց մօտ։ Միւս տեղերում, ճիշտ է՝ այդ երեսոյթներն այնքան մեծ չափով չեն կրկնուում, բայց չի կարելի ասել, թէ բոլորովին չը կան։ Ամեն տեղ նրանց գիւղերում պատահում են այդ տեսակ ապօրինի կապեր, թէև, ՚ի կարկէ, ծածուկ, ոչ բացարձակ կերպով։ Պրանց պատճառը ոչ հարկէ, ծածուկ, ոչ բացարձակ կերպով։ Պրանց պատճառը ոչ միայն իրանց հայրենակիցների վարակիչ օրինակն է և շրջանից ապատող տարրի սպականող աղդեցութիւնը, այլ զլիսաւրապէս

իրանց պարապմունքը, թութունի մշակութիւնը։ Այդ բերքի մշակութիւնը որովհետև սաստիկ մեծ ծաւալ է ստացել նրանց մօտ, ստիպում է ահազին թուղ բանւորներ թափել գործի տաք ժամանակ։ Բանւորների ամենամեծ մասը Կովկասեան ավերի հիւլիսում, Զէրնօմօրի կողմերում, կազմում են ռուս աղջիկներ, որոնք ապականութեան ամենալիսաւոր աղբւըն են։ Նրանք դալիս են տաննաւոր, հարիւրաւոր խմբերով, նատում վեր են կենում հայ տղերանց հետ, նրանց հետ ողջ օրը երգով ու կատակներով անցկացնում։ Ինչ խօսք որ աղջիկների վրայ ոչ մի հսկողութիւն չը կայ. նրանք իրանց դլխու են, ով է նրանց մօտ նշանակութիւն տալիս այդ տեսակ բաներին։

Եվի այդ թութունի պատճառով չէ, որ հազարաւոր հայ պանդուխտներ Անստովիալի հայրենական ավերից դալիս են Կովկասեան ավերը, իրանց հայրենակիցների մօտ, ծառալի կամ թութունից մի մաս ստանալու պայմանով մտնում նրանց մօտ, նրանց հետ միասին նստում, վերկենում, բանում ու պառկում։ Հասկանալի է, որ այդքան պանդուխտ բազմութեան այդպէս մօտիկ կերպով տներ լցուելը առանց հետեւանքի չի կարող անցնել։ Օրերով, ամիսներով և նոյն իսկ տարիներով միասին ու միասեղ ապօնեն ու կենակցելը՝ այսպէս թէ այնպէս՝ պատճառ է լինում ապօրինի կապերի, մանաւանդ որ նրանց մեծ մասը ջահէլ մարդիկ են, մեծ մասը կնոջ ու երեխանց տէր, որոնց ամիսներով ու տարիներով հայրենի երկրում երեսի վրայ թուղած, եկել ընկել են այս տեղերը, որ մի քիչ փող աշխատեն, գնան իրանց երկրում հալալ հաց ուտեն, թուրքական անթիւ ու աճող տուրքերը տան, իրանց բանեցրած եղն ու կովը պարտքի համար դրուելուց ազատեն։ Եվի այդ թութունն է պատճառը, որ շատերը նրանցից իրանց աշխատասիրութեան ու ընդունակութեան շնորհով դգալի բարեկեցութեան հասնելով, միջոց է տալիս նրանց կանանց պճնուելու սովորականից դուրս շնայլ կերպով, այնպէս որ վերջին տարիներս նրանց կանանց մէջ, մանաւանդ ուր թութունի մշակութիւնը մեծ չափերի է հասել, լնչապէս օրինակ Սուլուումի շրջանում, չափից դուրս տարածուած է պճնասիրութեան ախտը. մէկը միւսին գերազան-

ցել է ուղում։ Հարստի համար, ասենք, ոչինչ. նրա ձեռքը կը հասնի. բայց ինչ կանէ խեղճ-չունեռը։ Ա՛յ, նրանց բանն է գժուար։ Աղքատի կինն էլ չի ուղիլ յետ մնալ իր հարեւանից, և բաւական է տեսնի՛ որ մարդը չի կարողանում իր ճաշակին ու պահանջներին գոհացում տալ, կամաց-կամաց կոկով ուրիշ ճանապարհ բռնել... Ակամալ նրա մարդու լեզուն էլ կը կապուի։ Ի՞նչ կարող է անել. շատ էլ յանդիմանի, նա էլ է գտնում, որ հարեւանի կինն իր կնոջից լաւ է դուրս գալիս. ինչ արած։ Անիծած կինը որ իրան չի հասկանում։ Ոչ, շատ լաւ հասկանում է, բայց չի զգում, չի խղճում նրան. զօռով հօ չի կարելի հասկացնել նրան. տնից դուրս անելու համար էլ իր ոյժը չի համնիլ։ Լաւ, դուրս արեց, յետոյ ինչ անի. ով պէտք է իրան հաց-կերակուր պատրաստի, ով տունը պահի, իրան ու երեխանց նայի. տան պակասներն հոգալ, մանաւանդ որ որիշը առնելու համար ոչ իրաւոնք կայ, ոչ էլ այնքան փող ունի։ Հաղիւ-հազ, ով զիտէ ինչ նեղութիւններով, նրա ծնողներին աջողուել է այդ մէկն էլ ձեռք բերել, ուր մնալ, թէ հիմա զրան էլ դուրս անի, որիշը տուն բերէ, այն էլ այնպիսի գժուար տեղում, ուր կին առնելը բացի զրամական մեծ դոհողութիւններից, ահազին գժուարութիւնների հետ է կապուած։ Ճար չը կայ, մնում է լուել ու հաշտուել։ Ճատ էլ շատ բան կասեն. ինչ պէտք է ականջ կախել ամեն լածին, ում կնոջ վրայ չեն խօսում, որ իր կնոջ վրայ չը խօսեն։ Եւ իրաւ, այդտեսակ գէպքում խեղճ մարդու ամենամեծ միիթարանքը հէնց այն հանգամանքն է, որ այդ բամբասանքի տակ են շատ շատերը իր հարեւանների կանանցից։ Կոխակի զրոյներ պտտուում են և տղամարգկանց վրայ։ Բարքերի այս կամ այն չափով ապականութիւն նկատուում է ամեն տեղ համշնցիների մօտ, թէև ոչ այնպէս բացարձակ ու մեծ չափով, ինչպէս Զէրնօմօրի վրճակում։

Ինչպէս տեսնում ենք, բոլոր պատճառներն էլ համարեա վաստակական են։ Երկրորդական պատճառների մէջ կարելի է ընդունել երկրի դերքը. ամբողջապէս անտառուու. չորս կողմը խիտ, անմատչելի ու մութ անտառները ինչ խօսք որ

այսպէս՝ թէ այնպէս նպաստում են այլ և այլ կապերի հաստատուելուն:

Մի մեծ պատճառ էլ կայ, որ ես մոռացաւ լիշելու. այդ նրանց տղաներին փոքր հասակից պատկելու սովորութիւնն է, մօտաւրապէս 16—18 տարեկան հասակից: Այդ սովորութիւնը գուցէ այնքան վատ հետևանք չունենար, եթէ միայն աղջիկն էլ տղի համեմատ հասակ ունենար, մինչդեռ աւելի հակառակն է նկատում. սովորաբար աղջիկը կամ բոլորովին հասակակից է լինում և կամ մի քիչ մեծ, որ այսպէս թէ այնպէս դարձեալ բնական չէ, քանի որ մինչդեռ աղջիկը արբունքին հասած, ֆիզիկապէս կատարեալ զարկացման մէջ է, տղան փոքր է լինում նրա համեմատ և կարօտ դեռևս մի-երկու տարուաց անելութեան:

Բարքերի ասպականութիւն նկատում է միայն ամուսնացած կանանց շրջանում. ջահել աղջիկների մէջ այդ տեսակ ոչ մի բան չըկայ: Նրանց փախցնում են, կամ աւելի ճիշտը՝ իրանք փախցում են իրանց ուզած երիտասարդի հետ, որովհետեւ եթէ աղջկայ յօժարութիւնը չը լինի, շատ դժուար կը լինի նրանց փախցնել: Այդ տեսակ դէպքեր շատ են պատահում նրանց մօտ: Սկզբում փախցող աղջկայ ծնողները մերժում են համաձայնութիւնը տալու, չեն հաշտուում այդ բանի հետ, համարելով իրանց օջախի համար անպատճութիւն, բայց վերջիներջու բոլոր փախցողներն էլ պատկւում են:

Խնչպէս ամեն տեղ ժողովրդի մէջ, նոյնպէս և համշէնցիների մօտ՝ սիրահարութեան վրայ վատ աչքով են նայում, ընդունելով այն իրեր անպատիւ ու անբարյական երեսլթ: Բայց ծնողների այդ հին հասկացողութեան հետ չի հաշտում նրանց երիտասարդ աղջիկը կամ որդին, որ յանդուզն ու համարձակ, իր ընտրածի հետ մութ դիշերով սարեր-ձորեր է անցնում խիստիւտ անտառների միջով, մինչև կը տանի նրան մօտիկ գիւղը, քահանալի մօտ, որ կարճ հարցափորձից յետոյ անմիջապէս ձեռք կառնի Պաշտօղը և կսկսի օրհնել նրանց միութիւնը: Խոկական սիրահարութեան դէպքեր շատ հազուագիւտ են նրանց մօտ, և խոկապէս աղջիկը ում վրայ պիտի սիրահարուի, քանի

որ դիւդում էլ երիտասարդ չի մնում. 16 տարեկանից արդէն տղաներին պատկւում են. հօ երեխաներին չի կարող սիրել:

Փախչելլ միայն սիրահարութիւնից չի լինում. երեմն աղջիկը փախցում է հէնց այնպէս, տեսնելով որ իրան շատ երկար են պահում տանը և զեռ էլի միուք չունին տալու, կամ իր չը հաւանածին են ուզում տալ, կամ թէ չէ տղի կողմից հարսներ խելքից հանած կը լինեն, հեռուանց հեռու գովելով տղին և նախատելով աղջկան այդքան երկար համբերելու համար: Այս վերջին տեսակ դէպքեր շատ են պատահում: Տղի տէրը երբ տեսնում է որ ամեն կողմից ճարը կտրում է, որտեղից ուզեց՝ չը տուին, զիմում է իր բարեկամ հարսների օդնութեան, խնդրելով անպատճառ իր մտքի դրածին կամ մի ուրիշի մի տեղից թուցնել: Այդ արդէն նրանց համար գժուար չէ: Գէս-դէն են ընկնում, առաջ հեռուից աղջկան լուրեր են դրկում, տղին զովելով զովում, վերջապէս իրանք սկսում են մօտենալ և մի գեղեցիկ օր նրանցից մէկը եկեղեցուց կամ ուղղակի տնից աղջկան առնում, տանում է նրան սպասող տղին յանձնում, ինքը հեռուանում: Այսուհետեւ նրանք երկուսը միասին, ծածուկ, գիշերով ճանապարհ են բռնում դէպի գիւղը, աշխատելով սարերի ու անմատչելի գազաթների վրայից անցնելով, հանել քահանալի տունը, ուր վերջնականապէս հանդիսատ են դտնում և իրանց նպատակին հանում:

Երեմն մի աղքատ տղի համար, տեսնելով որ ոչ ոք աղջիկ չի տալիս, ողջ դիւդը կանդնում է. ժողովլում են կտրիճները և մի գիշեր վրայ տալիս մի աղջկայ տունը, պարապ հրացանի ու ատրճանակի ձախներով սարսափեցնում տնեցոց և աղջկան դուրս հանում, փախցնում, տանում տղի հետ պատկել տալիս: Եւ այդ տեսակ դէպքեր անցնում են անպատճի և առանց որևէ ծանր հետևանքի:

ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԿԵՍՆՔԸ

(Համայնական սովորութիւններ)։

Համշէնցի հայր իր խիստ գործնական ողու և բնաւորութեան հետ արտայալում է շատ դէպքերում նաև զուտ հասարակական-հսմայնական կողմերը։ Զընալելով որ նրանց տները իրարից հեռու-հեռու են և տան տեղեր ընտրած ժամանակն նրանց մէջ շատ անդամ լուրջ տարաձայնութիւններ են ծագում, բայց և այնպէս՝ ամեն մէկը նրանցից խորը համոզուած է, որ տունը առանց զրկցի չի լինի. ինչքան թէ մօտիկ զրբկից ունենալը վատ է, նրանից հեռու մնալն էլ լաւ չէ։ Պահէ, կեանք է, ցաւ է, դժբախտութիւն է՝ նրանք միշտ իրար հարկաւոր կրգան։ Կա լաւ զիտէ, որ մեն-մենակ տունը չի կարող ամեն պակասներին ու պատահարներին հասնել. մարդ մարդու կարօտ կը լինի։

Այդ միտքը դեղեցիկ կերպով արտայալուել է ժողովրդի առաջներում։ Ահա նրանցից մի քանիսը.

«ԱՌՎԼՆցու (առաւունեան) արելն զրկիցը առաջ է»։ տեսնում էք՝ ինչ զեղեցիկ համեմատութիւն է. հարեւանը հարեւանի համար արելոց էլ առաջ է դուրս դալիս։

«Ինչողար (ինչքան) գնդին ըլլիս, զրկցուն էհտաջ (կարօտ) կըլիս»։

«Թրկցուդ փեօն (փոր) օր ցաւի նա, դուն էլ փեօյդ աճթէ՛ (տրոլիք)»։

«Թրկցուդ աչքը քեօն է՛ նա, դուն էլ մէկը բոնէ՛»։

«Թրկցուդ օննալ (ունենալ) նա, ինձի տալ օչ էլ նա, ինձմըն չի ուզեր»։

«Առաջ զրկցուդ ուզէ՛ օր Աստուած քեզի էլ տալ»։

«Թրկցուդ երկուս կամինաս պիտի հըն օր (որպէս զի) Աստուած մէկը քեզի տալ»։

«Աստուած առաջ զրկցուն տալ, ետքը ինձի»։

«Կերածը հեօտ (հոտ) կուտալ, տրւածը հօմ կուտալ»։— ուզում է ասել, թէ իր ուտելն այնքան համ չի տալ, ինչքան ուրիշն տալը։

«Մէկի ֆուխարութիւնը (խեղձութիւն) տաս հոգու էրէսէ կըլլի»։

Այս վերջին առաջը զուտ սօցիալական միտք է պարունակում իր մէջ։ Կա ցոյց է տալիս, որ մարդու վիճակը մեծ կախում ունի մարդկանցից. մէկի խեղձութիւնը նոյն խակ ընդունում է իրքու արդիւնք նրա շրջապատզների ազգեցութեան։

Ակած հասարակ վոխից ու հարեւանական յարաբերութիւններից մինչև հաւաքական ոյժով կատարած մեծ ձեռնարկութիւնները՝ բոլորը այդ հասարակական զիտակցութեան արդիւնք է։ Կա ընդունում է, որ առանց փոխադարձ օգնութեան, առանց մէկ-մէկին բունելու, դժուար է ապրել աշխարհում։ Անհրաժեշտ է, որ մարդիկ մօտենան, միանան իրար, նոյն խակ իրանց սեփական օդուի ու բարեկեցութեան համար։

Սովորաբար առանց մերժելու մէկը միւսին փոխ է տալիս միշտ սարք, զրծիք կամ աման, ինչ որ ուզէ, եթէ միայն ունենաւմ է. սալլ, տակառ (ջուր կրելու), արօր, լուծ, սամի, թամք, կացին, ուրաք, պղինձ, ջրածան ևալլն. զրանց համար ոչ մէկը մի բան չի պահանջիլ։ Ճատ անդամ զրանցից ամելի մեծ բաներ են բան տալիս ուզողին—ձի, եղ և էլի փող չեն ուզում։

Չի տալիս են աւելի ջրաղաց հատիկ տանելու և կամ ալիւր բերելու համար, հիւանդ ունեցողին՝ բժշկի կամ դեղի լետից դնալու համար, մէկ էլ հարսնիքին, «թագաւորի» ու «հարսնքուրների» նստելու համար։ Եղ տալիս են հարեւանին նեղ ժամանակ օգնելու համար՝ հերկին, անտառից փայտ քաշելու, արտից քաղածը տուն կրելու համար ևալլն։ Ճատ անդամ եղների հետ նրանց համար քշող մարդ էլ են տալիս։ Հաւը թուխս դնելիս, ով աւելի թուխս ունի, տալիս է չունեցողին, որ նա էլ նստեցնէ։

Հարեւանական յարաբերութիւններից լիշելու է նոյնպէս կանանց ծննդկանին ու հիւանդներին ՚ի տես գնալը, որ վենում է սովորաբար կիրակի ու տօն օքերին (լի օքեր պարապ չեն լինում), նրանց համար ուտելիք տանելով; Ցեռնոյների համար զերեղման փորելը ամեն մի համշենցու պարտականութիւնն է. ով էլ լինի մեռնողը, հերիք է որ իր դիւղից կամ ժաղդից լինի. դրա համար ոքինչ վարձ չըկայ:

Ինչպէս որ առանձին անհատներ լրաբ օդնում են, այնպէս էլ երբեմն, հազկ եղաւ դէպքում, համայնքը կամ նրա անդամներից շատերը խմբով ու միայնած՝ օդնութեան են դափս լրանցից մէկւն: Այդ բանը լաւ արտադադում է «Եղբաթ» կոչուած աշխատանքի ժամանակ: «Եղբաթ» է կոչում այն աշխատանքը, որ կատարում է հաւաքական կերպով, համայնքի անդամներից մէկի խնդրանքով, նրա նեղ ժամանակ և նրա օգտին, դա է «Եղբաթ բօնել» կամ «Եղբաթ բօնեցնել»:

Ելիքազոյն մէջ «Էղբաթ» ժողովում են, երբ պէտք է լինում օդնել մէկին մարդով կամ եղով—քաղելու, քաղհան անելու, զիգելու, «սադրելու» (տնկել), շաբելու ևայլն. Երբ շտապով զործ է լինում. կամ երբ հարկաւոր է լինում շատորի հաւաքական ուժը փչացած ճանապարհը կամ կամուրքը շինելու, մեծ-մեծ զերաններն ու ծածքի համար հանած տախտակը ներ տեղերից ճանապարհը հանելու, սայլ բարձելու ևայլն: «Էղբաթ» անում են աւելի թութունի «սադրելու» (տնկելու), քաղհանի, քաղի ու շարի ժոմանակ, ցորենի քաղի ժամանակ, սիմինգը քաղին ու «կալելիս» (կճեպը զիսից հանել), «ծեղը» (սիմինգի չըր տերեւները) զիգելիս՝ «խողիկու» (խուրձ շինել) և ծառը հանելու համար, նոյնպէս և թթու գնելիս՝ լորիալի թելերն ու պուեր մաքրելու համար:

Ջէնքի ժամանակ՝ «Էղբաթ» անում են զլիստորապէս տունը ծածկելու ժամանակ, երբ հարկաւոր է զալիս միքանի մարդկանց հաւաքական ոյժը ծածքի մանր տախտակները վեր հանելու և ծածկելու համար: Այդ աշխատանքը համարեա թէ միշտ ձրի է լինում: Երբեմն «Էղբաթ» զալիս են անտառից շէնքի համար փաստ քաշելու:

«Եղբայթը» սովորաբար ձվի ու հաւաքական աշխատանք է մէկի օգտին և նրան օդնելու նպատակով։ Բայց պատահում է նոյնպէս, որ «Եղբայթ» են անում, բայց բոլորովին ձրի չվկանում. մի մասը փող է ստանում, օրավարձ, աւելի թութունի աշխատանքին, իսկ միքանիսն էլ փոխ են դալիս, այսինքն՝ արտի տէրն էլ իր հերթին, երբ հարկաւոր լինի, պարտաւոր է զնալու նրանց օդնելու, նրանցից ամեն մէկի եկած օրերի հաշում։ Փայտ քաշելու համար փոխ չը կայ. փոխ աշխատանքն աւելի արտի բերքերի համար է. փոխը նոյն տարին պէտք է վճարուի, ի հարկէ աշխատանքով, դնացած օրերի հաշում։ Հին, մնացած փոխեր չեն լիշտում, մուացւում են:

Հալրենական ամելում այդ սովորութիւնը աւելի տարածուած է եղել, քան այսուեղ. մէկ որ՝ այնտեղ այսքան զբաղուած չեն եղել (թութանի գործ չի եղել), մէկ էլ որ՝ բանեցնող չի եղել. փող չի եղել, որ փողով զործ մանդալին: Այստեղ այդ երլուսն էլ կայ. բայց էլի «Եղրաթ» բանելը սովորական տարածուած երլութ է չամշէնցի հայերի մէջ:

Համայնքով մէկին օդնելու զիտակցութիւնը արտայարութեամբ է համշէնցիների մէջ ոչ միայն զրոտ երկրագործական աշխատանքի ժամանակ, այլ և այնպիսի հարցերում, որոնք երկրագործութեան հետ կապ չունեն: Այսպէս վերև տեսանք, թէ ինչպէս երբեմն մի երիտասարդի համար զիւղի կտրիճները, ի հարկէ խելօքների ու առաջաւորների խորհրդուի, արշաւանք ևն զործում մէկի տան վրայ, նրա աղջիկը երիտասարդի համար փախցնելու մտքով: Խելօքներն էլ, կտրիճներն էլ համոզուած են, որ զբանով ոչինչ վատ բան չեն անում. ախր չէ որ նրան էլ մի կին է պէտք. Հօ անկին չի կարելի մնալ. երբ չեն տալիս, պէտք է փախցնել: Գիւղական տնտեսութիւնն որ չեն տալիս, պէտք է փախցնել: Գիւղական տնտեսութիւնն ու երկրագործութիւնը առանց տանտիկինի, առանց կնոջ անկարելի է, չի լինիլ. այդ ամենքը զիտեն: Եթէ տղան մնայ այնպէս, նրա երկրագործութիւնն էլ կը մնայ. տունը պիտի կորչի. աւելի լաւ չէ, որ նա էլ ապրի, տուն լինի, հաց ուտի, Ասոծուն փառք տայ:

Այդպէս՝ իրանցից մէկին մի ցաւ կամ վտանգ եկած ժա-

մանակ՝ բոլորը ոտի են կանգնում, օդնութեան զալլա: Գող է գալիս գլուղը, մալլ քշում, տանում է, հարևանները խմբով յատկն են ընկնում, ձեռքիցն առնում, բերում: Հրացանի մի տրաքոց բաւական է, որ շարժէ, ոտի կանգնեցնէ բոլորին: Կամ մութ գլշեր է. անտառում մալ է մնում. գնում են վիճառութու. կամ թէ գլշեր է անտառում մնացած մալի մասին լուր է գալիս, թէ գայլի ճանկն է ընկել. գնում են աղատելու: Մէկին հրդեհ կամ մի մեծ վնաս պատահած ժամանակ՝ ամենքը մի բանով օդնում են:

Ինչպէս որ համայնքն է մէկին օդնում, այնպէս էլ եր-
բեմն մէկն է համայնքին օդնում, նրա համար ձրի ծառայու-
թիւններ անում: Այսպէս՝ զիւղի ժամկոչը ոչ մի բան չի ստա-
նում. ձրի է կատարում իր պաշտօնը. նոյնպէս և տիրացուն:
Յիշում եմ. միանգամ նրանց մօտ մի զիւղում իրանց ամենա-
լաւ մի տիրացուի սիրտը շինելու համար, որպէս զի միշտ ան-
պակաս եկեղեցում գտնուի, քահանալի խորհրդով զիխաւորները
տարեկան ոռմիկ էին նշանակել: Զը նայելով որ ոռմիկը շատ
չնչին բան էր, բայց էլի առանց տրտունջի ու խօսակցութեան
չանցաւ. տիրացուն ժողովրդի բերանում ծաղրի առարկայ զար-
ձաւ, թէ ինչ է՝ «ձայնն էլ փողով է ծախում»... Եւ վերջա-
պէս զայեակն ու զիւղի մէջ զտնուած մարդկանց ու մալերի
ցաւերից հասկացող զիւղացիք ձրի գնում են բոլոր զիմողներին.
Նրանցից ոչ մէկը ոչինչ չի ստանում, և այդ ոչ միայն հասա-
րակ խորհուրդների համար, այլ նոյն խոկ այնպիսի ծանր ու
բարդ գործողութիւններ կատարելու համար, ինչպէս են զանա-
զան սրազործութիւններ ու կրտելը (հայտրուանիե).

Նոյն հասարակական գիտակցութիւնն է երևում նրանց այն աշխատանքներում, որ կատարում են նրանք միասին հաւաքական կերպով, իրար օգնելու նպատակով։ Այսուղ արդէն մօտիւր դուռ հասարակական է։ Կրօնական կամ բարոյական ովինչ ըլկայ։ Անհատը մեն-մենակ չի կարող իր բազմատեսակ կարիքները լրացնել։ և ահա առաջ է գալիս այն գիտակցութիւնը, թէ պէտք է մօտենալ, կապուել հարեաններին, նրանց հետ գործ ոկտել։ Այդ գիտակցութեան արդիւնքն է, որ

այսօր հայրենիքից Կովկասեան ավերը մերկ ու աղքատ եկած հայ դաղթականները իրանց համար սեփական հողեր են ձեռք բերել մասնաւոր կալուածատէրերից Աև ծովի ափերի գանագան մասներում։ Նրանց ամենամեծ հողավին սեփականութիւնը գտըն- տում է Սուխումի շրջանի Ֆէբէլլա տեղում, ուր հայերի զնած հողի տարածութիւնը հազար դեսետինից աւելի է։ Միքանի հարիւր դեսետինին սեփական հող էլ Սօչի բաժնում են զնել, Աղլէր աւանին մօտիկ։

Եթէ չեմ սխալում, այդ կողմից չամշէնցի հայերը կօտու ձահնազար դիւղի հայերից յետով՝ առաջին օրինակն են տալիս, որ հաւաքական միացած ոյժով հողալին սեփականութիւններ են ձեռք բերում: Այսօր, եթէ յայտնի արզելքը ըլ լինէր (նըրանցից մեծ մասը թիւրքահպատակ են), շատերը նորից հողեր ձեռք կը բերէին իրանց համար. դա բոլոր անհոգ և ամեն տեղից հալածուած ու քշուած չամշէնցի հայերի ցանկութիւնն է:

Բայց ահա և ուրիշ օրինակներ հաւաքական միացած աշ-
խատանքին: ԸստՀանուլը արտերի («Ճիֆթլը») ու խոտնոցներին
պատը միասին են քաշում: Կոյնակէս միասին են պատում սահ-
մանի պատը որ մալլ մի կողմից միւսը չանցնի և զնաս ըլ-
պատճառի:

Պիտին են շլնում և ուղղում դիւզի վչացած ճանապարհ-ներն ու կամուրջները:

Պալը հովելու համար միասին են վարձում «չօբնին»: «Չօրօնը» հերթով մնում է նրանցից ամեն մէկի տանը, որ այսքան կամ այնքան օր պարտաւորուում է նրան պահել և ուտեցնել: Վարձը տրւում է նայելով ամեն մէկի մալերի թւին. (քիչ մալ ունեցողը քիչ է տալիս). միւսոյն ժամանակ ջոկ վարձ է լինում գոմշամալին, ջոկ՝ հասարակ մալին:

Աերջապէս պէտք է լիշել նրանց զատկական մեռելոցն ու հասարակական մատողը—«ժօմը»: Մեռելներին անգամ չոկ-չոկ օրհնել քրկայ. տէրտէրը ուղղակի միանդամից օրհնում է բոլորին, դառնալով գերեզմանառան չորս կողմը: Բայց մեռելներից առելի հետաքրքրական է նրանց այդ օրուայ միտոթիւնն ու հասարակական հացկերովթը: Ծյու տեսակ հացկերովթներ

սարքում են համշէնցիներ տարուայ մէջ և ուրիշ օրերին, նորից միանալով և ուտելիքները լրանցից մէկի մօտ հաւաքելով, մի տեսակ հաւաքական մատաղի սովորութիւն է զա. զրան են ասում — «ժօմ»։ Ուտելիք տանելու սովորութիւն ունին նոյնպէս կիրակի ու տօն օրերին եկեղեցու դուռը։ Կըտեղ ժամաւորները քահանալի հետ միասին նատում են սեղանին, օրհնելով բերողներին և ողորմի ասելով նրանց մ'ուեների հսդան։



ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Աւ Տովի լինչպէս հայրենական, այնպէս էլ Կովկասեան ափերը
խիտ անտառներով են Տաճկուած: Ցածր, դաշտավին մասը ամբողջա-
պէս ճահճային տարածովմիւն է Ներկացացնուած անվերջ ու դժնդակ
ջերմով: Հետզհետէ թիւրքահայերի Կովկասեան ափերը գալուց յետոյ՝
թութունի մշակութեան շնորհով խիտ անտառները կտրտուած բաց-
ւում են, ճահճաները ցամքուած են և ջերմոտ ու ապականուած օդը
կամաց-կամաց մաքրուած է չորս կրողից փչող քամիների հոսանքից,
թէև ջերմը այդ տեղերից բոլորովին չի անհետացել. ամառ, ձմեռ
կրկնուած է: Նոյն խիլ բարձր, լեռնային մասուած, որ համեմատաբար
աւելի զով, առողջարար կլիմայ ունի, ջրերն էլ պաղ ու անուշ, ևլր
ջերմը կաց, թէև ոչ այնպէս խիստ ու երկարատև, ինչպէս դաշտավին
մասուած:

Ճերմը Սև ծովի ափերի, թէ Անստոլիական և թէ մեր Կովկասեան, յատուկ տեղական հրաւանդութիւն է, որ հետեանք է երկրի կլիմայական պացմանների՝ թաճնձր ու խիտ անտառների, շարունակ տեղացող ցորդ ու առատ անձրեների, մշտական եկող ու նստող ցողի և ծովի մօտիկութեան։ Այդ տեղերում, թէ բարձրում և թէ ցածրում—օդը համարեա շարունակ խոնաւ է, անձրեներն անվագակաս, գետինը համարեա միշտ թաց, բացի ի հարկէ, շատ բարձրերից, այն էլ տարուալ ամենաչոր ժամանակը։

Խմելու ջուրը տեղ-տեղ ցածրերում շատ փառ է. ուղղակի ճահճային հողի համ տուող աղբիւրներ են. իսկ բարձրերում պատահում են հիանալի, ապա ու իստակ աղբիւրներ:

Օգի ու ջրի կողմից Սոլյումի շրջանում առողջարար տեղերի թւում կարելի է յիշել հայագաղթ գիւղերից Թէբէլդա, Խօփ ու Փսիրց-խալի բաձրերը, իսկ Ալբնոսոմորի վիճակում Կօմթա գիւղը, Այդ տեղերի գիրքը, օդն ու ջուրը հրաշալի է, թէև էլի երբեմն այդ տեղերումն էլ է ջերմր պատահում:

Եց տեղերում խմապէս ամենից շատ տարածուած հիւանդութիւննը դա է, որին, բացի երկրի տեղական-կիմայական պայմաններց, իրանց պարապունքն էլ է նպաստում: Խչապէս թութունի քաղը սովորաբար լինում է փաղ առաւօտներն ու երեկոներին, երբ արդէն ցողը իշած է լինում: Խչ խօսք որ շարունակ ժամերով ցողոտած խո-

տում ոտները թրչելը առանց հետևանքի չի կարող անցնել. Մեծ պատճառներից մէկն էլ սիմինդրի արտերում գիշերով հսկելն է: Յուրաքանչին, անձրել անարգել մտնում են նրանց պառկած փոքրիկ խուղերում, ուր համարեա բացօղեայ և կէս անքուն 2—3 ամիս շարունակ պահպանում են արտերը վայրի խողից ու արջից: Քիչ թէ շատ լինաս տալիս են և բոստաններն իրանց խիար-ձմերուկով, նոյնակէս և տեղ-տեղ անտառների վայրի պտուղների առատութիւնը. Տեղական խաղողի տեսակը («ադէս»-իզաբէլլա) մինչև անդամ դողացնող ու վնասակար է համարւում, ուր նման սալորը, թուզը, վայրի խնձորը, պանտան և ազն, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ զիւղացի երեխաները սովորաբար առաւոտից իրիկուն ընկած սարերն ու ձորերը, ծնողների աչքից հեռու և զարթելուն պէս վաղ-վտղ քաղցած փորով ճառերի վրայ են բարձրանում:

Զերմին շատ մօտիկ նմանութիւն ունի և շատ էլ պատհահում է այդ կողմերում օդի մի տեսակ հիւանդութիւն, որին՝ առհասարակ «հաւա» (րօրլուկ) են ասում: Ացդ հիւանդութիւնն աւելի պատահում է ամառուայ ամիսներին, գործի տաք ժամանակը: Պատճառը լի օդն ու տեղն են. արևի տակ շատ աշխատերուց բեզարում պատկում են գետնին, քները տանում: կամ մրտում են, կամ արևն է խրփում, կամ թացութիւնն է դիմչում: Աւելի լինում է արևի տակ շատ բաներուց ու պատկերուց. մէկ էլ գիշերները դուրսը բացօղեայ մնացուց: Ակքում հիւանդութեան ընթացքը մօտիկ նմանութիւն ունի ջերմին, այնպէս որ չի հասկացում ջերմ է թէ «հաւա», բաց կամաց-կամաց հիւանդի սաստիկ բարձրացող ու շարունակ միաչափ տաքութիւնը, անհանգստութիւնն ու անքնութիւնը ցոյց են տալիս, որ հիւանդութիւնը «հաւա» է:

Ացդ հիւանդութիւնը երկար է քաշում և շատ էլ վտանգաւոր ընթացք ունի, մանաւանդ եթէ ժամանակին չնայեն, դեղ չանեն, լաւ չպահպանեն: Զատ առողջ մարդիկ զոհ են դնացել դրան, չնայած իրանց երկաթէ կազմուածքին. իրանց դիմացկունութեանը: Գլխաւորը պէտք է առանց ուշացնելու, ժամանակ չանցկացրած՝ սկսել գործածել դեղերը, նայած հիւանդութեան ընթացքին ու յատկութեան: Այս հիւանդ, որ տաքով է բաւանում, կայ որ սառը բաներով: Առհասարակ ժամանակին ու տեղին գործ դրած միջոցները ազատում են հիւանդին: Եպատուելուց յետոյ պէտք է, մի առժամանակ զգուշանալ, թէ զի կարող է կրկնուել և աւելի վտանգաւոր դառնալ:

Համշէնցիների տները մաքուր են, թէև սովորաբար գոմերը միշտ տակի յարկումն են լինում. բաց աղբը չի մնում, շուտ-շուտ մաքում դուրս են տանում, «աճուն» են լցնում, ուրիշ տեղերի

պէս աղբի դէղեր ու բրգեր չեն շինում: Այդ կողմից նրանց գիւղերը շատ մաքուր են, բացց և այնպէս զիւղական խրճիթներից անբաժան ծուխը, խոնաւութիւնն ու լոսի պակասութիւնը նրանց տներում էլ կայ: Խոկ ձմեռը որովհետեւ համարեա բոլորը փայտաշէն են, դրանց վրայ աւելանում է և ցուրաը. քամին չորս կողմից փշում է փայտերի ծակ արանքներից: Եկեւք ու հիւանդ շահեցէք այդպիսի տներում:

Վարակիչ ցաւերի տարածուելու գլխաւոր պատճառներից մէկն էլ, իրանց սովորութիւնն է. հիւանդներին ացցելելը: Ոչ մի տեսակ վտանգաւոր վարակիչ ցաւով բռնուած հիւանդին աւանձնացնելու սովորութիւն չունին: Հիւանդը իրանց հետ պառկում, իրանց հետ ուժում խմում է միւսնոյն սենեակում: Նա ոչ միայն տնեցոց, այլ և իրան ացցի եկողների շնորհով ամբողջ զիւղի հետ յարաբերութեան մէջ է լինում: Մանաւանդ որ հիւանդատես գնացող կանաչք երեխաներին էլ հետներն են պտտեցնում առանց որևէ զգուշութեան:

Գլւղային շատ անդամ գործից ազատ ժամանակ երեխաներին գիտմամբ տանում է վարակուած տեղը, մտածելով՝ որ թէ մէկ օր նրանք էլ պէտք է բռնուեն, աւելի լաւ է հիմա բռնուին, քանի որ գործ չունին և կարող են նայել: Գլւղային հաւատացած է, որ երեխան մի կարդ վարակիչ հիւանդութիւններ անպատճառ պէտք է քաշը լի կեանքում, ինչպէս՝ ծաղկի, քութէշ, կարմրուկ, կապոյտ հազ և ազն: Քանի որ ացդպէս է, ինչու չաշխատել, որ երեխան օր առաջ բռնուի, քանի որ պարապ են, որ գործին էլ վնաս վինի:

Ամբողջ Սև ծովի Կովկասեան ափերի հայ զիւղերում ոչ մի տեղ ոչ բժիշկ կայ, ոչ գեղատուն, ոչ էլ մի հասարակ ֆէլգէշ. նրանց համար նոյն խոկ գաւառական շրջուն բժիշկ էլ չի ման գալիս: Նեղը մնացած ժամանակ կամ մօտիկ քաղաքներն ու աւաններն են գնում և կամ ուղղակի թողնում բախտին: Միթէ ամենքին ձեռք կը տայ քաղաքից բժիշկ հանել բերել իրանց տեղերը. տասնեակ բուբլիներ են ուղում: Արտեղից գտնի զիւղային այլքան փող: Զատ էլ ունենայ, հօ միայն այդ չի. քանի-քանի պակասներ կունենայ. չի որ ամեն տեղ էլ անիծած փողն են ուղում: Թրանկ յետոյ ինչ մեղադրելու բան կայ զիւղայիներին, որ նրանք շատ անդամ «տիրացուներին» ու մոլաններին են դիմում՝ «կաշտում», «գիր», «նուսկա», «հօմայիլ» անել տալիս: Իրանց մօտիկ ու էժան այդ է ճարւում, իրանց ձեռքիցն էլ այլքան կրգայ: Մի քիչ իւղ, ձու, արլար կրտայ, մի քիչ էլ փող կրտայ: թէ որ ունենայ, մի բան կանի, վերջապէս մի կերպ տիրացուի ու մօլի միրար կը շինի: Բժիշկը որ չի գալիս, նա ինչ անի. որտեղից տայ նրանց ուղած փողը: Նրանք 40—50 բուբ-

լուց են սկսում. ամեն անդամ ձեռք կը տայ նրան այդքան փող տալլ։ Ազգքան փող նա ամիսներ արիւնքրտինք բանելով հազիւ է ըստանում. միթէ հեշտ է հիմա յանկարծ մի ժամում դնել ուրիշի բուռը։

Հիւանդութեան ժամանակ սրբերին դիմել նրանց մօտ բոլորի վին չկաց. ոչ էլ սրբի մօտից հող բերելն ու հիւանդին ջրով խմեցնելլ։ Աւստ գնալ համարեա չունին. Էլի հայրենիքում քիչշատ դնացել են, Կովկասեան ափերում այդ էլ մոռացել են. Մէկ որ՝ իրանց հին ուխտատեղերը չկան, մէկ էլ որ՝ թութունի պատճառով ամեն բան մոռացել են, ազատ ժամանակ չունեն. Վերջին տարիներս հայ կանանցից ոմանք մէկ-մէկ սկսել են ուխտ դնալ Սուխումին մօտիկ Նոր-Աֆօնի ռուսաց վանքը՝ երեխանց ծաղկի վտանդից ազատ պահելու համար։

Պէտք է ասել, որ ընդհանրապէս ծաղկի հիւանդութիւնը նրանց երեխանց համար անխտանգ է անցնում, քանի որ ամենին էլ լաւ հասկանում են ծաղիկ կտրելու նշանակութիւնը և օր առաջ ամեն մէկը աշխատում է կտրել տալ իր երեխի ծաղիկը. Ծաղկի համաձարակի ժամանակ՝ երբ յատուկ ծաղկահատներ չեն գալիս, շատ անդամ իրանք տան պառաներն են իրանց ձեռքով ասեղով կամ մի սուզ բանով երեխանց ծաղիկ կտրում, մէկ-մէկից ծաղիկ քաշելով։

Համեմատաբար աւելի շատ զոհեր են տանում երեխաներից կարմրուկը, քութէշն ու կապոյտ հազր, որոնց առաջն առնելու համար համարեա ոչ մի նախապաշտպանողական միջոցներ չունեն։

Ինչպէս ասեցի, ամենատարածուած հիւանդութիւնը նրանց մէջ դողը կամ «ջերմն» է, մանաւանդ ցածր ծովափի գիւղերում. Պողից հիւանդանում են թէ երեխաներ և թէ մեծեր. Պողը երբ երկար է քաշում, պատճառում է երբեմն փայծաղի առանձին հիւանդութիւն, որին տեղական բառով «տալաղ» են ասում. այս վերջինը աւելի փոքր երեխաներն են ունենում. Կրծքի ու թոքերի բարակ հիւանդութիւններ շատ քիչ են պատահում. Ստամոքսային խանգարումներից աւելի պատահում են այսպէս կոչուած խարանացաւը, կամ ինչպէս գիւղացիք են ասում,—«սրտի այրելը», որ ինչպէս նրանք էլ գիտել են, վատ ու գժուարամարս ուտելիքներից է լինում. այդ ցաւից շատերն են գանդատուում, Կանանց հիւանդութիւններից պատահում են ամսականի խանգարումներ, երկար ժամանակով արեան չը գալը, որ աւելի բարդուում է դաշտացին ծանր աշխատանքը ընդհատելուց, Բացի այդ սովորական հիւանդութիւններից, համշէնցիների մօտ յաճախ պատահում է լսել զանգաներ մի տեսակ ցաւի մասին, որ ինչքան լսել եմ, շալակով բեռ կրելով քրտնելուց ու պաղելուց է լինում. Յանկարծ մարմնի մի տեղում սկսում է ցաւել ինքն իրան, առանց պատճառի.

ցաւը, մի տեղ չի մնում, ման է գալիս. դրան համշէնցիները «խուլունց» են ասում (Երեխ ուրիշ տեղերի «կօլինցն» է). Դա շատ տարածուած, բաց անվտանգ, սովորական ցաւ է, որ շուտով կտրւում է, բաց էլի ցետոյ նորից սկսում։

Թէև երիտասարդութիւնը բոլորովին ազատ է վէնէրական ախտերից, բաց տեղ-տեղ գիւղերում պատահում են այդ ցաւով վարակուած ամբողջ լնտանիքներ, որոնց վարակուելու պատճառը իրանց անկուած մուռող լնտանիքներ, որոնց վարակուելու պատճառը բեզզուշութիւնն ու տգիտութիւնն են եղել. Գիւղերում այդ ախտը բերում են սովորաբար Թիւրքիալից Կովկասեան ափերը եկած իրանց հայրենակից հարուստ, վաշխառու ցեցերը, որոնք զաղթել ու պանդիստել ցանկացող, բաց նիւթապէս կարօտ մարդկանց մեծ-մեծ տոկոսներով փոխառութիւն անելով, տարին մի-երկու անգամ գալիս են այս կողմերը իրանց զոհերի ցետել—իրանց առնելիքները հաւաքելու, ամեն տեղ հետները բերած ապականութիւնը տարածելով։

Հիւանդների խնամքն ու պահպանութիւնը, ինչպէս ամեն տեղ գիւղերում, նրանց մօտ էլ շատ աննախանձելի է անցնում. Հիւանդին արած նրանց մեծ խնամքն այն է, որ չեն ստիպում աշխատանքի գնալ, թողնում են տանը, շատ անգամ մեն-մենակ վէր ընկած օջախի մօտիկ. ոչ խօսող է ունենում և ոչ միտիթարող. Կ՞ենչ անէ գիւղացին. գործը, խեղճութիւնն է մարդկանց այդպէս քարացնում. Ճիշտ է՝ սպահեցողութեան-դիէտացին մեծ նշանակութիւն են տալիս, բժշկին սպահեցողութեան-դիէտացին մեծ նշանակութիւն են տալիս, բաց ինչ օգուտ հարցնեանից առաջ դրա մասին են հարցնում, բաց ինչ օգուտ հարցնեանից տալիս. Առհասարակ հիւանդներին, մանաւանդ մրսածներին ու հազորներին՝ առաւօտ-իրիկուն թէյ են խմեցնում, իսկ այնպէս առհասարակ չեն գործածում, սովորութիւն չունին, միայն հարուստներն են պահում ու բանեցնում, այն էլ հիւր եկած ժամանակով. Հասարակ ջրի տեղ հիւանդին երեմն էլ եփած ջուր կամ թէյ են տալիս, իսկ տաքութեան ժամանակի՝ ծարաւը կտրելու համար հոնի ջուր են խմեցնում. Առհասարակ ամեն հիւանդի էլ աշխատուում են շատ տաք պահել, միքանի վերամակով ծածկում, զլուխը մանաւանդ սասափի փաթթում, որ ցուրտը չը գիւղի, մինչդեռ ոտները բաց-բաց դուրս են բացից, մասնաւում աւելի աջող են բժշկում, քան

Ժողովրդական բժշկութեան մի տեսակն էլ իրանց բանեցրած տնային անասունների գարմանելն ու բժշկելն է. Եւ պէտք է նկատել, որ շատ անգամ նրանք մալերին աւելի աջող են բժշկում, քան

իրանց տնեցոց: Երկար դարերի փորձն ու գիւղացու բարեկեցութեան կախումը անսասուններից—սովորեցրել են նրանց առանձին խնամք տանել մալերի վրայ, նրանց տրամադրութիւնից ու հայեացքից, հաւկանալ նրանց հայն ու ցաւր:

Ես այստեղ կը բերեմ նրանց բժշկական միջոցներից մի քանի հատ միայն, իբրև նմուշներ ժողովրդական հնարագիտութեան, թողնելով ժողովրդական բժշկութեան՝ թէ մարդկանց և թէ մալերի մանրամասն ու լիակատար ուսումնասիրութիւնը ուրիշ ժամանակի և ուրիշ անգամի:

Դ Ե Ղ Ե Բ Ո Ւ Մ Ի Զ Ո Յ Ն Ե Բ.

I. Մարդկանց հիւանդուքիւններ.

1. Ամիսաբիւն. Տնացին դեղերի մէջ ամենից աւելի գործածականը ամուլ կնոջ սեռական մասերի սրբելն ու հոգութիւն (ԾՆՀԱ) կտրելն է: Նոյն միջոցն են գործ դնում և մալերի վերաբերմամբ:

2. Այրուածք. «Օնճուռի» *) արմատը հանում են գետնից, մաքրում, լուանում են վրայի հողն ու կեղելը, միջից ճեղքում, կիսում, անլի խղով տապկում և ասպա քսում այրած տեղին:

«Մլուռի» **) տերեւները չորացնում, բարակ փոշի են անուա, ապա ցանում այրուած տեղը, առաջուց այրուածքի վրայ անլի իւղ քսելով, որ տերեւները չը կպչեն ու չը ցաւեցնեն: Զէթի հետ խառնում են քիչ չը հանգած կիր ու քսում: «Երա» (բրդէ) կտորը այրում, մոխիրը խառնում են ձուի գեղնուցի հետ ու քսում:

Եթէ ոչինչ չը լինի, քսում են միայն կարագ. իսկ եթէ այդ էլ չլինի, աղի իւղը գցում են ջուրը, որ աղը դուրս տայ, ապա հալում ու քսում: Իսկ տաքութիւնն ու կսկիծը պակսեցնելու համար քսում են պաղ բաներ, ինչպէս՝ սառը ջուր, թանաք, մածուն, թան և այլն:

Մի քանիսն էլ փորձել են, որ նաւթը թէւ սկզբում մի քիչ վառեցնում է այրած վէրքը, բայց շուտ է լաւացնում:

Ելքած մասը պէտք էլ փամթաթել. յրախից ու դրսի օդից ազատ պահել. դեղը քսել, բայց չը կապել. ինչքան կարելի է՝ օջախին մօտիկ կենալ, որ տաք մնայ, ցուրտը չը դիպչի:

3. Առարածաւ. Առամի ցաւի համար բոլոր յայտնի դեղերին ա-

*) Խոս է, ճանապարհի ափերին է բուսնում, սովորաբար՝ ոտք չը կոխած տեղերը:

**) Խոս է, տերեւները ձմեռն էլ կանանչ են մնում. չեն թափուում մինում է աւելի կաղնի թփերի տակին:

ուանձին նշանակութիւն չեն տալիս, թէւ գործ են ածում: Ամենաարմատական միջոցը համարում են ուղղակի քաշել-հանելը: Ցաւը մեղմացնող և մասամբ կտրող դեղերից գործ են ածում.

Մեխակի իւղը, բամբակի վրայ կաթեցրած, դնում են ցաւած ատամի վրայ:

Բերանն օղի են առնում, մի քիչ պահում ցաւած ատամի կողմը և ապա թափում. այդպէս այնքան կրկնում են, մինչև որ ցաւը կը թմրի:

Ամենաազգու դեղը համարում են գոմէշի մէզը, որ օղու պէս բերանն են առնում և մի քիչ յետոյ թափում:

4. Գլխացաւ. Աղը ծեծում, բովում են, յետոյ տաք-տաք՝ կտրի վրայ ցանում, փաթաթում են ճակատին:

Աղն ու մխորը ծեծում, խառնում են, գլուխն ածիլում և աջիլած տեղը դնում:

Քացախի «մէ՛րուտը» (մակարդը) շորով ճակատին են կապում: Ճակատից կամ քթից արիւն են քաշում:

Գլխին դնում են «մուցօմը» (մոմը քամելուց յետոյ մնացած տակիչքը):

5. Գող.—Ամենայալտնի ու տարածուած դեղը՝ լսինին է:

Ասում են, որ 20 հատ եղունգի կտրած ծացրեր շան մազի հետ միասին կրակի վրայ դնել, ացրել ու ծխից հոտ քաշել տալ հիւանդին՝ օգուտ է:

Եթի ասում են, թէ դողը կտրելու համար շատ օգուտ է մէզ խմելը:

6. Լուծը կտրելու համար, թէ որ երկար է քաշում և ինքն իրան չի կտրվում, տալիս են բրնձի ջուրը. ուտեցնում են հին, մի քանի տարուան կաղինը. հոնի չորը եփում, ջուրը խմեցնում են:

7. Խարանացաւ («սրտի Է՛րիլը», ոչկօրա): Անանուխի կաթիլներ են խմում:

8. «Խուռունջ». Միակ ու ամենաազգու միջոցը ասղելն է: Որտեղ որ ցաւում է, ուղղակի ասեղ են կոխում. ցաւը չի խմացվում, խկոյն անցնում է:

9. Կապոյ հազ—«կօկիծ»: Դրա դէմ միակ և ամենալաւ դեղը իշի կաթ խմելն են համարում:

10. Կատղած ռան կծածը. Դրա դէմ միայն մի միջոցն են դործնում, այսպէս կոչուած—«փայփըրլօմա»: Այդ միջոցի հութիւնը կախանում է մասամբ կախարդական, մասամբ էլ բժշկական գործողութեան մէջ: Այդ բանը ամենքը չեն կարող անել. դրա համար մասնագէտ հէքիմներ կան: Հէքիմը հիւանդին առանձնացնում է մի սենեակում,

նրա վրայ և այլ կարդումներ անում, ի հարկէ միայն իրան հասկանալի լեզուով, և ապա նրան սաստիկ քրտնեցնում է: Նրա կարգումներին ոչ մի նշանակութիւն չը տարով, մնում է ենթագրել, որ քրտնեցնելը այսպէս ժիշտ այնպէս բարերար ազդեցութիւն է անում հիւանդի վրայ՝ քանի որ, ինչպէս հաւատում են ամենքը, «փայտրումին», ենթարկուած կատղած շնից խածուած հիւանդները համարեաբոլորն էլ ապատուել են:

11. Կարինի կծածը. Կծած վէրքի վրայ մարդու աղբ են դնում տաք-տաք: Կնոջ կաթ են խմեցնում: Կաթի մէջ ձծումք խառնած դնում են վէրքի վրայ: Վերցնում են մի քանի կարին, շող երկաթի վրայ այրում և ապա ցանում կծած տեղի վրայ: Փորձել են, որ մէջ խմեն էլ է օգնում: Կարին են բռնում, շշի մէջ դցում, վրան ձէթ լցնում, և պահում, կարին կծած ժամանակը բանեցնում, ձէթը քսելով վէրքին:

12. «Կեծուկ» (բերանի դրսի խոց). «Զախմախով» խոցի վրայ կայծ են հանում. խոցը կորչում է:

13. Կողիի ծակոց. Աղը կամ թեփը տաքացնում, դնում են կողքին:

14. Կորուած վերք. Բացի մի քանի տեսակ «մհոմներից» զործ են ածում «եարաօթի» կոչուած խոտի տերեւները. դնելուն պէս՝ շուտով բերանը կապում, լաւացնում է: Վէրքի բերանը կապելու համար նոյնպէս կարած տեղին դնում են թութունի տերև:

15. Հազ. Հասարակ կամ սալէպի թէյ են խմում:

16. «Հաւաս». Ազդ հիւանդութեան դէմ շատ տեսակ գեղեր ու միջոցներ են դործ դնում. մէկը չէ օգնում, միւսն են անում: Եղի սեսնում են, որ տաք քրտնեցնող, գեղերով հիւանդը չի լաւանում, դիմում են զովացնող, պաղ միջոցներին: Ամեն հիւանդութիւն միակերպ ընթացք չի ունենում. կաց հիւանդ, որ տաքով է լաւանում, կաց՝ որ պաղով: Ամենից առաջ հիւանդին աշխատում են մի կերպ քրտնեցնել: Դրա համար այս միջոցներն են դործ դնում.

Մեղք են քսում հիւանդի մարմնին, ցետոյ առնում են նաշագիրը ծեծում ու ցանում քսած տեղերին, ապա լաստենու կամ «ջրխմի» (դդմի մի տեսակ է) տերեւները ցանած տեղերի վրայ դնում, հիւանդին անկողնում տաք-տաք փաթաթում, որ քրտնի: Զատ անդամ էլ նաշագրի հետ օղի են խառնում, այնպէս քսում, որ աւելի ազդէ: Երբեմն էլ իրան, հիւանդին, մի քիչ նաշագրի են խմեցնում, որ «ցաւը դուրս քաշէ»:

Աչքը մորթում են և չը սառած հիւանդին մերկացնում, տաք-տաք մորթու մէջ փաթաթում են. հանած ուղեղն էլ ճակատին դընում, իսկ փորոտիքը ոտներին կապում:

«Օնճուռի» կամ լաստենու տերեւները կրակի վրայ խաշում, բերում լցնում են հիւանդի վերմակի տակ, հիւանդին վրացից տաք-տաք ծածկում:

Թանձր աղացրում մի շապիկ են թրջում, հիւանդին հագցնում, 3—4 ժամ թողնում, որ քրտնի:

Կամ թէ վերցնում են աղը ծեծում, մեղլով շաղում ու հիւանդին կիրանդին քսում. քսած տերեւներ դնում և տաք վերմակով ծածկում:

Գաղջ սապնաջրում թրջում են սաւանը և փաթաթում նրանով հիւանդին, կրկնելով այդ միքանի անգամ ամեն ցամքելուց յետոյ,

5—6 ժամ շարունակ:

Վերջապէս երբ ոչ մի կերպ չեն կարողանում քրտնեցնել, հիւանդին դնում են ուղղակի մի քիչ հովացած փուրը, ուր մնում է մինչև քրտնելը և կամ ինչքան որ կը դիմանայ:

Եթէ այս դեղերով հիւանդը չի քրտնում, սառը միջոցներն են գործ դնում:

Հիւանդին ուղղակի «կօլն» (կանգնած ջրի փոս) են դնում, կամ մի փոս են փորում, լաստենու տերեւները կարտում, տակն են լցնում, հիւանդին վրան պակեցնում, մէջը ցես ու վայրի եփած լինձոր լրցնում, վրան էլ ջուր, որ մարմնին ծածկուի և թողնում այդպէս՝ ինչքան որ կը դիմանայ: Տեղն ու տեղը քացախ էլ են խմեցնում:

Վայրի խնձորը ճղում, ոտն ու գլուխը փաթաթում են: Աղն ու սխաղը ծեծում են, հոնի ծառի տակի հողի ու մածնի հետ շաղփում, խառնում են և դնում հիւանդի ճակատին, մէջքին ու ոտներին:

Թեղձի ծառի տակի հողը քացախով շաղփում, փաթաթում նրանով հիւանդի ածիլած գլուխը, մէջքն ու ոտները:

Մոշը ժողովում, ջուրը քամում, եփում են և սառչելուց յետոյ հիւանդին խմեցնում:

17. Ճինու. Դրա դէմ միայն խօրասան են գործածում:

18. «Մեշրմուկ»: Սա մի տեսակ ցաւ է, որ մատների արանքում է լինում. այդ տեղերը սաստիկ քոր են գալիս ու ճեղքիւմ են: Դրա դէմ այս միջոցն են դործ դնում. մատների ճեղքած տեղը վերցնում մի ոցիլ են դնում. քորը անցնում է ու լաւանում:

19. Միզակապուրիւն. Եթէ մրսելուց է լինում առաջ եկած, վերցնում են դդումը կաթով եփում և տաք-տաք դնում փորի ներքեւ, միջատեղի վրայ: Եթէ դդում կը գտնուի, կարելի է շնել ալիւք, բէ կամ թիփէ „ճաշ“ (խաժի) և տաք-տաք կացնել փորի ներքեւ:

Լաւ դեղ է համարվում նոյնպէս մաղբանուր, նրա արմատը փում, ջուրը խմեցնում են հիւանդին, իսկ մաղբանուն էլ խաշում,

դնում են միջատեղին: Առհասարակ այդ հիւանդութեան դէմ տաք-խաշիլ պէտք է գործածել:

20. Մկնդեղից բռնաւորուիլ. Հողը փորում, թունաւորուած մարդուն մերկացնում, մէջն են դնում մինչև զլուխը. Հողը թոյնը դուրս է քաշում մարմնից:

21. Ասկրացաւ. Դուրս ընկած կամ կրտրած ոսկորի համար նոր տրեխցու կաշին եփում են թանձր աղաջրում, ապա փաթաթում ցաւած տեղը և ամուր կապում:

22. „Տալաղ“ (փայծաղի ուռուց): Մեղր ու կիր իրար հետ շաղախում, դնում են ուռած կողմը մինչև ուռուցքի անցնելը:

23. Փորէ ցաւ եւ „սօնջու“: Սովորական հասարակ փորի ցաւի համար լաւ դեղ է համարվում օղին:

Լաւ է նոյնպէս ոտները տաքացնել, տապանները դէմ տալրպ կրակին:

Փորի ցաւի համար արջի լեղի էլ են գործածում:

Սանցուի համար վերցնում են հաւի լեղին, մի գդալ ջրում խառնում ու խմում:

Կիր վերցնում են գետափից երկու մանր քար («չայդաշի»), մէկ-մէկ թրջում ջրում և պորտի վրայ կապում:

24. «Քարկեխս». Սա էլ ոտների մի տեսակ ուռուցք է, որ լինում է սովորաբար բութ մատին կամ կրնկին մօտիկ: Պէտք է փլցնել և տաք բանով դաղել: Ապա պէտք է դդուշանալ, որ ջուր ըլ դիպչի:

25. „Քեօր“ (երեսին կամ զլխին դռւրս տուած ցան): Դրա դէմ միքանի տեսակ դեղեր են անում: Վերցնում են կրակի վրայի մոխիրը, հետո միքիչ անլի իւղ խառնում ու քսում խոցին:

Կապոյա քարը («գեօգգաշի») ջրում հալում, բաց են անում և ապա ծօտով քսում ցան եղած տեղին:

Սիմինդրի հատիկը երկաթի վրայ չորցնում են, ապա մի ուրիշ երկաթէ բանով նրան սղմում, միջից իւղ են հանում և տաք-տաք քսում են ցան եղած տեղին:

Երեսին դուրս տուած ջրջրուկ խոցերի համար գործ են ածում աւելի կարմիր սնդիկի օձելիքը:

26. Թձի կծածը. Կծած տեղից վեր կապում են, վէրքը դաղում: Պաղ բաներ են քսում՝ մածուն, ցեխ, թան: Վէրքից ճծում են, կամ թէ՝ գորտ կամ հաւ են դնում վէրքի վրայ, որ միջի թոյնը դուրս քաշէ: Նոյնպէս „սիրող“—պատառուկ խոտից բերում խաշում են և տաք-տաք դնում վերմակի տակ կծած անդամի շուրջը, սաստիկ քըրտնեցնում:

II. Մալերի հիւանդուքիւններ.

1. Գայլի կծածը. Խողկաղնի ծառի կեղեր մանր կտրտում, ջրով եփում են այնքան, որ թանձրանայ. Եփելուց յետոյ՝ ջուրը քսում են կծած վէրքին:

Խոզի ճարալը հալում են և տաք-տաք դաղում վէրքը:

2. Մալի ոչոտիլը. Ոչոտիլը սովորաբար պատահում է փոքրիկ հորթ երին ու կովերին, մանաւանդ ձմեռը՝ գոմերում երկար պահելուց յետոյ: Եթէ երկար շարունակուի, մալը կը նիհարի և կարող է մինչև անզամ սատիկի: Եթէ քիչ է ոչիլը, թութունը ջրով եփում են և նրա ջրով մալին լողացնում: Խոկ թէ շատ և վատ տեսակից լինի, (սե), մենակ թութունի ջուրը չի օդնիլ՝ հետո մի քիչ մինդեղ ախտի խառնել:

3. „Չօնգ“. Ծցդէս են կոչում այն հիւանդութիւնը, որ ստանում են մալերը մրսելուց յետոյ: Մալը ախորժակ չի ունենում, չի ուտում, տրամադրութիւնը կորցնում է, հայեացքն ու արտայալութիւնը տիսուր են երեւում, հետզհետէ ոյցից ընկնում, նիհարում է: Ծցդ նշանները տեսնելուն պէս, զիւղացին խակոյն կասի, որ մալը մրսել է, «չօնգ» է բոնուել: Առաջին և միակ դեղը արիւն առնելն է: Մէջքի վրայ յատուկ տեղից միքիչ կտրում են, միքիչ պոչից խազում, քիչ-քիչ էլ ոտներին, կճղակների մօտից են կտրում, և թէ որ արիւն քիչ-քիչ էլ ոտներին, կճղակների մօտից են կտրում, և թէ որ արիւն զ դուրս գալիս, դրանով վերջանում է բանը. մալն աղատվում է: Եթէ «չօնգ» լինի բռնուած, կտրելուն պէս ուղղակի արիւն չի դուրս գալ. մինչեւ առողջ մալին երբեկցէ ոտներից էլ կտրէք, խակոյն արիւն դուրս կը գայ: Պէտք է աշխատել, որ անպատճառ արիւն դուրս գայ. դրա համար կտրելուց յետոյ, ձեռքով այնքան քաշքըռում, տրորում են կտրած կաշուի բերանը, մինչև որ արիւն է երեւում: Արիւնը դուրս գալուց յետոյ՝ մալը լաւանում է: Երբեմն կտրելը կրկնում են, եթէ առաջին անդամ լաւ կտրած չին լինում և կամ թէ՝ չի օդնում:

4. „Սիմնկիլ“. Երբեմն մալերի փորի տակից, ծծի մօտիկ սնկանման մի աւելորդ ու վնասակար միս է գոյանում. որ եթէ թողնուի, ինքն իրան կամի, կը մեծնայ, մալին մնաս կը տայ, ծծերը կը փշացնի: Դրան սիմնկիլ՝ են սառում: Աւզզակի կտրում են. մէջը կաղնի պէտքորիկ բազմաթիւ խուլեր կան. մէկ-մէկ հանում են և վերջը տաք-տաք երկաթով դաղում:

5. „Քեօր“. Մի տեսակ վարակիչ ցաւ է, որ աւելի պատահում է հորթ երին և գալու է տալիս մարմնի ամեն աւելի զիսին՝ դնչի մօտերքը: Դրա համար՝ խոցի վրայ ճծումբ հանում և տաք-տաք երկաթով դաղում: Խոկ թէ բերանում դուրս տուած լինի, եղունգու կամ դամսակով են կտրում:

6. „Քօթան“։ Մի տեսակ ուռուցք է, որ գուրս է տալիս մալերի մարմնին։ Դրա ամենալաւ գեղն է՝ ծծմբի „մուշամբա“ փաթաթելլ. ծծմբած կտորը – „մուշամբան“ մոմի պիչս, նեղ-նեղ կտրտում են և ուռուցքի չորս կողմը դնում. դրանց մէջտեղն էլ ուրիշ նեղ ու կլոր „մուշամբաներ“ են դնում և յետոյ վառում, ուսուցքը այրում։ Վերջը մի տախտակի կտորի վրայ մեխեր են ցցում և նրանով խփում մէրքին, արիւն հանում։

Ահա եւ միշտնի նախապատճանողական միջոցներ

Ընկրենու տակ նստելլ վնասակար են համարում. օդը կարող է գիշացել, կամ՝ ինչպէս իրանք են ասում, „հաւան չալմիշ կընէ”։ Դրա համար՝ նախապէս ծառից մի փոքր ոստ են կտրում տերևներով և դնում ճակատին, ֆէսի տակից։

Արիւնի ապականութեան և առհասարակ արիւնը մաքրելու և կազմուրուելու համար ընկղենու տերևները ջրով եփում են և առաջուց-իրիկուն ջուրը խմում են:

Ատամը չը հարելու համար պէտք է „ինֆորմ“ (խոտել—պարունակը) ծիլը ծամել:

Քարունակ կաթ ուտելը լաւ չեն համարում. ասում են, որ ճի-ճուռ կը գոյացնէ: Նոյնն են ասում և խակ սիմինդր շատ ուտելուն համար:



ԱՐԵՎ, ԹԱՂԳԻՄՆ ՈՒ ՄԵՇԵԼՈՅ

Արանք էլ են հաւատում, թէ մարդու մահուան օրը նախապէս որոշուած ու գրուած է ճակատին, և որ ոչինչ չի կարող հեռացնել կամ մօտեցնել նրան։ Ընդունում են նոյնպէս, որ ամեն մի մարդ մի աստղ ունի երկնքում, երբ օրը գալիս է, աստղն ընկնում է և մարդն էլ մեռնում։

Մեռնելու ժամին, եթէ մեռնողը բարի է, բարի հրեշտակն է գալիս, իսկ թէ չար՝ չարն է գալիս հոգին առնելու: Բարի մարդը հանդիստ ու թեթև է հոգին աւանդում, իսկ չարը դժուար ու տանջուելով:

Երբ մէկը մեռնում է, տանը իրարանցում է ընկնում.
տնեցիները սաստիկ լաց ու կոծ են բարձրացնում. հարևաննե-
րը գալիս մեռելի երեսը ուղղում են դէպի արևելք, շորերը
հանում, աչքերը ծածկում, ձեռքերը կրծքին խաշաճեւ ծալում,
ապա լողացնում և պատանքի մէջ փաթաթում:

Մեռելը նոյն օրն և եթ թաղում են, առանց օրերով
սպասելու, աշխատելով արևը մայր չմտած՝ մեռելը հողին լանձ-
նել:

Սովորաբար մեռելը դնում են «ճաղբի» (նաժ) մէջ, գաղաղ չեն շինում: Թաղելու ժամանակ՝ մեռելը «ճաղբից» հանում են և այնպէս են դնում, «ճաղբը» թողնում գերեզմանի թմրին: Մեռնողների համար յատուկ պատարագ չեն անել տալիս: Տան կարգը կատարելուց լեռոյ, ուղղակի տանում են տալիս, գերեզմանատուն, երբեմն միայն առաջ եկեղեցի են տանում, բայց էլի պատարագ չեն անել տալիս. մի «հոգւոց» էլ այն-տեղ են առում և ապա այնտեղից տանում հանգստարան:

Մեռելի լողացրած տեղը ոչ մոմ են վառում, ոչ կանթեղ,
ոչ էլ վերցնելուց յետոյ քար դնելու սովորութիւնն ունին:
Նոյնպէս չկան նրանց մօտ յատուկ հրաւիրուած լավան

կանալք: Բարձր ձայնով լալիս են աւելի մօտիկ ազգականները, իսկ սովորաբար ցածր ձայնով բոլոր կանալքն էլ լուիկ, մնջիկ մասնակցում են: Նրանց կանալք մինչև գերեզմանատուն հետները գնում են. սպասում են մինչև մեռելի հողի մէջ դնելը, ապա վերադառնում են, առաջուան պէս ամբողջ ճանապարհին, մինչև տուն հասնելը, լաց ու կոծ անելով:

«Ճաղբը» տանում են ձեռքերով մի քամի հողի, ճանապարհին շուտ-շուտ փոխուելով: Ամեն մէկը իր պարտքն է համարում մօտենալ «ճաղբին» և օդնել տանելուն:

Սովորաբար նրանց մօտ գերեզման փորում են հարեւանները, ձրի: Փորում են սովորական խորութիւնով ու լայնութիւնով. մօտ 2 արշին խորը և 1 արշին լայնութիւնով, նա-յած տակի հողի յատկութեան ու շերտին:

Մեռելը գերեզման դնելուց առաջ ազգականները մօտենում, համբուրում են ու լաց լինում: Յետոյ հանում են «ճաղբից» և այնպէս իջեցնում հողը: Քահանան օրհնում է հողը մօտիկ ազգականի ձեռքում և զցել է տալիս գերեզմանի մէջ: Նրան հետևում են բոլոր յուղարկաւորները, մի-մի բուռ հող զցելով մեռածի վրայ, ասելով «Աստուած օղորմի Հոգուն»: Գերեզմանը հողով լցնելուց իտոյ, վրան թումբ են շինում, «ճաղբը» վրան թողնում:

Թաղման կարգը կատարելուց իտոյ բոլոր յուղարկաւորները նստում են գերեզմանին մօտիկ, ննջեցեալի տնից բերած հողեհացը ուտելու: Հոգեհացի համար առանձին մեծ պատրաստութիւններ չեն տեսնում. ոչ եղ են մորթում, ոչ էլ ոչ-խար: Տանում են ինչ որ իրանց տանը գտնուում է. շատ-շատ զրսից բրինձ են առնում, փլաւ եփում, հասարակ կամ կաթով, հետը վերցնում մածուն, ձռւածեղ, բարակ հաց՝ եթէ ուտիս է, իսկ պասին պաստց բաները՝ թթու, սոխ, լոբիս և աղն. զինի ու օղի չեն առնում: Հացն ուտելուց իտոյ ցրւում են ամենքը, կրկնելով իրանց օրհնութիւնը մեռածի հոգուն, և միխթարելով մնացողներին, գնում են իրենց զործի, զրանով էլ վերջանում է ամեն բան: Այնուհետև ոչ գերեզման են զը-նում-գալիս. ոչ առաւոտ-իրիկուն մինչև ութ օր եկեղեցի,

ոչ գերեզմանից հող քոել և աղն: Մարմինը հողին յանձնելուց յետոյ սովորաբար ամեն բան վերջանում է, միայն Տրապիզոնի մօտերքից եկած զիւղացիներն են, որ թաղելուց յետոյ էլի մի երկու-երեք օր առաւոտները գալիս այցելում են գերեզմանը, լալիս, աղօթում, խունկ ծխում, ննջեցեալին լիշում և նորից տուն գնում, միւսները այդքան էլ չեն անում:

Համշէնցիների սովորութիւնով գերեզմանօրհնէք կամ մեռելոց կատարում են տարին մէկ անգամ, Զատկի շաբթին, սկսած երկուշաբթի օրից մինչև Նոր կերակին: Այդ շաբթին ամեն մի զիւղ ջոկ-ջոկ մեռելոց է անում, և որովհետեւ ամեն մի զիւղ մեռելոցի հանդէսին միս զիւղերից գնացողներ են լինում, զրա համար մօտիկ զիւղերը առաջուց իրար մէջ որոշում են մեռելոցը կատարելու օրը, այնպէս որ իրար չեն խանգարում: Մեռելոցը մեծ հանդէսով են կատարում. այդ օրը ամեն տնից կերակուր է գնում եկեղեցի, կաթ, մածուն, փլաւ, ձուածեղ, խմորեղին և աղն, ինչ որ գտնում է զիւղում: Կէսօրին մօտիկ քահանան տիրացուներով գնում է հանգստարան, չորս կողմը դառնալով միանդամից օրհնում է բոլոր մեռելներին, և ապա գալիս է, սեղան են գնում. բոլոր ուտելիքները մէջտեղն են բերում: Քահանան օրհնում է և բոլորը միասին նստում են հացի, տղամարդիկ առանձին, կանալք առանձին: Ճաղբից իտոյ երբեմն գոտեմարտ են անում կամ նուագում, պարում են և ապա երեկոյեան ցրւում տները:

Մեռելների վերաբերմամբ կան հետևեալ նախապաշարումները:

1. Նոր փորած գերեզմանի հողը եթէ շուտ իջնի, հաւասարուի, նշան է որ մեռելը արդար է եղել:

2. Կատուն որ մեռելի վրայից անցնի, մեռելը «Խօրթաղ» կը դառնայ:

3. Սպանուածի հոգին իսկայն ուղղակի տեղը չի հասնում, սպասում է մինչև նախասահմանուած ժամանակի լրանալը, որ նշանակուած է եղել սպանուողի կեանքի համար: Երբ խը-փում է այդ ժամը, նա էլ այն ժամանակն է տեղը գնում:

4. Երբեմն հիւանդի համար կարծում են, թէ մեռելից վա-

խած կըլինի: Այդ տեսակ հիւանդին տանում են հանգստարան, նրա շուրջը Յ անգամ ման բերում և Յ անգամ ծունք չոքեցնում, ասել տալով «իմ ցաւից դուք առէք, օր ես պէտքընօմ» (լաւանամ):

5. Մեռելատանը մինչեւ մէկ տարի ոչ թուխս կը դնեն, ոչ շերամ կը պահեն: Թիստի տակից ելած ձագերը գետինը կը փորփորեն և փորած հողը մեռելի աչքերը կը լցուի, իսկ շերամի քաշած թելը աչքերը կը կապէ, երկու դէպքումն էլ մեռելը հանգիստ չի լինիլ:

6. Յուղարկաւորութեան միջոցին եթէ մեռելի վրայ անձը կաթէ՝ 40 օր անձրեւ կը դայ:

7. Մեռելից էլ կարող է «կեօխ» լինել: Եթէ մէկը նոր ննջեցեալի տնից մի ուրիշի տուն է դնում, անպատճառ նըրանց կ'զգուշացնի, որ վեր կենան ոտի կանգնեն: Առաջ եկաղը պիտի նստի, յետոյ անեցիք. թէ չէ տնեցիք բոլորն էլ կը հեւանդանան, «կեօխ կը բռնուեն»:

8. Երաշտի ժամանակ անձրեւ բերելու համար, կտրում են մի նոր մեռելի գլուխ, ամուր թուկավ կապում են և դցում ծովը. բայց գլուխը ծովում չեն թողնում, թէ չէ սարսափելի հեղեղ կը դայ:

9. Մի աղբեւրից թէ որ երկու հողի միասին ջուր խմեն, միաժամանակ էլ կը մեռնեն:

10. Նոյնպէս միասին հաց ուտելիս՝ վերջացնելուց յետոյ գգալները իրար հետ միաժամանակ պէտք չէ ցած դնել, թէ չէ միաժամանակ էլ կը մեռնեն:

11. Տնից փայտը ուսին դուրս գնալը լաւ չէ. տնից մեռել կը լինի:

12. Տան չորս կողմը որ պտոյտ դան, հայրն ու մայրը կը մեռնեն:

ՀՈԴՈՒ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԸՆՔԻ ՄԱՍԻՆ

Համշէնցի հայր ընդունում է, որ մալն էլ մարդու պէս հոգի ունի. մալը որ հոգի չունենար, ինչպէս պէտք է ապրէր: Կա մալերին և առհասարակ կենդանի արարածներին ան-

շունչ ու անշարժ էակներից ջոկելու համար դործ է ածում ուղղակի «հոգըւեօր մալ» խօսքը, որ հաւասարապէս վերաբերում է թէ մարդուն և թէ կենդանիներին: Հոգի ասելով նա հասկանում է այն շարժումը, եռանդն ու կենդանութիւնը, որ յատուկ է բոլոր կենդանի էակներին: Բայց այն կենդանութիւնը նա ընդունում է ոչ թէ իբրև ամբողջ օրդանիզմի, կեանքի գործունէութեան հետևանք, այլ հակառակ՝ այդ կեանքն ու արարածների գոյութիւնը նա ընդունում է ինչպէս հէնց այդ օրգանիզմի մէջ ապրող ու պահուած, անտեսանքն էլ ոչնչանում է, գոյութիւնը գաղարում: Այնքան որ մարդու և մալերի հոգու մէջ այս տարբերութիւնն է դնում, որ մալերի մեռնելուց յետոյ, նրանց հոգին դնում, կորչում է, անասնի հետ ուղղակի մեռնում է, մինչդեռ մարդու մեռնելուց յետոյ, նրա հոգին չի մեռնում, կենդանի է մնում, մարմնից բաժնը ուած ապրում է իր համար նշանակուած տեղում, սպասելով վերջին դատաստանին, Քրիստոսի գալստեան, որ մարմնի հետ միանալով, միւս աշխարհում տուանայ իր հատուցումը:

Նա հաւատում է, որ այս աշխարհից գուրս կայ ուրիշ աշխարհ, յաւիտենական հանդերձեալ կեանք. և իր կեանքի նըրանպատակն է ապրել այնպէս, որ միւս կեանքում արքայութեան արժանանայ: Գա այն տեղն է, որ նշանակուած պահուում է բոլոր արդարների համար: Նրան ասել են, որ այս աշխարհում բոլոր նեղութիւն, աշխատանք, տանջանք ու հալածանք քաշողները—միւս կեանքում խաղաղ ու հանգիստ կեանք են անցնելու, առանց արևի ու ցրտի տակ տանջուելու և մի կըտոր հացի համար ողջ տարին հողի ու քարի հետ կառուելու: Եւ նա սպասում է միամիտ սրտով, անշէջ յոյսով, այդ յաւիտենական հանդստին, երբ պէտք է վերջապէս վերջ տրուի նրա չարքաշ կեանքին, հանդիստ կեանք սկսուի նրա համար առանց հացի համար կիսամաշ մտածմունքների:

Դրա համար նա այս աշխարհում օր առաջ պատրաստում է. իրան մաքուր է պահում, աշխատում է քիչ հայհուել, թէւ անիծած հողի գործն այնպէս է, որ եթէ չը հայ-

Հոյի, գործը առաջ չի դնալ։ Տանեցոյ «չը քՓրի» ծուլութիւն կանեն, բան չեն անիլ։ մալին կը հայկոյէ առաջ չի դնալ։ Ինչ, արած։ ինչքան կարող է իրան զսպում է, մեղանչած ժամանակն էլ մատաղ կանէ, Աստծու հետ կը հաշտուի, տէրտէրին «թարախ» կը տայ, խունկ ու մոմ կը վառէ, սրբերին կը դիմէ բարեխօսութեան համար, «ծունր»—աղօթքը անպակաս կանէ, կը զղջայ, սրբութիւն կառնէ իր ժամանակին և վերջապէս տէրտէրից ու պապերից լսած ու իմացած օրէնքները կը կատարէ, որ չը լինի, թէ դժոխքի բաժին դառնայ։ Նա շատ է վախենում դրանից. այս կեանքն ամբողջապէս աշխատանք-տանջանքով անցնել, վերջն էլ յաւիտենական տանջանք ժառանգ ժառանգել, — ով չի վախիլ։

Առեւնելուց յետոյ մարդուն միւս կեանքում մազէ կամըր-ջից անցկենալ կըտան։ Արդարը վրայից հանգիստ ու ժեղժե կանցնի, իսկ մեղաւորի անցած ժամանակ՝ մազը մէջտեղից կը կոտրի, մեղաւորը կընկնի տակը, ձիթով լիքը ամանի մէջ։ Ամանում ձիւթը մշտապէս եռ է գալիս. նրանում պիտի խաշ-խըշուի այնքան, մինչև որ ցորենի հատիկի չափ դառնայ. նոր մէկանց էլի սատանաների շնորհով—մեծանայ, առաջուան չափ դառնայ, էլի փոքրանայ ցորենի չափ և այդպէս անվերջ պիտի տանջուի—գէհէնի հուրի մէջ. դա է դժոխքը, կամ ինչ-պէս իրանք են ասում, «Քէհնամբ»։

Իսկ յակիտենալան արքայութիւնը — դրախտը մի հրաշա-
լի այգի է, լի մշտադալար ծառերով, ծաղկիներով ու քաղց-
րահամ աղբիւրներով։ Այնտեղ ոչ ցանում են, ոչ էլ հացի հոգս
քաշում. այնտեղ ոչ բանել կայ և ոչ էլ այստեղի պէս տանջ-
ուել։ Այնտեղ յաւիտենալան հանգստութիւն կայ. մարդու կեանքն
անցնում է ազատ ու իսպանդ Առողջու, նրա հրեշտակների և
արդար հոգիների հետ միասին։



ԱՃԽԱՐՀԱՅԵՑՈՂԱԻԹԻՒՆ

(Հաստիք, աւանդութիւններ ու նախապաշարումներ)

ԲՈՒՐԵԱՆ պահամուն

Համշէնցի հայը՝ ինչպէս բնութեան ծոյում և նրան մօտիկ ապրող մարդ՝ շատ տեղերի գիւղացիների պէս՝ աստուածացրել է ամբողջ բնութիւնը։ Նրա հաւատքի, հայեաց ըների ու աշխարհայեցողութեան մէջ արտայալուում է ինքը մայր-բնութիւնը իր խոր ու մութ անտաւներով, քչքչան աղբիւրներով, երկնքի լուսատուներով, վեհ ու խաղաղ լուսութիւնով և երբեմն էլ մութ, անբացատրելի խորհրդաւորութիւնով։ Գարեր առաջ նա ինչ հայեացք որ ունեցել է բնութեան վրայ, հիմա էլ նոցն է. էլի այն բնապաշտն է, բնութեան հարազատ որդին։ Կրօնը ոչնչով չի փոխել նրան, ոչինչ չի տուել նրան, բացի այն ծխական, ձևական կանոններից ու պատուէրներից, որոնք մինչև այսօր էլ նրա հոգու մէջ չեն մտել։ Գեռ մինչեւ հիմա էլ նորա հոգին կրթւում, ոնւում է բնութիւնից, նրա անմիջական աղքեցութեան ու խնամքի տակ։ Կա հիմայ էլ պաշտում, ծունը է դնում բնութեան առաջ։ Ճիշտ է, կրօնի աղքեցութեան տակ՝ նա ընդունում է բնութեան մէջ Արարքի գոյութիւնը, բայց այս էլ ճիշտ է, որ նա իր ամբողջ կեանքում այնքան Արարքին չի լիշտում ու չի դիմում, ինչքան իրան բնութեան։ Պութ գիշերներին նա լուսնեակին է ման գալիս,

նրան փառք տալիս, երաշտ օրերին՝ ամպերին է երեսը դէմ անում, նրանցից խնդրում զովարար կաթիւներ. երկար անձրւերին՝ ժամէ ժամ արելին է սպասում, թէ երբ պիտի վերջապէս ամպերի տակից դուրս գայ: Նա դրանցից, ինչպէս նաև կարկուտից, կայծակից, հեղեղից ու երկրաշարժից, աւելի շատ է վախենում քան իրա Արարչից:

Եթէ երեմն-երեմն Արարչի անունը տալիս է և նրա օդնութեան է դիմում, այդ էլ լինում է բնութեան արհաւիլք-ների ու աղէտների ժամանակ, երբ կամ ծանր հիւանդ է ունենում, կամ հեղեղն ու կարկուտն է դալիս, կայծակն է խըփում և կամ շարժ է լինում: Այդպիսի ժամանակ՝ երբ մոլորուած ու լուսահատ՝ աչքը չորս բաց է անում, թէ ումը դիմի, ումից օդնութիւն սպասի, միտքն է բերում Արարչին. Նրանց խնդրում դարձան իր ցաւին:

Նրա ընդունած Արարին էլ այնքան բարի չէ, ինչքան որ պէտք է լինէր: Ահեղ ու փոթորկալի բնութեան պէս, նա էլ երեմն ցասումներ ու պատիժներ է զրկում մարդկանց զլիին, նրանց պատժելու և խելքի բերելու համար: Կը համբերի, կը համբերի, բայց ձեռքից չի թողնիլ, մէկ օր ցոյց կը տալ իր զօրութիւնը: Նա այնքան էլ անսահման ներող ու բարի չէ. պէտք է միշտ ահը սրտի մէջ ունենալ: Եւ գիւղացին աւելի վախենում է նրանցից, քան սիրում նրան. նա իր զոհութիւնն ու խնդրուածքը միշտ էլ ահ ու դողով, զլուխը հողին ու քարին քսելով, գետին խոնարհելով ու երկրպաղելով է ուղղում նրան: Համշէնցիների բարբառում նոյն խսկ աղօթք բառի տեղ «ծունր» խօսք են բանեցնում: Նրանց բոլոր աղօթքները ծնրով են սկսում, ծնրով էլ վերջանում են: «Ֆունր» — աղօթքը նրանց համար պարտաւորական բան է դարձել. նա անպատճառ պէտք է «ծունր» անի, թէ չէ միւս կեանքում կըստիպին նրան շող քարի վրայ պակաս աղօթքներն ասելու: Նա զարմանում է, թէ ինչպէս կարող է մարդ չաղօթել, քանի որ թուչուններն անդամ աղօթում են: Գարնան՝ առաւօտները կամ երեկոները, երբ «պօրշուկները» (սարեակ)

ծառի վրայ նստած, սիրուն կերպով ծլվլում են, ասում են, որ նրանք էլ «ծունր են անում:

Երբորդութեան մասին քրիստոնէական հայացքը համշէնցի հայր ոչ զիտէ և ոչ էլ խելքը կը մտնէ: Նա ուղղակի մի Աստուած է ճանաչում՝ իբրև բնութեան Արարիչ, առանց որևէ անձերի: Քրիստոսին թէև ընդունում, պաշտում է, բայց ոչ իբրև Արարիչ, ոչ իբրև Աստուած՝ այլ իբրև Նրա Որդին, Նրանից փոքրը, աւելի մարդկանց զործերը դաստող և նրանց մեղքերը բաշխող: Բնութիւնը Արարչի ձեռքի գործն է համարում, խսկ մարդկանց չարն ու բարին, նրանց մեղքերը՝ Քրիստոսին է բաժին հանում: Սուրբ Հոգուն ոչինչ չի մնում, համշէնցի հայր նրան չի էլ ճանաչում. թէև «յանուն Հօրի» մէջ միշտ կրկնում է նրա անունը: Կրկնում է՝ բայց չի հասկանում: Մէկ անգամ նրանցից մէկին հարցնում եմ՝ թէ ինչ է հասկանում «յանուն Հօրի» խօսքերից: Նա մոլորուած կանգնում, ասում է, որ ոչինչ չի հասկանում. ասում է հէնց այնպէս, որովհետեւ սովորութիւն է. վերջը միամտաբար աւելացնում է՝ իբրև ուղում է ասել, թէ չօր Աստուածու Որդին սուրբ Հոգին է...

Դժբախտաբար նրանց լեռների, քարերի, աղբիւրների ու ծառերի պաշտամունքի մասին ոչինչ չեմ կարող ասել, քանի որ Կովկասեան ափերում նրանք հանդիսանում են իբրև գաղթական տարր և ոչ իբրև երկրի բնիկներ, որ մօտիկ կապեր հաստատած լինէին երկրի բնութեան, նրա սարերի և ձորերի, նրա ծառերի ու ջրերի հետ: Մնում է բաւականանալ այն աւանդութիւններով ու նախապաշարմունքներով, որ բերել են նրանք իրանց հետ հայրենական ափերից, և որոնք վերաբերում են բնութեան տարրերին ու երեւութներին և այն կենդանիներին ու բայսերին, որոնք իրանց այժմեան նոր տեղերում էլ կան:

II. Երկնի լուսատուներ եւ բնութեան երեւոյթներ.

Լուսինն ու արելը, ինչպէս որ շատ տեղի ժողովրդի մէջ, սրանց մօտ էլ անմարմին ու անշունչ չեն ճանաչւում: Արանք էլ են ընդունում նրանց իբրև հոգի ունեցող, շնչաւոր արա-

բածներ: Արանց մամերն էլ լուսնեակին և արևին իրար քոյրեղալը են ճանաչում, լուսնեակը տղայ, արեւն՝ աղջիկ: Լուսինը մեծ դեր է կատարում գիւղացու կեանքում, նրա հաշխւը նրան գուցէ ժամանակի ամսաթւց աւելի է պէտք դալիս: Կա լուսնի օրերի հաշխւը այնպէս դիտէ, ինչպէս ամսէ օրերինը, իսկ անգրադէտը հօ լուսնի հաշխւը աւելի հեշտ է պահում մտքում, քան ամսի հաշխւը: Ամսի հաշխւը հարկաւորում է նրանց գուցէ միայն նրա համար, որ իմանան, թէ երբ է պատը կամ իրանց մէջ շատ յախոնի տօնը և կամ սրբի օրը: Բայց պատնու սրբի օրը իմացնելը քահանայի պարտականութիւնն է. նրանից կիմանան եկեղեցում. դրա համար ինչ զլուխ յաւեցնեն: Միջեռ կեանքում, ամեն քալում, նրանց հարկաւոր է դալիս գիտենալ, թէ այս ինչ գործը երբ և ինչ ժամանակ սկսել, որ լաւ լինի և աջող գնայ: Լաւն ու վատը կախուած է լուսնի հաշխւց, այդ հաշխւը մեծ ազդեցութիւն ունի դորձի ապադալի վրայ: Կան չար ու բարի օրեր, ամէն զործի համար «ռաստգալու սհամ» կայ. լաւ և վատ. դրանց ուղեցոյցը լուսնի հաշխւն է:

Լուսնի օրերն է համրում գիւղացին՝ ցանք սկսելիս, ծառ տնկելու և պատուաստելու ժամանակ, ճանապարհ գնալիս, երազ տեսնելիս, նոր գործ կամ առուտուր անելիս և հարսանիք սկսելիս, պատկի վրայ էլ ազդեցութիւն ունի լուսնի որ երսրդ օրը լինելը: Լուսնի օրերի հաշով հետաքրքրում է ժողովրդի մեծամասնութիւնը: Ճատ անդամ և շատ շատերն են դիմել լուսնի քանի երրորդ օրն իմանալու:

Առհասարակ նոր լուսինն աւելի լաւ է համարում, քան կէսն անցածն ու հինը. լուսնի օրերի հաշով մէջ երեք հատինը կայ. այդ երեքն էլ վատ են (9. 19. 29.) այդ օրերին ոչ ցանք են անում և ոչ հարսանիք. լու չէ:

Լուսնի նորած ժամանակին էլ ցանք չեն անիլ. լաւ չէ. չի բուսնիլ, կը չորնայ:

Լուսնի նորին թուխս դնելը նոյնպէս լաւ չէ. բոլոր ճուտերը աքլար դուրս կը գան:

Կոր լուսնի առաջին չորեքշաբթին և ուրբաթը թուժուն չեն քաղիլ. լաւ չի չորնալ, խայտ կը մնայ:

Լուսնի 7-ին ու 9-ին մարդուց արձւն առնելը լաւ չէ. խելքը կը կորցնէ:

Թէ որ լուսնի 1-ին, 11-ին և կամ 21-ին ծառ պատուաստեն, նոյն տարին պտուղ կը տայ:

Լուսնի ինին ցոլեն կամ ինչ էլ լինի—ցանելը լաւ չէ. մուր կը բռնէ և լաւ բերք չի տալ:

Լուսնի ինին անտառից շէնքի փայտ կտրելն էլ լաւ չէ. ներսից կը ճիճւոտի: Լուսնի նորին էլ լաւ չէ կտրելը: Փայտ կտրելու ամենալաւ ժամանակը՝ երբ լուսնից մի չորեքշաբթի կամ ուրբաթ անցած լինի:

Դառի պատուաստը առաւօտն են անում, որ արեկի հետ մեծնայ, ճաշից յետոյ լաւ չէ անելը, պատուաստը վեր չի բարձրանալ, որովհետև արելը ցածանում է:

Արեկի մայր մտնելուց յետոյ մեռելը չեն թաղիլ:

Ահա և մի երկու աւանդութիւն արեկի ու լուսնի մասին:

1. Արեւն ու լուսնեակը իրար քոյրեղալը են: Մէկ օր մալրն ասում է նրանց. «գնացէք աղբեւրից ինձ ջուր բերէք. ծարաւ եմ. որըդ որ առաջ բերի, նրան պիտի օրհնեմ»: Երկուսն էլ վեր կենում, գնում են ջուրը: Եղբայրը քրոջից առաջ է անցնում և իր փարջը գնում է «վաքի» տակ, որ լցուի: Քոյրը յեաւելից դալիս, հասնում է եղբօրը և նրանից ծածուկ, նրա փարչի տակը ծակում: Եղբօր փարչը լցում է, բայց ճանապարհին բոլոր ջուրը գնում է: Քոյրը լցում է փարչը և գնում է, մօր օրհնութիւնը ստունում:

2. Արանք էլ են պատմում արեկի ու լուսնեակի հէքեաթը, որի մէջ արեւ-քոյրիկը յախոնում է իր վախը գիշերը ման զայու և մարգիանց լոխ տալու, որովհետև երբ ինքը ցած նալելիս է եղել, ամեն մարդ նրան է մտիկ տուել: Արեւն էլ զանգըտուել է մօրը, որի խօսքով այնուհետև սկսել է ցերեկները ման գալ և մօր տուած սուր-սուր ասեղներով ծակել իրան նայողների աչքերը:

3. Լուսնի վեաի մութ բծերը սրանք էլ բացատրում են

Նրա բարկացոտ մօր ապտակով, որ խմորոտ ձեռքով խփել է իր լուսնկայ տղի երեսին:

Երեխ ու լուսնի խաւարումը բացատրում են նրանով, որ մի վիշապ կայ. գալիս՝ աշխատում է բոնել նրանց, որ կուլ տայ: Հենց որ բոնելու է լինում, խաւարում է պատահում: Բայց երկար չի քաշում, լուսատուն նրա ձեռքերից պլծնում, փախչում է: Վիշապը ամեն օր լուսանալուն պէս, արշալոյսի հետ, հետեւում է արելին, որ բոնէ կուլ տայ. մինչի օրս չի կարողացել. մէկ օր պիտի դայ, որ կուլ տայ:

Աստղերի համար ասում են, որ ամեն մարդ մի ասող ունի երկնքում: Երբ մէկը մեռնում է, նրա աստղն էլ ընկնում է: Աստղերի մէջ նրանք աւելի լիշտում են Լուսաւտղ, Վեցուկ, Կշիռ և Բազուկ: Դրանց ծագելով ու դուրս դալով՝ խնանում են, թէ գիշերն ինչքան է անցել, ինչ ժամանակ է:

Պոչաւոր աստղի երեալը, արհաւիրքի նշան են համարում: Ասում են՝ մեծ աղէտներ են պատահելու, թագաւոր է մեռնելու և այլն:

Յարդգողի համար ասում են, թէ մէկ օր ջրաղացպանի մէկը գողցած ալիւրը տանելիս է լինում տուն. ճանապարհին թափւում է և թափածը երկնքի վրայ երեւում: Դրանք համշէնցիները յարդգողին «քշտումուալ» են ասում, որ բառացի նշանակում է՝ քրդի ամպ:

«Ամպորոտի» համար ասում են, թէ Աստծու եղներն են «պոլօքում» (բղաւում), իրար հարու տալիս ու կպչում:

Առաջին անգամ՝ գալնան, որոտի ձայնը լսելուն պէս՝ գգալը վեր են գցում. ընկնելիս թէ որ ըերանը վեր գառնայ՝ տարին առատ կըլինի. իսկ թէ որ ներքեւ՝ ըերքը քիչ կըլինի:

Տանտիկինն էլ առաջին որոտի ձայնն առնելուն պէս, իր ճկովթ մատի ծալըն է կծում, որ տարուայ մէջ խնոցին միշտ հեշտ հարուի:

Փալլակի համար ասում են, թէ երկրի վրայ մի մեծ ձուկ

կայ, վորի վրան մի փալլուն բան ունի. երբ մէջքի վրայ է ընկնում, նրա վորի գոյնից երկինքը փալլատակում է:

Կայծակի համար ասում են, թէ սատանի համար է իջնում:

Անձրևի ժամանակ եթէ կասկարանքը դէպի վեր կանգնեցնեն, կարկուտ չի լինիլ, և մէկ էլ՝ եթէ յորդ անձրև լինի, կը խաղաղի:

Կարկտի ժամանակ թէ որ Յ հատ կարկուտ կիսուի, կարկուտը կը կանգնի:

Քամու համար ասում են՝ եթէ նա երեար, բոլոր մարդկանց կը ջարդէր:

III. ԲԵՌԵՎԵԱՆ ՏԱՐՐԵՐԸ

(Հողը, օդը, ջուրը և կրակը)

Ահա մի քանի աւանդութիւններ ու նախապաշտմունք բնութեան տարրերին վերաբերեալ:

Հող: Բանելիս տրեխը մտած հողը պէտք է արտում թափուի, թէ չէ արտի «բէ՛րէ՛քէ՛թը» կը դնայ:

Քար: Միքիչ խելօքները կարծում են, թէ քարը հողիցն է եղել. շատերն էլ ասում են, թէ մի ժամանակ Աստուած թափել է անձրեսի նման: Կան ուրիշներն էլ, որոնք ասում են, թէ քարը առաջ ոչխար է եղել. վերջը Աստծու հրամանով քարացել է: Քարի մասին այս աւանդութիւններն են պատմում:

Աղամը որ հերկ էր անում, Աստուած մի քար ցոյց տուեց նրան արտի մի կողմը, իրեւ սահման, պատուիրելով, որ նըրանից գէնը չանցնի: Բայց նախամարդը այս պատուէրն էլ ըլ պահեց. քարի միւս կողմն անցաւ: Դրանից է մնացել սահմանն անցնելը:

Պատմում են էլի, թէ քարը մի ժամանակ մեծամտելով՝ այնքան է ուռել, մեծացել, որ մարդուն տեղ չի մնացել: Դրահամար Աստուած անիծել է նրան, և դրանից է որ հիմա անշարժ ու անխախտ մնում է իր տեղին:

Ձուր: Ջրի համար ասում են, թէ ձկան չի երևում. նրա համար է մէջը մնում:

Աղբիւրի համար ասում են, որ նա իր ջուրը մի գետից է քաշում:

Կրակ: Կրակը կայծակից է մնացել երկրի վրայ:

Կրակի վրայ ջուր չեն ածում և ոչ էլ փչելով հանդցնում. այլ ուղղակի մոխիր են ցանում վրան և տակը «կորիսում»:

Ով որ վախում է մի տեղ գնայլոց, ծոցը պէտք է դնի հանդած կրակ, կամ հացի ալրած «քերիջ» (կճիպը, չորը):

Սովորաբար կաթ եփելու ժամանակ, երբ «ջուկը» (պղինձը) կախած է լինում օջախի վրայ, կաթի տակից կրակ չեն տալիս. լաւ չէ. կաթի «բէ՛րէ՛քէ՛թը» կը պակսի, կամ թէ չէ՝ կովը «կակնըռէ՛» (աչքը կը դիպէ՛):

Ուրիշի տնից կրակ կամ խանձող բերելիս, պէտք չէ խառնել տան կրակի հետ, թէ որ օջախը վառ լինի. թէ չէ՝ տան «քէօվէ՛թը» ինտ կերթայ:

Մալիսին կրակի վրայ գրած կաթի տակը չեն փչիլ. մեղք է:

Մալիսին էլի՛ զբացուն կրակ տալը լաւ չէ:

Մեռելը լողացնելու համար անից կրակ վերցնելը լաւ չէ: Եթեխան որ մի տնից ուրիշ տուն կրակ տանի և ինքը վառի, լաւ չի լինի. այն տանը մեռել կը լինի:

Հառը թուխս գնելու ժամանակ՝ բոլոր ձուերը գնում են մաղի մէջ և օջախի շղթալի «կլմբուրի» շուրջը Յ անդամ պատեցնում, ասելով «բազըն տեսնուս՝ ծակը փախիր. զիափը (չախկալ) տեսնուս՝ ծառը փախիր» կամ թէ ուրիշ կերպ ասում են, «դիափին օր դար՝ ծառին ծէ՛րը՝ բազըն օր դար՝ պուլքը (թուփը)»:

Ելի թուխս գնելիս՝ մինչև ձագ հանելը, օջախում ձու «կորիսելը» (մոխիրի մէջ թաղել) լաւ չէ. ձագը կը կպչի կճեպին և չի լինի:

Մալի ոսկորը կրակը չեն զցիլ, թէ չէ մալը կը սատկի դրանցից:

Սերմացու «լաղտի» — սիմինդրի «կոթոլը» (զլուխը առանց հատիկների) չեն ալրիւ՝ հատիկը ցանելոց ինտոյ. թէ չէ՝

զլուխը հատիկ չի բերիլ. մուր կը դառնայ: Դրա համար «կոթոլները» տանում են մը խոզը տեղ թափում, ող մալը չը տեսնի ու չուտէ:

«Լաղտը» ցանելոց ինտոյ «փօթ» («բատի-բուտի») էլ չեն անում. թէ չէ՝ դլխելոց ինտոյ վրան «փօթի» պէս սուն: Կը տայ, կը փչանայ:

Ամանը ինտ առնելոց ինտոյ՝ թէ որ «կլմբուրը» (օջախի շղթան) շարժուի, պէտք է բունել ու կանգնեցնել. թէ չէ՝ տանտիրոջ պատոքը կաւելնայ:

Կասկարանքի վրայ նստողը շատ աղջիկ կը բերի:

Երեկոյեան մէկին թան տանելիս՝ թէ որ նործին կոլիցն է, մէջը հացի ալրած քերիջ կամ կրակած ածուխ են զցում, որ կովը «չակնըռէ՛»:

Ով որ թուչունի բուն տեսնէ և կրակի կամ ջրի մօտ մէկին ասի, բունը կը ճիճուտի, մրջիւն դուրս գայ, այն տան «բէ՛րէ՛քէ՛թը» շատ կը լինի:

Չար աչքը դիպածին — «ակնըռածին» ալսպէս են բժշկում:

Խոփի հետ միքանի ուրիշ կրաթեղէն կրակն են զցում, տաքացնում, վերջը հանում, վրաները ջուր լցնում և «ակնըռածին» դրանց գոլորշու վրայ կանգնեցնում, որ կուլ տայ: Դրան չամշէնցիք ասում են «խոփխաշ»:

Կալ ուրիշ միջոց էլ: Վերցնում են մէկ աման ջուր. մէջը զցում են միքանի կրակած ածուխ-«քեօղ». գոլորշին տալիս են «ակնըռածին», որ կուլ տայ. ջրից միքանի կում խմեցնում. մի քիչ էլ սրտին քսում. մնացած ջուրը լցնում են օջախի չորս անկիւնը, նրա միջի հանդած ածուխներն էլ մոխրաթաղ են անում օջախի չորս անկիւնում: Ամանն էլ շուռ են տալիս, տակն ու վրայ են անում. տակի երեսին մի կրակած ածուխ գնում և թողնում որ ինքն իրան մարի, մոխիր դրանցից դրանից ինտոյ չար աչքը կանցնի: Դրան էլ ասում են «կէ՛ծիաշ»:

VI. Բ ո յ ս ե ր .

Համշէնցիները սուրբ ծառեր չունին. ոչ էլ նրանց համար ուխտ գնալ կամ մոմեր վառել դիտեն:

Սրանք էլ են հաւատում, որ կայծակի ժամանակ՝ սատանան չուզենալով կրակի հարուածներն ուտել, աշխատում է պահուել ծառերի տակ, աւելի «խողկազնու», ընկղենու և հոնու տակ: Դրա համար լաւ չեն համարում կայծակի ժամանակ այդ ծառերի տակ կանգնելը:

Միքանի ծառերի ու բոյսերի մասին այս աւանդութիւնները կան:

Խաղօղի որթը: Մէկ օր Աբրահամի մօտ հիւր է զալիս մի «խրզը» (Հրեշտակ): Տանը ուտելու բան չեն ունենում. Աբրահամը մորթում է հորթը: Իրիկուն որ լինում է, կոլր զալիս է, բառանչում, հորթին ձայն տալիս, բայց հորթը չը կայ: Կոմի ձայնը հիւրի ականջն է ընկնում: Տանտիրոջ պատուիրում է բերել իր մօտ կերած հորթի կաշին ու թափած ուկորները: Աբրահամը հաւաքում է ուկորները, միայն ազդրի ուկորն է պակաս մնում. չի դանում: «Խրզը» օրհնում է, հորթը ոտի է կանգնում: Քիչ յետոյ Աբրահամը դանում է կորած ուկորը և այն էլ տանում է նրա մօտ: «Խրզը» պատուիրում է այդ էլ այգու մէջ թաղել. Աբրահամը լում է: Մի տարի վերջը ուկորից խաղողի որթ է բունում:

Հոնին ու բալենին: Մէկ օր հրեշտակն ու սատանան իրար հետ զրազ են եկել, թէ ում ծառն աւելի շատ պտուղ կը բերի: Հոնին առաջ ծաղկելուն համար, սատանան ընտրում է նրան, իսկ հրեշտակը՝ բալինուն: Սատանան նստում է տակը. սպասում, պտուղը չի հասնում: Մէկ էլ ինչ տեսնէ. հրեշտակը բուռը բալ լցած. մէկ-մէկ ուտելով զալիս է:

Բալն ու թութը: Բալը պարծեցել է, թէ ինձ ուտողի ճիտը ճախս պէս կը բարկցնեմ: — Պորթ է, վրայ է բերել թութը. թէ որ ես հետդ չը հասնէի:

Յորեն: Պատմում են, որ շատ առաջ յորենը արմատից մինչեւ զլուխ հասկ էր բռնում: Բայց երբոր մարդկանց չարու-

լժիւնն աւելնում է, Քրիստոս Տէրը բարկանում, զալիս սկսում է արմատից վեր յորենի զլուխը պոկել: Ծալրին մի քիչ մնացած է լինում, որ շունն ու կատուն զալիս, լաց են լինում ասելով. «Տէր, Դու որ բոլորը պոկես, մենք ինչ ուտենք»: Արա վրայ Տէրը խզմում է նրանց և ծալրին մնացածը թողնում:

Էլի պատմում են, թէ հին ժամանակ երկու եղբայր իրար շատ սիրելիս են լինում: Նրանք միասին յորեն են անում: Յորենը քաղել-կալսելոց յետոյ, բաժնելու ժամանակ փոքր եղբայրն ասում է մեծին. «Դու բաժնիր»: Մեծը բաժնում է, բայց այնպէս որ փոքրի բաժինն աւելի է հանում: Փոքրը բան չի ասում. բայց մեծի տուն դնալոց յետոյ, ծածուկ իր բաժնից նրա բաժնին է աւելցնում: Մեծը զալիս տեսնում է, որ եղբօր բաժինը աչքին քիչ է թւում, իր բաժնից նորից վրան է լցնում, շատը փոքրին տալիս: Այսպէս երկար ժամանակ դրանք իրանց բաժիններից մէկ-մէկու դնում, աւելցնում են, մինչեւ որ Աստուած տեսնելով որ վերջ չունի այդ բանը, հրամայում է, որ յորենի վրայ ուղիղ մէջտեղից մի ճեղք բացուի. որ նշան է՝ թէ բաժինը պէտք է հաւասար անել:

Գարի: Գարին հասնելոց յետոյ, կլուն երբ յետ է գնում, նրանից մի զլուխ հետը վերցնում, տանում է թագաւորին, որ իմաց տայ, թէ արտի բերքը արգէն հասել է. ժամանակ է հարկ հաւաքելու:

Թութուն: Մէկի արտումը մի ահագին խստ էր բուսել: Վարդը տերեր կտրում, գնում է բերանը, ծամում, տեսնում է որ լեզի է: Տանում է ապուր շինում, տեսնում է, որ էլի չի ուտուում: Մէկ անգամ էլ որ զնալիս է լինում արտը, սատանան պատահում է նրան. մի չլրուխ է շինում, խոտի տերևները չորացնում, լցնում մէջը. առաջ ինքը բերանը տանում, յետոյ տալիս նրան և ասում. «որան թութուն են ասում. ահա այսպէս պէտք է ծխել»:

Ասում են որ՝ մի պոռնիկ կին ժամանակին ասած է եղել, թէ ինքը մարդկանց բերնից մտնի, քթից պիտի դուրս դայ: Եւ իրաւ, նրա խօսքը կատարում է. մեռնելոց յետոյ նրա գերեզմանի վրայ թութուն է բուսնում:

Մէկը սրտի ցաւ է ունենում. գնում է մանդալու: Դաշտում տեսնում է, որ մի խոտ է բռւսած լինում, տերևները տսկու պէս չեղնած: «Հաւասը» դալիս է. տերևները պոկում, մանրում է և թղթի մի կտորի մէջ փաթթում, դնում է բերանը, ծխում: Գրա վրայ սրտի ցաւը մեղմանում, անցնում է: Գրանից է մնացել թուժուն ծխելու սովորութիւնը:

Մի հարտաստ մարդ մի շատ խոցոտ աղջիկ է ունենում: Հայրը նրա համար շատ փող է կորցնում, բայց չի կարողանում լաւցնել: Աղջիկը տեսնելով, որ իր պատճառով հայրը միշտ «նամու» է լինում, զլուխը վերցնում, գնում է մի մեծ անտառ: Պատահմամբ այստեղ մի փոքր, ծաղկած թուփ է տեսնում: Մտածում է փորձել այդ թփի տերևները ճղել ու չուփը քսել երեսի խոցերին: Այդպէս էլ անում է. անում է ու լաւնում: Խսկոյն վազում է տուն և հօրը պատմում ծառի զօրութիւնը: Հայրը հետաքրքրուած, աղջկան հետ գնում, զըսնում է այդ բժշկաբար թուփը և տանում իրանց մօտ տնկում. զա թութունն էր:

«Իչ-գիլ» *) ասուած ծաղկից չոլս ծաղկաւորը որ զըսնեն ու թանի մէջ զցեն, սակի կը դառնայ:

Պուասը ով որ զլխիցն ուտէ, ամուսինը կը մեռնի:

V. Կ Ե Ա Շ Ա Բ Ի Շ Ե Ր.

Կենդանիների պաշտամունքի մասին, ինչպէս և ծառերի ու բոխերի, նրանց մօտ ոչինչ չի լիշտում: Գոնէ ինձ յարոնի չեն այնպիսի թռչուններ ու կաթնասուններ, որ նրանց մօտ պաշտուելին և մեղք համարուէր նրանց սպանելը կամ բունը քանդելը: Աիշտ է՝ կան միքանի թռչուններ ու կաթնասուններ, որոնց միաը համշէնցին չի ուտում, բայց այդ ոչ թէ պաշտելուց, ինչքան զգուելուց, ու սովոր չը լինելուց: Այսպէս՝ կաչաղակին ոչ ոք չի սիրում, ոչ էլ պաշտում. երբեմն բռնում, զարկում են, բայց միան ամենքը չեն ուտում. ուտողներ էլ կան, չուտողներ էլ: Քիչ-շատ միւսներից աւելի քնքուշ վերա-

*) Մի տեսակ խոտ է, որ միշտ երեք ծաղիկ է բերում:

բերում են աղաւնուն, «սոլորշուկին» (սարեակ), ծիծեռնակին. բայց դարձեալ դրանցից ոչ մէկին սպանելը մեղք չեն համարում, խոկ առաջին երկուսին հօ համով ուտում են: Կաթնասուններից, բայց սովորականներից՝ նրանք չեն ուտում նաև ստակի միոք, ինչպէս և շատ տեղ վայրի կենդանիներից ամենից աւելի սիրում են եղնիկներին, բայց զրանց բռնելն ու միսն ուտելը ոչ ոք մեղք չի համարում:

ա. Թ Ռ Հ Ո Ւ Ա Ա Ե Ր.

Հաւ: Հաւն ու ճնճղուկը մէկ անդամ եկել են իրար մօտ: Ճնճղուկն ասել է. «Աստուած թէ հրաման տայ, ես պիտի թռչեմ»: Հաւն էլ պարձեցել է. թէ «Աստուած հրաման տայ, չը տայ, ես պիտի թռչեմ»: Ճնճղուկը փորձել՝ աշողուել է. հաւը մնացել է, չի կարողացել:

Հաւի համար ասում են, թէ սատանայ է. գիշերով նրան բռնելը լաւ չեն համարում:

«Կուլիու»: «Կուկուն» տուած մարդ է եղել: Երկու եղբայր իրար կորցրել են. դրա համար էլ որ մինչեւ հիմա էլ իրար ման են գալիս ու ձայն տալիս:

«Կուկուի» մասին պատմում են, թէ ով որ գարնան, վաղ առաւտօնեան, չը լուացուած, «ծունը» չարած, հաց չը կերած՝ առաջին անդամ նրա ձայնը լսէ, «կուկուն» նրան «կալէ կու», այսինքն՝ կը կալէ (? կը բռնէ): Այն տարբն նրա գործը լաւ չի դնալ. աշողութիւն չի ունենալ: Գրա համար գարնան առաւտօները վերկենալուն պէս՝ պէտք է շուտ լուացուել, աղօթքը շուտ ասել և շուտ էլ հաց ուտել: Ոմանք վերկենաւուն պէս՝ մի կտոր հաց բերանն են գնում, որ «չը կալուին»:

Ծիծեռնակի: Ծիծեռնակը առած ծառի վրայ է եղել բռն գնելիս. օձը ելել՝ պոչը կծել է. դրանից է որ նրա պոչը «չաթալ» է մնացել և բռնն էլ պահանջն է շինում:

Բազէ: Պատմում են, որ մի պառաւ, խոկ ոմանց ասելով՝ ինքը Տիրամալը, անեծել է բազէին—աղբիւրի չուրը վերևուց պղտորելուն համար—որ ամառուայ Յ ամիսներին ջուր չը կա-

բողանայ խմել. աչքին արիւն երևայ: Դրանից է որ բազին այդ ամիսներին միշտ ծուռմ է. որովհետև ծարաւ է և ջուր չի կարողանում խմել:

Բու: Բուն հին ժամանակ մարդ է եղել, մի շատ ծով մարդ, որ իր համար շոր անգամ չէ կարողացել գտնել: Նրա մօտինները զգուելով նրա ծուլութիւնից և մտքներում դնելով նրան մարդ գարձնել, մէկ օր տալիս են նրան իրանց շորերը և հետները եկեղեցի տաճում: Այլտեղ յանկարծ բոլոր շոր տուսդները մէկ խօսք արած՝ թափում են վրան, ինտ առնում իրանց շորերը և ծովին մերկ ու տկար թողնում բազմութեան առաջ: Այդ նեղ ժամանակին ծովին օդնութեան են հասնում թեւաւորները և ամեն մէկը նրանցից մի-մի փետուր տալով, ծածկում են նրա մերկութիւնը, հետները թռցնում, մարդկանց աչքերից ազատում: Բայց ապերախտը, փոխանակ կամաց-կամաց նրանց պարտքը տալու, սկսում է նրանց ցեղից կոտորել ու կոստիկ: Աստծու ամեն զիշեր մի-մի թռչուն ուտել: Դրա վրայ սաստիկ բարկանում են նրա թեւաւոր ընկերները և խօսքը մէկ են անում, զնուում են որ հէնց որ տեսնեն, մի լաւ պատժեն այդ անզգամին: Դրա համար է՝ որ բուն փախչում է լոյսից. ցերեկալ չի երևում և միայն զիշերներն է դուրս զալիս:

«Յօնդրիլիկ» (յոպոպ). Դրա համար էլ ասում են, թէ նոր հարս է եղել, մազերը սանդրելիս՝ տէղը վրայ է եկել, ամօթից թռչուն է դառել և սանը գլխին թռել, դնացել է:

Տարտակ. Ջատ առաջ, մէկ անգամ իրվկնապահին երկու երեխայ, եղբայր ու քոյր «սալն» անտառ են դնում՝ հորթեր վնտուելու: Երեխաները ման են գալիս, ման են գալիս, չեն գտնում: Ուշ զիշեր է դառնում, մնում են անտառում և տատրակ դառնում: Մինչեւ հիմայ էլ նրանք հորթերին են ման գալիս, և նրանց ձախ տալիս, նրանց կանչելու ձայնից՝ իրանց անունն է մնացել: (Այդ թռչունի անունը զրով շատ դժուար է ուղիղ արտայատել. Համշէնցիները մի կերպ՝ բերանը սղմած շրթունքներով են արտասանում, այնպէս որ հորթին կանչելու ձայնին է նմանում «թֆիւ—թֆիւկ»):

բ. Կաթնասուներ

Այծ. Աչխարը Աստծու ստեղծածն է, իսկ այծը՝ սատանի: Աստուած որ ոչխարին հոգի է տալիս, նա իսկոյն վեր է կենում, սկսում է ման գալ, իսկ սատանան ինչքան աշխատամ է, այծին չի կարողանում հոգի տալ: Ճարը կտրած՝ գնում է Աստծուն ասում է, թէ «ի՞նչ պէտք է անեմ, այծս չի կանգնում»: Աստուածն էլ նրան ասում է. «գնա, ասա, Աստծու հրամանով ել, գնա»: Այծը չի կանգնում: Ելի գնում է Աստծու մօտ, ասում նրան. «ասեցի, բայց էլի չը շարժուեց»: Աստուած էլի ասում է նրան. «գնա, ասա, Աստծու զօրութիւնով ել, կանգնիր»: Վերջապէս ճարը կտրած, գնում ասում է թէ չէ, այծը իսկոյն ոտի է կանգնում: Սատանի բարկութիւնը գալիս է. պոչին քացի որ չի խփում, պոչը վեր է ցցւում: Դրանից է որ այծի պոչը վեր դարձած է լինում:

Եղնիկ. Եղնիկների համար ասում են, Աստծու կովերն են:

Կատու. Կատուի մատին այս նախապաշարումներն են պատմում:

Կատու սպանելը մեղք են համարում, ասում են, որ սպանողի մատաղը չի ընդունուի:

Կատուն մարդու ձեռքից հաց չի ուտի, ընկած կուտի, մէկ էլ՝ աչքը խուփ կուտի, որ «ընդընը» (միւս կեանքում) «ընքեար ընէ» (ուբանայ) կերածը:

Կատուն թէ որ հիւանդի անկողնին մօտենայ, հիւանդը չի մեռնիլ:

Մուկ. Մկան ու «պօսպօլի» (մեծ մուկ, բրյու) համար պատմում են, թէ «պօսպօլը» մէկ անգամ ուզեցել է խնամրւթիւն անել մկների հետ, նրանց ցեղից աղջիկ առնել, բայց մկները չեն տուել: Դրա համար «պօսպօլները» նրանց թշնամի են ընկել և մինչեւ այսօր էլ հալածում են:

Մկան համար էլի ասում են, թէ հարիւր տարեկան որ լինի, չղջիկ կը դառնայ:

Խոզ. Մէկ անգամ հայի ու թուրքի մարգարէները (Յիսուսն ու Մահմէտը) իրար հետ խօսք են կապում գետնից աղ-

Քիւր հանելու, թուրքի մարդարէն մեր մարդարէից մի քանի օր ժամանակ է ուղում, պայման դնելով, որ օրը հասնելուն պէս, գան ու զաւագանը մէկ խփելուն՝ ջուրը դուրս հանեն: Այդ մի քանի օրում թուրքի մարդարէն ծածուկ հողի տակ ջրով լիքը տկեր է թաղում, վերջը խաբար դրկում հայի մարդարէին, որ դայ տեսնի, թէ ինչպէս է աղբեր բղխեցնում: Հայի մարդարէն միամիտ դալիս է, խաբար չունենալով թուրքի թաղած տկերից: Միամիտ սրտով խփում է զաւագանը և յանկարծ չոր ու ցամաք գետնի տակից մի վճիռ ու մշտական աղբեր է բղխում: Հերթը որ գալիս է թուրքի մարդարէին, ասում է որ ինքը այստեղ չի խփիլ. տանում է տկեր թաղած տեղը: Խփում է մէկին, միւսին, երրորդին ջուր դուրս չի գալիս, խողն եկել, հողը փորել, տիկը ծակել, ջուրը հանել էր: Գնում է վերջին թաղած տկի մօտ. տեսնում է, որ այնտեղ էլ խողը գնացել, նոր փորել է և ինքն էլ տկի տեղ պառկել: Բարկացած բռնում է խողի պոչից, ճռւացնում նրան ու ասում. «այ մունդառ ըլլիս դու»: Խոկոյն հայի մարդարէն էլ վրայ է բերում, թէ «Սալթ» (միայն) քու բռնած տեղդ մունդառ ըլլի թեօղ (թող): Այդ է պատճառը, որ թուրքերը խողի միուր չեն ուտում, խոկ հայերը միայն պոչն են դէն դցում:

Դոմէ. «Գոմշակղը» պարձեցել է, թէ «ինձ չը վերցնելու բեռ չի լինիլ. ծունկ որ չոքում եմ, վախենում եմ, թէ աշխարհը չը քանդուի»:

Արջ. Արջը առաջ յոյն է եղել: Մէկ օր ծառին նոտած տանձ ուտելիս է լինում: Պատահմամբ նոյն ճանպով անցնելիս է լինում ինքը Քրիստոս Տէրը իր աշակերտներով: Քրիստոսը նրանից տանձ է ուղում, բայց նա տանձի տեղ՝ վերևից «Խրթիզն» (միջի կմեպն ու կորիզը, «Հեքը») է զցում: Երեք անգամ ուղում է Տէրը, երեք անգամին էլ որ այդպէս է անում յոյնը, Տէրը բարկանում է վրան, և անիծում, ասելով. «գլխիվեր էլար, գլխիվեր իջնուս»: (արջը գլխիվայր է իջնում ծառից): Այդ խօսքերի ասելն ու նրա արջ գառնալը մէկ է լինում: Արանք ասում են, թէ արջը առաջ մարդ է եղել, մայրն անիծել արջ է դարձել:

Ուրիշներն էլ ասում են, թէ արջն առաջ «հօրմի» (յոյն) տէրտէր է եղել:

Դ. Երկակենցաղ կենդանիներ

Կրիա: Կրիան առաջ մարդ է եղել, ջրաղացպան, բայց շատ «հախ» (վարձ) առնող և գողին մէկը: Խեղճի մէկը մի օր անիծում է նրան՝ անիրաւ վարձ վերցնելու համար, ասելով. «քեզ տեսնեմ այդ «կօկօշը» (զդմի աման, որով «հախը» չափում են) գլխիտ վրայ անցած ման զալիս»: Անէծքը կատարում է և ջրաղացպանը դառնում է կրիա:

Դ. Զկներ ու ջրային կենդանիներ

Զկների մասին առհասարակ աւանդութիւններ չը կան, երեկ մէծ գետերից ու լճերից հեռու մնացած լինելու պատճառով: Ոչ հայրենիքում, ոչ էլ այստեղ յեծ գետեր ու լճեր չը կան, իսկ տեղ-տեղ թէկւ ծովն էլ հեռու չէ նրանցից, բայց ձկան համար յատուկ՝ ծովը գնալու ոչ ժամանակ ունեն, ոչ էլ սովորութիւն, թէկւ ամեն տեսակ ձկնեղէն էլ ուտում են:

Այսքան միայն ասում են, որ աշխարհում ամենամեծ «հոգւեօրը» (կենդանի) ձուկն է: Երեկ լսել են կէտի մասին, բայց անունը չը գիտեն:

Քրային կենդանիներից մի նախապաշտմունք միայն լըսել եմ «խեցփարի» (խեցղետին) մասին:

Ասում են, թէ որ «խեցփարը» մարդու ձեռքից կծի, մինչև երկնքից ամպի ձանը չը լսեի, կամ էշը Շ անգամ չը զուալ, չի լթողնիլ, այնքան ամուր է կպչում:

Ե. Օ Ճ

Օձը սկզբում դրախտի զռնապան է եղել: Նա է եղել որ խաբել է Եւային: Թրա համար Աստուած անիծել է նրան և դրախտից դուրս արել: Օձը գնացել է, բայց մտքումը դրել է նրա ստեղծածներին միշտ վնասել: Բայց Աստուած յայտնել է նրան, որ նրանից մեռածներին մեղք չի հարցնելու: Թրանից է, որ օձից մեռածը ինչքան էլ մեղաւոր լինի, Աստծու հրամանով անպատճառ արքայութիւն պիտի դնալ:

Օձի համար ասում են, որ նա ծնւում ու դոյանում է սպիտակ «քեաստօնա» կոչուած դղումից: «Քեաստօնա» դղումը

երբեմն շատ, անչափ մեծանում է և մէջը նշանարւում է արեան նման կարմիր պուտ: Հէնց այդ պուտի համար ասում են, որ օձի արիւն է. որ նա զրանից է գուանում և վերջը դուրս գալիս:

Պատմում են, որ մի տեսակ օձ կայ, որ զլխին թաս ունի: Այդ թասը շատ զարմանալի յատկութիւն ունի. ով որ նրան տիրանայ, մի գանձի տէր կը դառնայ: Դա զիշերներն է դուրս գալիս թասի լուսով արածելու և սաստիկ լոյս է տալիս չորս կողմը:

Օձը որ սպանեն մէջը լորեա «սանդրեն» (տնկեն), երբ բուսնի գան, հանեն, զրպանը դնեն և տեղն ու տեղը պառկեն, զիշերը մի գազան կը դայ: Թէ որ նրանից վախենան, գազանը նրանց կուտէ, իսկ թէ չը վախենան, նրանք այնտեղ մեծ գանձ կը գտնեն:

Ոմանք ասում են, թէ օձի մէջ բուսած լորեան զրպանը դնողը ուրիշներին չի երևալ. իսկ ով որ ուտի՝ սատանին կը տեսնի:

Օձը երեկոյեան սպանելը լաւ չէ. սպանողը կը հիւանդանայ:

Օձը սպանելու՝ ծնկից վեր բարձրացնելը, ասում են մեղք է:

Օձը թէ որ երկաթով սպանեն, լաւ չէ. արքայութիւն կը դնայ. դրա համար նրան երկաթով չեն սպանում, այլ փայտով:

Յձն ասել է, թէ ով որ իրան սպանէ, պէտք է եղբօր պէս թաղէ իրան: Դրա համար էլ օձը սպանելուց յիսոյ զետնին չեն թողնում, կամ ուղղակի ծառի վրայ են կախում և կամ թէ չէ զետինը փորում, հողի մէջ թաղում են:

Ասում են, որ եթէ զետինի երեսին մնայ, մեծ վնաս կարող է տալ մարդկանց իր քիստովը. զրան «օձոն քիստ» են ասում: Այդ քիստի համար ասում են, թէ փոքր ու ասեղի նման սասակի սուր բան է. եթէ մարդու ոտը մտնի, կարող է անբուժելի խոց և ուսուցք պատճառել. ինքն իրան կարող է վեր բարձրանալ մարմնի մէջ, նոյն իսկ մինչեւ զլուխը, և եթէ մնայ, վտանգաւոր դառնալ: Երբեմն մարմնի մի տեղից ինքն իրան ծակում է և դուրս գալիս:

Օձի համար ասում են, որ «կոտեօշ» (եղջիւր) ունի: Մէկ անգամ ինձ ցոյց են տուել. գա մի փոքրիկ, սուրուլիկ, մի քիչ ծակած սև սոկոր է, սևագոյն ու դրսից պլազոն, ասում են, որ գա օձից է մնացել:

Կի ասում են, թէ «թրւօնդը օձոնը հընու մաշտուն հօմար շինուած է». այսինքն որ՝ հրացանը օձի ու մարդու համար է եղել: Օձն էլ, մարդն էլ մարդու թշնամիներ են, հրացանն եղել է, որ մարդ իր երկու թշնամիներից պաշտպանուի:

Մէկ էլ ասում են, եթէ որ օձին նշան անեն, չի դիպչիլ:

Առաջին տեսած օձը կամ որևէ է ոողուն պէտք չէ սպանել. պէտք է թքել վրան ու անցնել «ցաւս վրադ» ասելով:

Օձ որ սպանեն, անձրւ կը դայ:

Կան թռչուններ, որոնք օձ են կուլ տալիս, ինչպէս ձըր կընկուլ և այլն: Եթէ պատահի, որ մի այդպիսի թռչուն օձը բերնին թռչելիս լինի մէկի վրայով, մարդը «կեօխ» կըրունուի: Եւ ամենավատ «կեօխը» օձիցն է լինում, գա ամենից դժուար է բժշկում:

Պ ի ջ ա ս ն ե ր

«Բուզը» (կովերին ու եղներին փախցնող-խայթող ճանճ, ՅԱԷ): Մէկ անգամ «Բուզը» «էղրադ» է անում, բոլոր մալերը գնում են. միայն կովն ու եղը չեն գնում. դրա համար «Բուզը» մտքին է պահել և նրանց «բոցնում է»:

«Բուզն» ասել է, թէ ծիծաղս ըրդար, մալերին ծառերից կը թռցնէի. գոմէշին էլ կը բղեցնէի, բայց ծաղրս բռնում է չեմ կարողանում:

Վ Լ. Պ ա ր դ

Պարտու հարմակ հասերը: Ասում են որ տղամարդու կողքի ոոկորներից մէկը պակաս է: Այդ հիմնում են Պովուսական այն աւանդութեան վրայ, որ ասում է, թէ Աստուած Եւային ստեղծելու համար Աղամի կողքից մի ոոկոր հանեց: Կարծում են, եթէ Աղամին պակաս էր, հիմա էլ ամեն տղամարդ մէկ ոոկոր պակաս կունենալ:

Եղանգ: Աղամի մարմինը պատուիրանազանցութիւնից առաջ դրսից ամբողջապէս եղունգով էր ծածկուած կաշուի տեղ:

Վերջը՝ երբ Աստուած բարկացաւ, պատժեց նրան, եղունդը վրայից առաւ, կաշին թողեց և մի քիչ տեղ միայն թող տուեց եղունդը՝ իբրև նշան հին վիճակի: Դրա համար էլ այն կրց-նողը պատժում է:

Կորած եղունդը կամ պէտք է թաղել և կամ այրել, թէ չէ՝ միւս կեանքում նրանից կուզեն: Կորցնողին կը պատժեն, մաղէ կամրջից կանցկացնեն, որ բերէ, իսկ թաղածը կամ այ-րածը իրանից էլ առաջ կը գնայ: Դրա համար եղունդ կտրե-լիս՝ ասում են. «Ընդոնը (միւս կեանքում) օր ուզիմ՝ հազիր կաց»:

Եղունդի համար էլի ասում են. թէ ում եղունդը որ եր-կար լինի, խելօք կը լինի: Ով որ եղունդի վրայ շատ սպիտակ պուտեր ունենայ, ոչխարի բախտ կունենայ (այսինքն՝ ոչխարից օգուտ կը տեսնի):

Մաշ: Սանդրելուց յետոյ զլիսի թափած մազերը կտմ պի-տի թաղել և կամ այրել, թէ չէ՝ թէ որ այնպէս թափթփեն և ճնճղուկը տանի իր բունը, մարդը զլիսացաւի կը բոնուի, Ասում են, որ մազը ինչքան էլ մնայ Հողում, չի փթիլ:

Մատուցութիւն: Ճկութն ու ցուցամատոց իրար կպցնող մարդու համար ասում են, թէ մարդը նրան իր կաթը հալալ է արել:

Լեզու: Ով որ լեզուն մօտեցնի արմունկին, կամ արմունկը տանի ուսից ներքեւ, նա թեւ կառնի, կը թռչի:

Կի՞: Կնոջ համար ասում են, թէ սատանայ է: Չէ որ նա է խարել Աղամին. Ա. Կարապետի գլուխն էլ նա է կտրել տուել, կնոջ գերեզմանն աւելի խորն են փորում, որ չը լինի, թէ սատանան գայ, տանի իր մօտ: Աղջիկներին ամեն կիբակի եկեղեցի չեն տանում, լաւ չեն համարում. տարին հազիւ մէկ երկու անգամ:

Հօր անհնձու: Քրհեղեղի ժամանակն է լինում, ջուրը սկսում է չորս կողմից շատանալ ու մօտենալ: Մի տեղ էլ օրօրոցում մանուկը քնած է լինում, հայրը մօտը չի լինում: Մայրը տեսնելով, որ ջուրը քանի դնում՝ հայ-հայ մեծանում է և սլի-տի խեղդուի, գնում կանգնում է ուղղակի օրօրոցի վրայ, որ ջրից բարձր մնայ ու չը խեղդուի, մտահան անելով պառկած երեխալին: Մի քիչ յետոյ հայրը որ զալիս է՝ տեսնում կնոջը

օրօրոցի վրայ կանգնած, բարկացած չի համբերում, խփում է նրա երեսին, հրում օրօրոցի վրայից և առնում է օրօրոցը ու-մին, որ երեխին աղատի: Դրա համար է, որ մօր անէծքը որդուն չի բռնում, իսկ հօր անէծքը, օ դա մեծ բան է, վայ այն որդուն, որ հօր բարկութիւնը կը շարժի և հօր անէծքին կարծանանայ, հօր անէծքը անպատճառ կը բռնէ:

Կաթ: Հին ժամանակ կաթ եփելիս՝ ինչքան որ վեր ելել, աւելացել է, սառչելիս էլ նոյնքան է մնացել, չի պակսել: Բայց մէկ անգամ մի պառաւ կաթ եփելիս՝ եռ եկած ժամա-նակ մօտը չի եղել, կաթը բարձրացել, մի քիչ թափուել է: Դրա վրայ պառաւը չի համբերել. բարկացած թքել է վրան: Դրանից է, որ հիմա կաթի «բէլսքէթը» կորել է, և եփ գալիս՝ աւելանում է, բայց սառչելիս՝ էլի պակսում է:

«Կաթը և եղի պահի»: Այս խոռքերը առածի տեղ են բա-նում. նշանակում է, որ ինչ չափով որ չափես, քեզ էլ այն-պէս կը չափեն: Աւանդութեամբ՝ իբր թէ հին ժամանակ ծե-պէս կալաթով ձորն էին զցում: Մարդու մէկը երբ իր բացառ մօրը կալաթն է դնում, որ ներքեւ դորի, մարդը կա-լաթից ձայն է տալիս, թէ «որդիս, կալաթը քեզի պահէ»: Այդ խօսքերից որդին զգացւում է, միտքը բացւում և մօրն ազատում մահից:

VII. Եղանակի գուշակութիւններ

Նոր-պարու օրեր: Նոր տարու առաջին օրից մինչեւ 12, նայած թէ որ օրը ինչ եղանակ է, նրանց համապատասխան ամիսներն էլ այնպէս կանցնեն: Առաջին օրը՝ յունստարն է. 2-դր՝ փետրուար և ապիլ. 12-դր՝ վերջի ամիսն է: Այսպէս՝ թէ որ առաջի օրը պարզ լինի, առ հասարակ ամիսն էլ պարզ կանցնի. թէ ար յունստարի 12-ին ձիւն գայ, դեկտեմբերն էլ ձիւնով կանցնի:

«Վարդակ»: Փետրուարի 18-24 սկսում է հիւսիսավին ու հարաւալին քամբների կռիւը: Կռիւը տեսում է մինչեւ փետ-րուարի 24-ի զիշերը, յաղթութիւնը այդ վերջին գիշերիցն է

կախուած, նայած թէ որ կողմի քամին է փչում: Փրանից է կախուած ամբողջ 40 օրերի եղանակը: թէ որ վերջի գիշերուան քամին հիւսիսիցն է, նշանակում է՝ էլի ամբողջ 40 օր, մինչև ապրելի 5, ցուրտ ու ձմեռ պիտի լինի: Հակառակ՝ հարաւային քամին գարնան ու տաք օրերի նշան է համարում: Փրան թուրքերէն բառով «վադաելի» (ժամանակի քամի) են ասում: Այդ բանը ամենքը գիտեն և շատերն էլ ընդունում են, բայց այնքան հետաքրքիր կերպով ոչ հսկում են, ոչ էլ հետեւում քամուն, շատերը մտքին չեն պահում ամսաթիւը և մոռանում են հսկելը:

Իրանց առելով հայրենիքում, Անատօլիական ափերում, այդ բանին աւելի մեծ նշանակութիւն են տուել: Այնտեղ հովիւները վերջին գիշերը յատուկ հսկումներ են արել, իմանալու համար թէ քամին որ կողմից է փչում: Պատահել է որ երբեմն թոյլ փչած ժամանակ չէ իմացուել թէ որ կողմի քամին է: Դրա համար այդ գիշերը սինչև լոյս հովիւները չեն քնել. սարի գլխին մի ահագին խարոյի վառելով՝ աշխատել են գտնել քամու ուղղութիւնը: Մեծ ուրախութիւն է եղել նրանց համար, թէ որ քամին հարաւից է փչել («կըրլա»): Միւս օրուանից ճամպայ են ընկել՝ սարը (եալլա) գնալու, քանի որ նշանը նրանց ցոյց է տուել, որ ցրտից էլ վախ չկայ: Թէ որ հակառակ՝ քամին հիւսիսից է եղել, 40 օր էլ տեղից չեն շարժուել, մնացել են ցածրերում՝ մինչև չարագուշակ օրերի լրանալը:

Մարդկէ 9: Այդ օրից է սկսում «կուկուն» կանչել: Գայլն էլ այդ օրը գնում է լողանալու: Թէ որ օրը պարզ լինի, կը ցամքի, թէ չէ թաց կը մնայ: Գայլի ցամքուելուց ու թաց մնալուց, կամ ուրիշ խօսքով՝ այդ օրուան եղանակից է կախուած ամբողջ ամառուան վիճակը: Թէ որ այդ օրը պարզ լինի, ամառն էլ չոր-երաշտ կանցնի. իսկ թէ որ անձրւում ամառն էլ անձրւով կանցնի:

Աշխարհ 1. Կատուի աչքերը որ սկանան, պղտորուին, անձրւ կը դայ:

2. Կատուն որ երեսը լուանակ, անձրւ կը դար:

3. «Ղիափները» (չախկալ) որ շատ կանչեն, անձրւը մօտիկ կը լինի:
4. Հաւը որ քթթուի, անձրւ կը դայ:
5. Ցերեկով որ գորար կրկուտի՝ անձրւ կը լինի:
6. Ճատ որ անձրւէ և «ղիափը» կանչէ՝ օդը պիտի բացուի:
7. Կատուն որ երեսը կրակին դարձնի, ցուրտ պիտի անէ:
8. Կատուի բերը թէ մեծ լինի, ցուրտ շատ կը լինի:
9. Լուսնի եղջիւրները թէ վեր դարձած լինին, այն ամիսը երաշտ կանցնի. իսկ թէ ներքեւ՝ անձրւ շատ կը դայ:
10. Եօթը տարին մէկ անգամ լուսաստղը լիտ է մնում, (առաւատները ուշ է երեսում և իր տեղում չի լինում). լիտ մնացած տարին ձիւն քիչ կը դայ:

11. Ասում են թէ՝ որ տարին որ անտառում կաղին, շազանակ և առհասարակ վայրի պտողներ շատ են լինում, այն տարին ձմեռը լիստ է լինում:

VIII. Աշխարհի եւ ազգեր:

Աշխարհի իշխութեալ է հանգուած: Աշխարհքը տակի հիմքը մի եղան վրայ է կանգնած: Եզր երբոր պառկի, աշխարհքը վրան պիտի քանդուի: Ասուած զրա համար մի ճանձ է դրել, որ եղան չորս կողմը տղտղում, ման է զալիս. թէ որ եզր պառկել ուղենայ, նրան պիտի կճէ: Եզր զրա վախից չի պառկում և աշխարհքը կանգնած մնում է:

Ասուներ էլ կան թէ աշխարհքը կարմիր եղան «կօսեօշի» (եղջիւր) վրայ է կանգնած:

Էլի ասում են, թէ աշխարհքը զրկած պահում է մի մեծ ձուկ իր զլխով ու պոչով, որոնք իրարից շատ հեռու չեն: Գլուխը համարեա մի թիզ միայն հեռու է պոչից: Բերանը միշտ աշխատում է, որ պոչը կտրի, տտի, բայց չի կարողանում: Որ ժամանակ որ պոչը կտրուի, աշխարհքը դուրս կը պրծնուի ու կը կրծնալուի:

Աշխարհի վերջը: Վերջի երեք օրին օր ու զիշեր կրակէ անձրւ պիտի դայ:

Ազգեր ու տէրութիւններ: Համշէնցիների հաշուով ամբողջ աշխարհքում կայ «եթմիշ իքի բուշուք (72½) միլէթ» (ազդ), «տասվերկու խաչապաշտ թագաւոր» և «օխտն ու կէս հայ»: (Ի հարկէ՝ գիտեն որ հայը այդքան քիչ է: այդպէս ասելով՝ ուզում են ցոյց տալ որ շատ չէ):

Հայերի գաղափառ պատճեն: Տաճկի սուլթանին մի որդի է լինում. ուստի թագաւորը նրան մի օրօրոց է ընծայ զրկում: Սուլթանն էլ իր կողմից նրան մի խաչ է զրկում: Այդ խաչի համար է, որ հայերը կամաց-կամաց անց են կենում Ռուսիաի կողմը:

Թու-ս: Մէկ անգամ Քրիստոսը ծովեղերքին ման էր գալիս: Տեսնում է մի ուստի պահապան մեռած մնացել է ափին: Խմբին նրան յարութիւն է տալիս: Թուսը վեր է կենում և, տեսնելով իր մօտ Կանգնողին, շուտով նրան հարցուփորձում, նրանից անցագիր է պահանջում:

Թուսները իրանց հաւատը «Հօրումներից» (լոյն) են դնել, մէկ նաւ աղ տալով:

«Լէմ» (գէրմանաց) «Լէմսը» տաճիկներից անիծուած է, որովհետեւ շատ տաճիկ է ջարդել. ուրիշի գէմ կուլու գնալ նրան չի աջողուել:

«Քո-շո» (*ուրտ): Հրէաները Քրիստոախն խաչելիս, ուզեցել են սրտից խաչել նրան մի մեծ մեխով: Որտեղից որտեղ պատահմամբ մի քուրդ է զալիս այստեղ: Նրա աչքը մնում է մեխի վրայ. զողանում է և այդպիսով ազատում Քրիստոսին որտեղ մեխուելուց: Գրա համար էլ Աստուած «Հէ՛լալ» է արել քրդին գողութիւնը:

Սահմէօլի առանելը: Տաճկի սուլթանը մէկ անգամ գալիս խնդրում է «Հօրումների» թագաւորից կաշուի չափ մի տեղ նրա մայրաքաղաքում: Նա էլ տալիս է: Սուլթանը կաշուից բարակ թելեր է շինում և իրար կցելով՝ նրանցով պաշարում ողջ քաղաքը: Երբ «Հօրումների» թագաւորին իմաց են տալիս, զուող «Հօրումը» չը հաւատալու է դնում և ասում. «թէ որ այս ամանի եփած ձկները կը սաղնան ու կը խաղան, սուլ-

թանս էլ իմ ձեռքից կառնէ քաղաքը»: Ձկները, դժբախտաբար, սաղնում—խաղում են, և քաղաքն էլ առնուում է: Վայենի և բարդացին մարդկանցից, սարերում կան և «Աէ՛րի-սարի» մարդիկ, ինչպէս և կան մալերի վայրի տեսակներ: Պատմում են, թէ սարերում իրանց աջողուել է տեսնել այդպիսիներին, որոնք ամբողջապէս ոտից զլուխ մազոտ, անլեզու և խպետ արարածներ են, մարդկանցից վախչում են և իրարից հեռու և չոկ ապրում:

Պատմում են էլի. թէ իրանց հայրենիքում, Մինօպի կողմերում մի ժամանակ ապրելիս են եղել մի տեսակ վայրենի, աժգահայ հսկայ մարդիկ, որոնք երկու աչքի տեղ՝ մի հատ խոշոր աչք են ունեցել ճակտի մէջ տեղը, այսպէս կոչուած՝ «Գի՛փէ՛գեօղներ»—կամ միականիներ:

XI. Ս ր բ Ե ր.

Սուրբ Կոյս. Մէկ օր Յիսուսը կորել էր. Մարիամը ման էր գալիս՝ որ զտնէ: Գալիս հասնում է մի գետի մօտ, որի ձայնը աշխարք էր բռնել: Մարիամը հրամայում է զետին որ ձայնը կտրէ, և զետն էլ տեղն ու տեղը լռում է: (Գետի անունը չը զիտեն, բայց հաւանական է՝ Յորդանանի համար լինի աւանդութիւնը):

Սուրբ Սուրբիւը: Պատմում են, որ առաջարաց պատշարթում ու Սարպիսը եօթը «Հօրում» և մէկ հայ պիտի խեղդէ՛մսի միանի ու բքի հանդիպեցնելով նրանց: Յոյներն այդ շաբթում ոչ միայն պաս չեն պահում, այլ «ինադու» չորեքշաբթին և ուրբաթն էլ են ուտում:

Մէկ անգամ այդ շաբթում մէկ լոյնի բռնում ու ստիպում են, որ պաս կենայ: Գիտում են ամբարը, բայց «ինադու» բռումը ըան չը զտնելով՝ իր տրեխներն է կրծում, որ չասուի, թէ պաս է պահել:

«Խոյրէէն»—սուրբ Գերոբը: Ճատերը մինչեւ այսօր էլ հայրենական սովորութիւնով «մեծ կիրակի» են համարում ապրի-

լի 23, երբ տօնում է յունաց «խնդրելէզը»։ Զարմանալի է որ այդ սրբի մասին ոչ մի աւանդութիւն չունին, ոչ էլ այդ սրբի համար հայոց եկեղեցու լիշտակած օրը գիտեն։ Չատերը նոյն խոկ չը գիտեն, թէ «խնդրելէզը» մեր ս. Գէորգն է, բայց էլի այդ օրը սաստիկ «մեծ կիրակի» են բռնում և յամառութիւնով շարունակում են հայրենական տօնը պահելու։ Բոլոր աւանդութիւններն և նախապաշարումները միայն այդ օրը կիրակի բռնելուն ու չը բռնելուն են վերաբերում։ Հայրենիքում, իրանց պատմելով, այդ օրը չը բռնող չը կայ. հայ, յոյն, տաճիկ այդ օրը ամենքը անփախտ կիրակի են պահում։ Այդ սովորութիւնը իրանց հետ բերել են և իրանց նոր տեղերը։ Այդ օրը նրանք շատ խիստ են պահում։ Ոչ մի տօն և կիրակի օրով բանելուց այնքան չեն վախում, ինչքան այդ օրուայ բանելուց։ Այդ օրը բանողը մեծ վնասի կը հանդիպի, գործը աջաղ չի դնալ, «Ճռի կու»։ Հերկ անողի կամ խոփի կը կոտրի, կամ արօրը, կամ արտը բերք չի տալ փոլողի՝ կամ փետառը կը կոտրի, կամ բանը. ցանածը կամ մուր կը լինի, կամ մուկն ու ձիռուն կուտեն, չի բուսնիլ. ինքը բանողն էլ, կին թէ տղամարդ, կը հիւանդանայ, ցաւի կը հանդիպի. կամ երեսը կը ծուի, կամ ձեռքը կը կոտրի, կամ թէ լղի լինի, երեխան կը ծուի և ալին։ Մէկ խօսքով ամեն տեսակ ցաւ ու ձախորդութիւն կը թափէ նրա զլիխն «խնդրելէզը»։ Արդէն իրանց մէջ այդ տեսակ շատ օրինակներ են տեսել և շատ պատմութիւններ են պատմում։

Հայր Աբրահամը։ Հայր Աբրահամը մի չօրան ունէր. այդ չօրանը երեք հաց-պաշար ունէր մօտը։ Հայ ուտելու ժամանակը որ զալիս է, միտք է անում, թէ կարելի է ար «սարին» մի քաղցած մարդ պատահի, մի քիչ էլ սպասեմ»։

Սպասում է, ճիշտ որ մի քաղցած մարդ է զալիս նրա մօտ. հացի մէկը նրան է տալիս։ Մի քիչ յետով, մի ուրիշ քաղցած է զալիս. հացի մէկն էլ նրան է տալիս. իրան մէկ հաց է մնում։ Բայց էլի չի ուզում մենակ ուտել. մտածում է, եթէ մի քաղցած մարդ էլ զայ ոչխարը կթէ, հացն էլ իրար հետ բրդեն, ուտեն։ Այդպէս էլ լինում է. զալիս է մի ուրի-

շը, հաց է ուզում։ Զօբանը նրան ասում է. «Նստիր, միասին ուտենք»։ Նստում են հացի։ Զօբանը մի լաւ կթուող ոչխար ունէր. ման է զալիս, չի զոնում։ Այն ժամանակ հիւրն ասում է նրան. «Մօտի ոչխարը կթիր»։ — «Կաթ չունի, «կըսըր» (ամուլ) է, ասում է չոբանը։ — Գու կթիր, կտեսնես, կըկնում է նորեկ հիւրը։ Զօբանի խելքը զնում է. եօթը տարուան ամուլ ոչխարը նործին կթուանի պէս կաթ է տալիս։ Ինչ որ է՝ ուտում են, խմում, յետ նստում։ Հիւրն ասում է չօբնին. «Հիմա ինչ փափագ որ ունիս, ասա»։ — Նա էլ, թէ «ի՞նչ ասեմ. քեզ լաւ յայտնի է»։ Հիւրը խաչակնքում է չօբնին, նա խկոյն սպիտակում է. յետոյ ոչխարներին է խաչակնքում, նրանք էլ են սպիտակում։

Հայր Աբրահամի մլտքն է զալիս չօբանը։ Պաշարը վերցնում, գնում է նրա յետեկց։ Իր չօբնի մօտից անցնում է, բայց չի կարողանում ճանաչել։ Գնում է ուրիշ չօբաններից հարցնելու իր խաշների տեղը։ Նրանք էլ ցոյց են տալիս։ Վերջապէս մանգալով զալիս է իր չօբնի մօտ և ասում նրան. «Ասա, թէ զիտես, ինչ պատահեց իմ չօբնին, որ չեմ կարողանում գտնել»։ Նա էլ ասում է. «որ տեսնեմ՝ կը ճանաչեմ»։ Հայր Աբրահամն ասում է. «Թեւի վրայ մի նշան ունի. որ տեսնեմ՝ կը ճանաչեմ»։ Այդ լսելուն պէս՝ չօբանը թեւը բաց է անում. Աբրահամը ճանաչում է. Զարմացած՝ հայր Աբրահամն հարցնում է նրան. «Այս շնորհքը ինչ զայէս ձեռք բերիր»։ Զօբանն էլ ասում է, թէ «քո երեք հացովը»։ Հ. Աբրահամն ասում է նրան. «Այդ շնորհքը ինձ տուր»։ Զօբանն էլի ասում է. «Ես որ երեք հացով այս շնորհքը զտայ, դու ահազին կարողութիւնովդ ինչի՞ չես զտնում»։ Դրանից յետոյ Հ. Աբրահամն էլ գնում է սարը, մտքումը զնելով՝ որ առանց հիւրի հաց չուտէ։ Բայց սատանան հակառակում է նրան. 40 օր ճանպան կապում է. որ հիւր չը զայ նրա մօտ։ Կինը շարունակ կրկնում է նրան, թէ «այ մարդ, հերեք սպասեցիր. հաց կեր, քաղցած մեռար», բայց նրան ականչ չի կախում։

Քառասներորդ օրը որ զալիս է, Հ. Աբրահամն ասում է կնոշը. «Ել գնա, դուրսը նայիր, տես թէ մարդ զալիս է»։

Կինը դնում է, նայում, տեսնում է որ մէկը գալիս է՝ ոչ երկնքից է, ոչ գետնքից: Այդ որ լսում է, չ. Աբրահամը պատուիրում է կտրել հորթը և ուղելիք պատրաստել:

Հիւրը գալիս է, հացը որ ուտում, պլծնում են, կովը հանդից գալիս, բառանջում է դռանը: Հիւրը հարցնում է Աբրահամին: «Ինչի՞ է կովը այդքան բառանջում»:—«Տէր, քեզ յատնի է», ասում է նա: Այդ որ լսում է՝ հորթի վլուխը, ոտներն ու ոսկորները փոստի մէջ լցած՝ բերել է տալիս իր մօտ: Հիւրը փչում ու խաչակնքում է նրան. հորթը հոգի է առնում և դնում մօրը ծծում:

Եշեա հարգաբէն: Յիսուսը երբ երկինք է՝ համրառնում, Եղիա մարդարէին հարցնում է, թէ իրանից յետու քանի անդամ պիտի գնայ երկրի վրայ: Մարդարէն ասում է, թէ եօթն անդամ պիտի գնայ: Առաջին անդամին պիտի գնայ «բէ՛րէ՛քէ՛թը» կտրի աշխարհքից. երկրորդ անդամին՝ սէրը պիտի հեռացնի մարդկանցից, նրանց պիտի իրար զցէ. երրորդին՝ ամօթը պիտի վերցնէ մարդկանցից. չորրորդին՝ ջրերը պիտի փրչացնէ... (Մնացածը պատմողը չէր լիշում):

«Թօփալ» կոթողիութը: Եօթը վարդապետ պասն ու ուտիսն էին ջոկում: Դրանցից վեցը առաջ էին եկել, մէկը «թօփալ» էր, յետ էր մնացել: Առաջ եկողները մեծ պասը եօթն օր են որոշում, յետեւց գալիս հասնում է «թօփալը». նրան որ յայտնում են իրանց որոշումը, նա իրը թէ չի լսում ու հարցնում է. «ինչքան. եօթը շարաթ»:—իհ, կուզես քո ասածը լինի, ասում են դրանք ու նշանակում:

Պատմամ են էլի, թէ հին ժամանակ վարդապետները ցորենի հացը պաս էին դրել: Այդ որ իմանում է «թօփալ» վարդապետը, գալիս յանդիմանում է նրանց, որ ցորենի հացն էլ պաս են դնում: Եւ իսկոյն, նրանց աչքի առցւ, լծում է եղներ և մտնում ծովը ցելում: Գուրս է գալիս և նրանց ասում. «Հիմի էլ դուք գնացէք իմ ցելած տեղերը ցանեցէք»: Նրանք զարմանքից քարայած տեղից չեն շարժում: Տեսնում էք, ասում է «թօփալը», դուք որ այդքան բանից վախենում էք, ինչպէս էք համարձակում ցորենի հացի պէս բանն էլ

պաս դնել»: Դրանից դէսն է, որ ցորենի հացը պաս չեն համարում:

X. Զար ոգիներ.—Սատանայ

Համշէնցի հայր խոր համոզուած է, որ բնութեան մէջ չար ոգիներ կան, որ Արարչից անկախ և Նրան հակառակ գոյութիւն ունի մի չար զօրութիւն, որ ամեն կերպ աշխատում է իմել մարդկալին ազգը Աստծու ձեռքից, Նրան փորձանքի մէջ զցիլ, մատնելով նրան յաւիտենական տանջանքին: Մարդկանց տանջանքը նրա միակ նպատակն ու ուրախութիւնն է: Կոյն իսկ թէւ լսել է, որ մարդկանց հասած բոլոր աղէտները մեր «մեղքերի» համար են գալիս Աստծուց, բայց երբեմն էլ դրանց ուղղակի վերագրում է աւելի բնութեան մէջ եղած չար ոգուն, սատանի զօրութեան, քան բարի Արարչին, Արին չար միան չարի ներգործութիւնը մեղմացնելու և զգացնելու համար: Ալշտ է՝ նա Արարչին չարից աւելի մեծ է համարում է միայն չարի ներգործութիւնը մեղմացնելու պատճեն համար: Ալշտ է՝ նա Արարչին չարից աւելի է վնասում, նա այդ չարից, սատանակից աւելի է վախում, քան իր Արարչից: Աստուած թէ որ միւս կեանքում պիտի պատժէ նրան, սատանան ուղղակի այստեղ է փորձանք բերում նրա զլիսին, նրան նեղութեան մէջ զցում:

Բոլոր չար զօրութիւնների աղբիւրը նա համարում է սատանին, որ երբեմն իբրև «փէրի» ու «ջին»—խաբում է ջահէլ պատանիներին ու երիտասարդներին, իբրև «ջատու պառաւ»—խեղդում է օրօրոցի երեխաներին, իբրև «ալ»—գալիս նստում է քնած մարդկանց վրայ, աշխատելով խեղդել նրանց, իբրև «խորթլաղ» («գունադար»)—մեղաւոր մեռելներին անգամ հանդիսատ չի թողնում գերեզմաններում, վեր հանում, ման է բերում նրանց գիշերներով:

Ով էլ լինի, կին թէ տղամարդ, տանը թէ դուրսը, ճանապարհին, թէ ջրի մօտ, հիւանդ թէ առողջ,--բոլոր ենթակայ են նրա փորձութեան: Ինչ տեսակ վաստ ու չար բան որ լինում է, բոլորը նբա ուղելովն է, ինչ ցաւ, ինչ փորձանք՝

ինչ անյաջողութիւն, որ գալիս է մարդու գլխին, բոլորը նըրանից է: Եւ այդ ահեղ թշնամու դէմ, այդ անհաւասար կռւում՝ Աստուած մարդուն իրակ զօրաւիդ ու օդնական իր հրեշտակներին է դրկում, որոնք սակայն մինչև այսօր կայծակի հրեղէն հարուածներով ոչինչ չեն կարողացել անել նրան. չարը առաջուան պէս տիրում է աշխարհքում: Ամեն անդամ, երբ սատանան հետամուտ է լինում Տիրոջ ստեղծուածին, հրեշտակը հասնում է նրան, աշխատելով աղատել նրան փորձիչի ձեռքից: Թէ, որ աղատում է, ուրախ-ուրախ թռչում, հեռանում է նրանից, սատանին ուեկրես թողնում, իսկ երբ չի կարողանում, լաց է լինում նրա համար:

Սատանան ցերեկով ձորերի ու փոսերի մէջ է մնում, զիշերը գուրս է գալիս բայց տեղը և կամ ջրերի ափը: Դրա համար է որ զիշերով առհասարակ լաւ չեն համարում ջուրը դնալը, կարող է չարին ռաստ գալ: Նրա ձեռքն ընկնողը հեշտ չի աղատուիլ, կը բռնեն սկզբում մի քիչ հետները կընկնեն, կը դուարճանան, բայց վերջը կը չարչարեն ու հոգին կը հանեն, թէ որ բռնուողը ինքն իրան մոռանալ, Տիրոջ անունը չը տալ և կամ երեսին խաչ չը հանէ:

Սատանան էլ իր գիր-կարդումն ունի, նա էլ «աւետարան» ունի, բայց մերի նման չէ: Հիւանդի վրայ «կաշտում» արած ժամանակ նա էլ է կարդում: Կարդացողը պէտք է ջրի պէս շուտ-շուտ կարդալ, թէ չէ սատանան առաջ կանցնի, իր «կաշտումը» կըսալացնի, մերը կը կտրի:

Առաւոտը վերկենալուն պէս՝ պէտք է աչքերը լուանալ, որ սատանան աչքը չը մտնէ:

Իրիկունները տունը աւլելուց յետով, «կախը» («տէղը», աղեղը), ինչպէս և «օղուցք» ջուրը պէտք է պահել մինչև միւս առաւօտ, զիշերով դուրս ըլթափել, թէ չէ կարող է սատանի վրայ թափուել, նա կը բարկանայ և մարդուն «չարթմիշ» կանէ (կը խփի):

Նոր պսակուած տղին զիշերը, մթնով գուրս չեն դրկիլ, որ ըլ լինի, թէ չարը խփի և կամ ջիները բռնեն:

Գիշերով թէ որ ասեղ ընկնի ձեռքից, գետին չի ընկնիլ. սատանան կը բռնի:

Կրակին որ փչես ու չը վառի, պատճառը էլի սատանան է, նա է որ չի թողնում կրակին վառուի: Թէ որ փչելիս հետը մի վատ խօսք, մի «քովֆը» անեն, սատանի քէֆը կը դայ. այն ժամանակ կը թողնի:

Մի տեսակ թիթեռ կայ, որին «սատանի թիթեռ» են ասում. նրան էլ սատանան է խաբում. զլկում է, թէ կրակ տանի, բայց այրում է կրակից:

Գիշերը, մթնով ծառերի վրայ երբ մի լոյս են տեսնում, ասում են՝ «սատանի կրակ» է, փէրիներն են վառել:

Հաց ուտելիս՝ թէ գտալը ձեռքիցն ընկնի, ասել է՝ սատանան խփեց ձեռքին:

Հացի թափած փշուրքը գետնից վերցնելիս, թէ որ փը չենք ուտենք, սատանան կը պատռի, թէ չը փշենք՝ ուրախ կը լինի:

Հաց ուտելը վերջացնելուն պէս՝ սեղանը պէտք է խսկոյն վերցնել, թէ չէ հրեշտակը լաց կը լինի, սատանան կուրախանայ:

Իրիկնահացն անելուց յետոյ ամանները պէտք է անպատճառ նոյն զիշերը լուանալ, թէ չէ «ջիները» կը գան զիշերը և թքով կը լուան, իրանց համար կերակուր կեփեն, կեղտուտ վեր կը զցեն, կը գնան:

Երբ մի բան կորչում է և չեն գտնում, ասում են, թէ սատանան վրան նստած է: Դրա համար ձեռքի ափին թըքնում են ու ասում. «Սատօնայ, պոչդ ճղկեմ կու. ետ գնաքոնի վրայըն»: Միւս ձեռքն էլ բերում դնում են թքի վրայ խաչաձեւ. և չորս կողմը գնելով ասում են. «Բնտին ես տէ, բնտին ես տէ» (այս կողմն ես. թէ այն կողմն ես). յետոյ մէկ անգամից խփում են. թուքը որ կողմը որ գնում է՝ կորուսան էլ այն կողմը կը լինի:

Ջաղուկ մասին այս բաներն են պատմում:

Ջաղուն սովորաբար կինմարդ է լինում. աւելի պառաւնեքից, բայց պատահում է երբեմն և տղամարդ-ջաղու: Կինը

միշտ փոքր երեխաներին է խեղդում, իսկ տղամարդը՝ միայն հորթելը; Զաղու լինում են սովորական, մեր տեսած պառաւներն ու տղամարդիկը, որոնք աներևոյթ չար զօրութիւնով՝ դառնում են ջաղու: Որ հարցնէք՝ մէկ-մէկ շատ պատմութիւններ կանեն, թէ ինչպէս գիշերով ջաղուին բռնել, նեղն են զցել, թէ ինչպէս յանկարծ զարմացել են, երբ տեսել են, որ ջաղու ասածը իրանց դրկեցը կամ ծանօթն է եղել, որից ոչինչ կասկած չեն ունեցել և այլն:

Ջաղուն սովորաբար գիշերն է ման զալիս: Նրա համար ասում են, որ մաղլի մէջից հաց չի ուտիլ, և մի ճախարակ ունի, վրան որ հեծնի՝ մի գիշերում մինչի չնդկաստան կերթայ կը գալ: Երեխանց խեղդելու համար ջաղուն հօթը դերեղմանից հող է վերցնում և իր ուզած տան վրայ լցնում, որ անհցոց վրայ իորը քուն բերէ և երեխին խեղդի, նրա «ջիգէրը» գողնակ, տանի ուտէ: Եթէ ուրիշ երեխայ չը զտնէ, իրանը պիտի խեղդէ:

Ջատուից ազառուելու համար տան երթիկի տակը մի աման ջուր են դնում, որ ջաղուն երբ զայ, ջուրը նրա աչքին ծով երեայ, յետ զառնայ: Եկած ժամանակն էլ՝ երբ տնեցիներից մէկը նրան տեսնի, չպէտք է բարձրածայն իմաց տաէ ամէնքին, թէ չէ ջաղուն խկոյն կը չքանայ: Պէտք է մի ասեղ վերցնել և ծածուկ գլխի շուրջը երեք անգամ պտտեցնել և յետուի կողմից գետինը խրել: Գրանից յետոյ էլ չի կարող զալ: Զաղուին կարելի է բռնել՝ եթէ որ տանը մատաղ արած լինին և մորթին պատին կախ լինի և տեսնողը մորթու տակը պահուի: Բռնելուց յետոյ տաք-տաք «ակիշով» պէտք է նրա ձեռքի ափը դաղել, որ ջաղութիւնը թող տայ, մոռանայ:

Այլ մի աներևոյթ ողի է, որ երեմն գիշերները զալիս նստում է քնած մարդկանց վրայ, վրաներն այնպէս ծանրանում, որ մարդը տակը չի կարողանում շարժուել: Գրան ալ-նիստ են ասում: Գրանից ազառուելու համար պէտք է բռութ մատը շարժել, պառկած տեղը գլխի տակն էլ «Կիպրիանոս» դնել:

«Խորթլաղ», Մեռածը երեմն գերեղմանից դուրս է դալիս, բըջում, երեւում մարդկանց մէջ. դրան են ասում «Խորթլաղ»:

«Խորթլաղը» սովորաբար թուրք մեռելներից է լինում: Նա մարդկանց աչքին երեք տեսակ է երեւում, մարդու, շան կամ կատուի ձեռվ, ամենից աւելի վնասաղը մարդկերպ երևողն է: Մեռելը երբեմն երևում է միայն սպիտակ պատանքը հագին: Նա գիշերով գալիս է, դռները իջ խթիկացնում, սրտառուջ ձախով կանչում, աղաչում, տնեցոյ սարափեցնում:

Մի գիշեր մի ճանաբարդ թուրք գերեղմանատան մօսով անցնելլս՝ երկու սկրուն շնիկ է տեսնում. վերցնում է նրանց, ձիռ գաւակը դնում և հետք տուն տանում: Գիշերը շնիկները գոմն է պահում: Մէկ էլ տեսնեն՝ կէս գիշերին շնիկնելը ոռնոց են դնում, զաները ճանկուտում: Գնում է՝ թէ դուռը բանայ. քացի է տալիս՝ չի բացում: Առաւօտը դնում տեսնում է, որ գոմնում երկու ահաղին մեռել ընկած են անշունչ: Մարդը խելքի է ընկնում, որ սրանք իր բերած շներն են, ստիպուած տանում, նորից թագում է նրանց:

«Խորթլաղը» երբ վնաս է տալիս, կարելի է ազատուել նրանից՝ մորթելով նրան երկաթի կոթ ունեցող դանակով, մակուկի թիուլ և կամ մանդաղով:

Ասում են՝ թէ որ թուրքը իր կեանքում զոնէ մէկ անգամ հայ տէրտէրի օրհնած հաց կերած լինի, «Խորթլա», չի դառնալ:

Ահա և մի երկու աւանդութիւն սատանի մասին:

Մէկ անդամ սատանան ասում է հրեշտակին. «Երի իրար հետ կոռւենք»: Հրեշտակը համաձայնում է: Սատանան վերցրնում է մի մեծ, երկայն ձող, իսկ հրեշտակը մի պատլիկ փայտ: Մտնում են փուռը: Սատանի փայտը շատ երկայն էր, չի հաւքում փուռը. Հրեշտակը իր կարճ փայտովը խփում է խփում սատանին, թալցնում: Մի քանի օրից յետոյ սատանան պատահում է հրեշտակին և էլի առաջարկում կռւել, բայց այս անգամ բաց տեղում: Հրեշտակն էլի համաձայնում է: Սատանան այս անգամ վերցնում է մի փոքրիկ փայտ, իսկ հրեշտակը մի մեծ, երկայն «ջոփ» (փայտ) է գտնում. սկսում են կռիւր: Հրեշտակի փայտը երկայն էր, սատանին մօտենա-

լու չի թողնում. խփում, խփում, ջարդ ու խուզդ է անում, սատանի հոգին հանում:

Մէկ անգամ էլ աղամորդին ու սատանան պայման են կաղում, որ իրար հետ «օրթրքաթիւն» (կիսրարութիւն) անեն: Սոխ ու սխտոր են ցանում: Կանաչը գուրս զալուն պէս՝ մարդ հորցնում է սատանին. «Երեսինը կառնես թէ՛ հողի տակինը»: Սատանան ելեսինն է ուղում: Ժամանակը զալիս հասնում է. սատանան իր փայլ քաղում, տանում լցնում է մի տեղ. մի երկու օրում փթեցնում, իսկ մարդն ուրախ-ուրախ հաւաքում է հողի տակի դիմուրը, տանում, ծախում, փող շինում:

Մէկէլ տարին սատանան նորից պայման է կապում աղամորդու հետ: Այս անգամ էլ ցորեն են ցանում: Առաջուան պէս՝ հէնց որ կանացում է արտը, աղամորդին հարցնում է սատանին՝—որը պիտի առնէ. երեսինը, թէ հողի տակինը:— «Հօ ամեն ժամանակ չետ կարող իսաբեկ, ասում է սատանան, այս անգամ տակինը ես պիտի առնեմ»: Աղամորդին բուրբուցունը քաղում տանում է, իսկ սատանան փորում-փարփրում է հողը, տակը բան չի դտնում:

XI. Կ ա խ ա ր դ ո ւ թ ի ւ ն:

Համշէնցի ժողովուրդը ինչպէս որ անխախտ հաւասու ունի դէպի բնութեան չար զօրութեան զոյտթիւնը, նոյնպէս էլ բնունում է, որ չարը խալիանելու համար իսան յատուկ դեղեր ու միջոցներ, որոնց դադանիքն ու ազգեցութիւնը վերադրում է երեմն չար, երբեմն էլ բարի զօրութեան, սատանի ու սրբերի կողմից մարդկանց տրուած շնորհըն: Կախարդութիւնը արհեատ շինած, միջիախն նրանսկ ասկրող մարդիկ բոլորովին չկան նրանց մօտ: Ճատ քիչ կը պատահին նրանց մէջ այնպիսիներ, որոնք երկարործութեան հետ՝ երբեմն պարապ ժամերը այդ տեսակ բաներին նույիլեն: Այդ էլ շատ անգամ աղնքան փողի համար չեն անում, ինչքան վարձքի կամ հէնց այնպէս հարևանութեան համար: Կախարդական բաների համար աւելի տակ աղամար աղամար:

մօտիկ մօլլաներին են դիմում: Որանք էլ են լսել «Հազարական» գրքի մասին. բայց ոչ տեսնող կայ, ոչ էլ ունեցող:

Դիմանց մօն են տանում դիմաւորապէս հիւմնդմերին «գիր» անել տակու համար զանազան ցաւերի դէմ. լուսնուներին, դիւհարներին ու վախածներին—չարից, «կեօխից» ու վանից աղամերին համար: Դիմանց են դիմում ամուլները որդի բերելու համար, կորուստ ունեցողները կորուստը գտնելու, երեմն էլ անձրևի գայն ու չը զալլ իսանալու համար և այն:

Կախարդներն այս միջոցներն են գործ գնում «գիր» են անում, «կաշտում» են անում, «թէ՛ զբայլ»—համրիչի վրայ հատիկ քաշում, «հօմալի», «բազմուտ», «նուսկա» զրում, «թը լլիսմ» անում, իսկ երբեմն էլ «տեսնիլք» եղողները գուշակութիւններ-մարգարէութիւններ անում:

«Գիր» են անել տալիս աւելի այն հիւմնդների համար, որոնց համար կանկան կայ թէ չարիցն է, վախից կամ «ակնը-ուելուց»: «Գիր» են անել տալիս ոչ միայն մարդկանց, այլ և հիւմնդ մալերի համար էլ: «Գիր» ասածը յայտնի ու ընդունուած որոշ խնդրուածքներ ու դիմումներ են, որոնց խմանտը երբեմն վերացական ու այլաբանական ձևերով է արտակարգուում, իսկ երբեմն էլ իսուքերից ոչինչ չի համկացում: Ամեն մի ցավի համար չոկ «գիր» են անում. երբեմն նոյն իսկ մի տեսակ ցաւի համար երկու-երեք տեսակ «գրեր» կան: «Գիրը» աւելի մտքումն են անում, կամ շրթունքներով կամաց փոփում, բայց անպէս որ չը լսուի, հետն էլ մի աման ջուր, կրակ, անեղ կամ մի ուրիշ բան վերցնում, նայմած ցաւի տեսակին:

«Գիրը» սովորաբար պառաւեներին ու գիւղի տիրացուներին են անել տալիս, բայց դժուար ճապէններում ծանր հիւմնդների համար դիմում են աւելի մօլլաներին ու յայտնի մարդկանց:

Երբ մէկը միւսին «գիր» է սովորեցնում, թէ որ երկուսն էլ մի սեռից են, մէջտեղը իրանց սեռիցը մի երեխայ են նըստեցնում, որպէս զի սովորեց իսուոյ «գլիրը» ուրիշ ժամանակ էլ զօրութիւնը չը կորցնէ. իսկ երբ սովորողն ու սովորցնողը

մի սեռից չեն լինում, այսինքն՝ մէկը կին է, մէկը տղամարդ, մէջ տեղը երեխայ չի ուզիլ *):

Հիւանդի վրայ ամենից առաջ «կաշտում» են անում: Կարդացողը ինքը գիտէ, թէ ինչ պիտի կարդացուի: Ամեն կարդացածը օգուտ չի անիլ. որոշ գրքեր և որոշ տեղեր կան կարդարութ: Աւետարան կարդում են հիւանդի վրայ միայն տէրտէրները. բայց դրանից աւելի կտրուած են նարեկն ու կլպրիանուը, որ դիւղի կախարդ-տերացուներն են կարդում: Նարեկը թէ որ սալ քարի վրայ էլ կարդացուի, քարը կը հալի. այսքան խիստ է կտրում: Համարեա դրա չափ ոյժ ունի և կլպրիանուս ասած գիրքը, որ սովորաբար ամեն տեսակ հիւանդների գլխի տակն են դնում, փոքր, ծծկեր, լալկան ու չքնող մանուկներից սկսած: Դողը կտրելու համար բատկապէս նարեկն են կարդում:

Երբ «կաշտումը» օգուտ չի անում, «հօմալիլ» են շինում, կտոր-կտոր թղթի վրայ բաներ են գրում, նեղ ու երկայն, հիւանդի բօյի չափ իրար են կցում ու նրան տալիս, որ վրան պահի: Դրա նման մի տեսակ թուղթ էլ են գրում. նրան էլ «բազմօտ» են ասում:

Երբ սովորական «կաշտումը», «գիրն» ու «հօմալիները» օգուտ չեն անում, դիմում են իրանց յայտնի մօլլաներին: Մօլլան սատանին բռնելու «գիրը» գիտէ. սատանի թագաւորութեան կնիքը մեծ մօլլի ձեռքին է. նրա զօրավարը մօլլան է: Մօլլան դալիս է հիւանդի մօտ, նրա գլխին աղօթքներ ու «կաշտումներ» անում, «նուսկա» գրում և «թլիսմների» զօրութիւնով վերջապէս, եթէ չի մեռնում հիւանդը, աջողում է դուրս հանել հիւանդի փորից չար «ջիներին» և լաւացնել հիւանդին:

«Թէ՛ղը» կամ համրիչ քաշում են աւելի եղանակն իմա-

*) Ժողովրդական «գրերից» այստեղ մենք ոչ մի հատ չենք բերում, քանի որ դրանք բոլորն էլ չօրինուած են ժողովրդական բարբառով, որ առանց բարարանի ու քերականական բացատրութեան դժուար կը լինի հասկան: Այդ թողնում ենք մեր մի ուրիշ ուսումնասիրութեան՝ «համշէնցենայերի բարբառին», որ մտադիր ենք լոյս ընծաչել ժողովրդական բանաւոր աւանդների հետ միասին:

նալու համար: Թէ՛կ շատերը քաշում են, բայց դրան առհասարակ այնքան չեն հաւատում:

Երբեմն, թէ՛կ շատ հազիր, պատահում է, որ հիւանդ կանանցից մէկն ու մէկը «տեսիլք» է լինում: այն է՝ ուշքը գնում է, միքանի օր անզգայ մնալուց յետու նորից ուշքի է զալիս և սկսում է պատմել այցելուներին, թէ ինչ շնորհքի է արժանացել ինքը Աստծուց, թէ ինչպէս ինքը գնացել, ման է եկել միւս աշխարհը, թէ ում և ինչեր է տեսել այստեղ, թէ ինչպէս նեղութեան մէջ է այստեղ նրանց այս ինչ աղջականը, թէ ինչ է պակաս նրան և կամ թէ ինչ է հարկաւոր անել, որ ննջեցեալը հանդստանալ միւս կեանքում և աղն, կըցելով այդ պատմութիւններին մի շարք զուշակութիւններ ու մարդարէութիւններ այցելու դրացիների կեանքի ու ապագայի մասին:

XII. ՍՅՈՏԻՎԱՊԱԿԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

Գորշակառականութիւններ: 1. Գործի դնալիս, թէ որ ճանապարհին կտցահարը «Ճկճկալ», գործը զլուխ չի դալ:

2. Թէ որ կաչաղակը «ճճճալ» ճանապարհի ձախ կողմը, գործը չի աջաղուիլ, կամ թէ կրուստ մանզալիս չի գտնուիլ. իսկ թէ աջ կողմը «ճճճալ», վնաս չի տալ:

3. Աքաղաղը թէ որ ցերեկը շէմքին նայելով իրար վրայ երեք անդամ կանչէ, կամ հիւր կը դայ, կամ մի նոր լուր կառնեն:

4. Ականջը որ ծւայ, նոր լուր կառնեն:

5. Ազուաը որ տան վրայ կռկւալ, տան դրսի աղջականներից մէկը կը մեռնի:

6. Երբ ուզում են խմանալ թէ իրանց դրսի աղջականը դալու է թէ ոչ, բռնում են կատուի պոցից, թէ որ պոչը շարժէ հորիզոնական ձեռով, չի դալ. իսկ թէ վերեկց ներքեւ կը դալ:

7. Փէ՛խ-չաքալը» (չախկալի մի տեսակն է) ում արտի մէջ որ ոռնայ, նրա տիրոջ տնից մէկը կը մեռնի և կամ մի վնասի կը հանդիպի: Ասում են՝ որ ոռնացած տեղը «փէ՛խ-

Հաքալը» փայտի մի կառոր է թաղում, թէ որ փայտը գանեն ու հանեն, վնաս չի դալ, թէ որ չը քտնեն՝ վնաս կը տեսնեն:

8. Կատան որ արևմուտք զառնայ ու պառկի, լաւ նշան է. մեռել կը լինի:

9. Երթիկից որ մուր թափուի, տունը մօրուքաւոր մարդ կը դայ:

10. Մուբբ հողի վրավոց վերցնելիս՝ թէ որ քութ մատին կպչի, տունը կին մարդ կը դայ. իսկ թէ ցուցամատին կպչ՝ տղամարդ կը դայ:

11. Արտում բանելիս՝ թէ որ «Էօդնէ՛րից» (մի որոշ չափ տեղ) վերև մի գործ տեսնեն, «Էօդնէ՛րը» վեր չի դնալ, չի աւելնալ:

12. Հիւանդը թէ որ քիթը կամ եղունգները «քցմոլտէ՛» կը մեռնի:

13. Փռնդուալոց յետոյ մատին թքում, քսում են յն-քին, մէկ-մէկ իրանց մօտեկների անունը տալով: Որի անունը տալոց յետոյ որ մազը ընկնի, ասել է՝ թէ նա է իրան լիշել:

14. Ճունը թէ որ ոռնայ, մեռելի կամ հիւանդութեան նշան է. պէտք է իսկոյն մի դանակ ցցել դետին, որ նշանը սուս դուրս դայ:

15. Երկու աղուաւ թէ որ իրար յետելից կոկուալիս թըռչն, մեռլի նշան է:

16. Առհասարակ ամեն տեսակ բերքի առաւտ գալը լաւ նշան չի համարւում. վատ բան է գուշակում:

17. Բնկած հրացանի վրայից եթէ մէկն անցնի, էլ չի դիպչել:

18. Իր բունած առաջին որսից ով որ ուտի, լաւ խփող չի դուրս դալ:

19. Հարսնիք կանչելիս՝ թէ որ «Ճընողը» (կանչողը) նըստի, հարսը ծոյլ ու «նստուկ» կը լինի:

20. Աղջիկը հարս գնալիս՝ ոտները գետնին չը պէտք է քոտքոտացնի, թէ չէ՝ տան «բէ՛րէ՛քէ՛թը» հետը կը դնայ:

21. Արտում ցանք անելիս՝ երեխի վրայ սերմ զցելը լաւ չէ. երեխան չի մեծնալ:

22. «Ղալիշը» (լծի կաշին) զլիսիվալը կախելը լաւ չէ. տանը վնաս կը դայ:

23. Տրեխը առաջ աջ ոտինը պլատի հաղնել. ձախը առաջ հաղնելը լաւ չէ. գործը աջող չի դնալ:

Կերտէն «Համապատճեն» օրեւ: Առհասարակ չորեքշաբթին ու ուրբաթը շաբթուան մէջ վատ օրեր են: Այդ օրերին գործ սկսելը լաւ չէ. նոր հերկ և առհասարակ երկրագործական նոր բան չեն անել:

Հերկի, ցանքի և ճանապարհ գնալու համար շաբթուան մէջ աւելի լաւ են համարւմ – երկուշաբթին, հինգշաբթին և շաբաթը: Մասնաւորակէս ցանքի համար ամենից լաւ. է երկուշաբթին, ապա թէ հինգշաբթին ու շաբաթը. ամենից վատ են երեքշաբթին և ուրբաթը. այդ օրերին ցանածը մուր կը բռնի և որոմ շատ կը բերի: Երեքշաբթի առհասարակ նոր գործ չեն սկսում, ոչ ցանք և ոչ էլ ճանապարհ դնալն:

Երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ երեկոներին գործը շուտ են թողնում. այդ երեկոներին չի կարելի մինչեւ մուլթը բանել. որովհետեւ մեղք է: Այդ երեկոներին «չորեք մուտ», «ուրբիշտէք» ու «կիրակշտէք» են ասում: Ով որ այդ երեկոներին սամի ծոլի, որդին կը ծոլի ու գործն էլ չի աջողիլ: «Չորեքմուտի» և «Ուրբիշտէքի» երեկոներին շատ բանողը «հաւկուր» կը բռնուի:

Չորեքշաբթի և ուրբաթ ոչ շոր են լուանում և ոչ էլ եղունգ կտրում: Եղունգ կտրում են աւելի հինգշաբթի կամ շաբաթ. միւս օրերին լաւ չէ. մանաւանդ չորեքշաբթին և ուրբաթը, այդ օրերին կտրած եղունգը «չուխտ» կը դառնայ (հաստանալ) կամ շան մազ կը բռնի: Ասում են որ չորեքշաբթի օրը ծառ կտրելն էլ լաւ չէ. ճիճուն կուտէ:

«Կօկօրասի» (մեծ պասի առաջին շաբաթը) ամբողջ շաբաթը բանելու համար լաւ չեն համարւմ: Երկուշաբթին «ցեստուն» է, ով որ այդ օրը բանի, ողջ տարին նրա տանից ցեցն անպակաս կըլինի: Երեքշաբթին՝ «Սէլտուն» է (Սէլտուր) էլ

են ասում). այդ օրը բանողի արտը «սէլլ»—հեղեղը կը տանի: Զորեքշաբթին՝ «Քէ՛լտուն» է. մալերը գալլը կուտէ: Հինգշաբթին՝ «Քօմտուն» է. շէնքերը քամին կը տանի: Ուրբաթ՝ —«մկտուն» է. տանը մկներ կը շատնան: Ճարաթ՝ «ցաւտուն» է. տունը ցաւով կը բռնուի:

Մարտի 1—9 ասում են «լիկախօնձ» է. սիմինդր չեն ցանում:

Ծննդի ու Զատկի լինանքին ամեն իրիկուն «Հաւկուր» է: Թէ որ ծնողները «Հաւկուր» ըլ պահեն, այսինքն՝ արևի մըտնելուն պէս՝ դործը ըլ թողնեն, որդիքը «Հաւկուր» կը բըռնուեն: Զատկի լինանքի համար էլի ասում են, որ ամեն հինգշաբթի մինչև Համբարձում՝ իրանց հները սովորութիւն են ունեցել կիրակի պահելու. «սէլլ» օրեր են եղել նրանց համար. ըլ պահողի արտը ջուրը կը տանէր: Թէև լսել են որ այդպիսի մի սովորութիւն եղել է իրանց մէջ, բայց հիմա այդ օրերին համարեա ոչ ոք կիրակի չը բռնում:

Հաց: Ուրիշի ձեռքին հաց կոտրելը լաւ չէ, մեղք է. պէտք է ձեռքիցն առնել, այնպէս կոտրել, և կամ թէ չէ թողնել, որ ինքը կոտրի:

Հացը նոր հանած ժամանակ ուտելը մեղք է. Հացի «բուզ» պէտք է արտը դնալ հասնի, որ ապա ուտուի:

Հացը տակն ու վրայ չեն դարձնիլ. մեղք է:

Հացը շատ մեծ չը պիտի խածել, թէ չէ մեծ պատառը կը դողալ:

Հաց ուտելուց վերկենալ «ճապլտել» (ճմկոտիլ) լաւ չէ. մեղք է:

Ով որ «ճաշի» տակուցքը գդալով քերէ ուտէ, նրա հարսնիքին անձրև կը դայ:

Ով որ հացի մանր փշուրք ուտէ, նրա նշանածը սիրուն կը լինի:

Կնոջ հետ հաց ուտողի միրուքը «քեսա» կը լինի:

Կէ՛տանինէր: Նոր դնած մալլ յետ չփախցնելու համար պէտք է դնչից մինչև պոչի ծալը մի թելով չափել (պոչը պէտք է բռնել հօրիզոնական, կախ չը լինի). թելը պահել

տան կամ կոմի շէմքի գլխին. դրանից յետով էլ մալլ յետ չի փախչիլ:

Գալլ որ տաք-տաք ուտուի, հորթը կամ «փալախը» (գոմէշի ձագ) շոր «ծամուկ» կը լինին:

Ուրակէս զի նոր ծնած հորթը կամ «փալախը» ձախով լինին, թէ հորթ է՝ պէտք է դալի մէջ «բոլոքել» (բառաչել), իսկ թէ փալախ՝ պէտք է «մըռալ» (գոմէշի ձայն հանել):

Կովը կթող կնոջ մատին թէ որ մի մատնի չը լինի, կովը շատ կաթ չի տալ և ծձերն էլ կը տրաքուեն:

Մալլ գիշերը գուրս մնացած ժամանակ պէտք է դռան շէմքի վրայ դնել երկու գտալ խաչաձև, որ գաղանը մալին չմօտենայ:

Թէ որ մի «զիափի» կանչէ և ուրիշը նրան չը ձախակցէ, վերջինը կը բորոտի:

Փռի՞ ո՞ առառառու՞ր: Ջրաղացից նոր բերած ալիւրից փոխ տալը լաւ չէ. «բէրէքէթը» հետը կերթայ. պէտք է նախապէս մի քիչ վրայից վերցնել և ապա թէ տալ:

Սապոնը մէկին տուած ժամանակ տուողը իր ձեռքի վերի երեսին է դնում, այնպէս տալիս:

Ուրիշին հաւ ուուած ժամանակ՝ պէտք է հաւից Յ փետուր քաշել, բունը զցել, որ մնացած հաւերին վնաս չդպչի:

Սակարկութեան ժամանակ՝ պէտք է բութ մատների եղունդները իրար քսել, որ առուտուրը լաւ աջողուի:

Գործի կամ առուտուրի գնացած ժամանակ՝ պէտք է գուլպի մէկը շուռ տաւած հագնել, որ գործը աջողի:

Քսակի բերանը ներքեւ դարձած փող չը հանել միջից. «բէրէքէթը» կը դնայ:

Յաւեր ու դեղեր: «ԱՇԽԱՇԵԼ» — աշխաշել պահ: Կան մարդիկ, որ չար աչք ունին և կարող են աչքով տալ, այսինքն՝ ցաւ ու փորձանք բերել՝ եթէ նրանք մի բանի հաւնեն կամ նախանձեն:

Չար աչքից աշխատուելու համար այս միջոցները կան.

1. Թէ որ մէկը մի բան տեսնի ու աչքը մէջը մնայ, պէտք է թքի, թէ չէ՝ աչք կը տայ:

2. Թէ որ մէկին փորձել են, որ չար աչք ունի, նրանից աղատուելու համար պէտք է նրա ուսնամանը ծակել:

3. Կորածին կովի և առհասարակ «Լաթում» ու գեղեցիկ մալերի ճակտին կապում են վայրի խնձորենուց և կամ հասարակ ապակուց շինած զանազան տեսակ «յուլուններ» («աչիչ լիլուն»), խողի ատամ, նալերի կտորտանք, հաւի ծերտ շորի կտորի մէջ փաթթած, երեմն էլ ակրմոմ են կպցնում մի կողմի ականջի մազին, որ «չակնըռին»:

4. Որպէս զի արտի կամ «ածուքի» բերքը «չակնըռէ», մէջը տնկում են վայրի խնձորենու մի մեծ ճիւղ, վրան էլ կախում են մալի գլխի ոսկորը տրեխի հին թելով, կամ թէ վրան ձուի կճեփներ շարում:

5. «Աչկնըռած» կովին լաւցնելու համար պէտք է օջախի շղթան երեք անգամ կոխել խսա ջրի մէջ, երեք անգամ էլ մի խանձող գնել—հանել և ապա տալ կովին իմելու:

Վահածին այս գեղերն են անում. վերցնում 1 ձու, 1 հին տրեխի, 1 «մատմօն», 3 հատ ածուխ, 3 հատ մոխրի «փիփիլ» (հաց), «բէքմէղ» (պտուղներից շինած մեղր) կամ քացախ, տանում գերեզմանատուն, վրան դնում, կրկնում 3 անգամ «քու փայտ իսա է» (բաժինդ սա է) ասելով, և ապա վերադառնում առանց յետ նայելու: Եթ գեղը պէտք է վախեցած օրն անել; կամ թէ սպասել այնքան՝ մինչեւ որ էլի նոյն օրը դայ:

«Կեօլի», ինչպէս վերևն էլ ասել ենք, շատ պատճառներից է լինում. նոր ծննդկանից, մեռելից, մսից, օձից և այն: Ասում են մինչեւ անգամ փայտը ուսին տուն մտնելուց էլ փոքր երեխան կարող է «կեօլ» բռնուել: Դրանից բժշկուելու համար բացի վերը լիշածներից, կան և որիշ միջոցներ, բայց ամենապղու գեղը սա է. պէտք է հալել արձիճ կամ մոմ, (կամ երկուսը միասին), աւելի ոյժ ունի արձիճը: Հալում են այսպէս. ջրաղացի տակից գիշերով ծածուկ ջուր են բերում, այնպէս որ ոչ ոք չիմանայ. ոչ մարդ, ոչ թռչուն: Բերած

ջուրը գետնի վրայ չը զրած (թէ չէ զօրութիւնը կանցնի), կախում են ուղղակի օջախի շղթամից: Տուր բերողը ով կողէ լինի, միայն պէտք է մօր առջինեկը լինի: Յետոյ գնում են եօթը պատից (արտի) վայտ հաւաքում, որ նրանով տաքացնեն բերած ջուրը: Վաղ առաւտեան, թռչունները չը դարթած, պէտք է եօթը աղբիւրից էլ ջուր բերել. լցնել «սախօնը» (թաս), վրան 3 հատ հացի գդալ դնել, երկուսը մի կողմը, մէկն էլ նրանց վրայ՝ խաչաձև: Յետոյ հալում են արձիճը (կամ մոմը և կամ երկուսը միասին). ջրով «սախօնը» բռնում են «կեօլ» բռնուածի զլիխին, լցնում հալած արձիճը կամ մոմը «սախօնը»՝ գդալների արանքից: Ջրի մէջ սառչելուց լուսոյ արձիճը նորից հանում են, հալում և ածում «սախօնը». այդպէս երեք անգամ կրկնում: Այնուհետև «սախօնը» էլի գլխին բռնած՝ կրկնում են նոյն բանը առաջուան կարգով, ջակ-ջոկ որտի, ծնկների ու ոտների համար, մտքում նրանց անունը տալով, ամեն մէկին երեք անգամ: Հալողն ու «սախօնը» բռնողը միւնոյն մարզն է լինում և անպատճառ մօր անդրանիկը: Նոյնպէս անդրանիկ է լինում աղբիւրներից ջուր հաւաքում: Դրանից յետոյ հիւանդը կը լաւանայ, բայց հալած օրը չը պէտք է ուրիշի տունը գնայ, թէ չէ որիշն էլ կը բռնուի:

Կայ և որիշ գեղ: Պէտք է ման գալ, գտնել մի այնպիսի «մաղեօլի» փուշ (մոշի թուփ), որի ճիւղը ջոկ արմատ տուած լինի: Պէտք է ճիւղը մի քիչ բարձրացնել և հիւանդին նրա տակովն 3 անգամ անցկացնել՝ երկու արմատի արանքից, որ ցաւիցն ազատուի:

Երբեմն «մաղեօլի» տեղ վերցնում ճեղքում են միջից խաղողի վազը (տանու կամ փայրի) և կամ «չագուի փուշը», ծայրին մի քիչ թողնում, որ երարից չը բաժանուին. դրանց միջից անց են կացնում հիւանդին 3 անգամ:

Օձից «կեօլ» բռնուածին բժշկելու համար պէտք է մի օձ բռնել, կիսահողի անել, հիւանդին նրա վրայ լողացնել, որ ցաւը նրան անցնի, և ապա թէ բայց թողնել օձին:

«0քիտով» (ծնուների ու բկի տակի խուլերի հիւանդու-

թիւն) հիւանդ երեխին լաւացնելու համար պէտք է նրա հօր շապիքը լուանալ և նրա ջրով լողացնել երեխին:

Բնդանից չուր գնացրող երեխին պէտք է խմեցնել քեռու արեխների ջուրը:

Բնդան-է դէմ, ենթադրելով որ նա մկան կերած հացիցն է, բռնում կատուի ոտները Յ անդամ քսում են զրաից քկին, առելով. «մուկն օր հաց կերաւ. դուն ո՞յտեխ էլդ (ոզտեղ էիր)»:

Գայլ հծած մալի փորի տակ ու վրայից որ Յ անդամ մի քած շուն պտտեցնեն, էլ չի սատկիլ:

Գայլի կծած տեղից մի կտոր միս կտրում, դցում են նոր ծննդկանի ոտի տակ: Վէրքը լաւանալուց յիտոյ մինչև Շ տարի այն մալին էլ դացը չի մօտենալ:

«Քնեօր» ունեցող հորթին՝ ճտին մի թել են կապում և Յ անդամ սալորի ծառի շուրջը պտտեցնում. ապա վերցնում մի նոր մեխ, նրանով հորթի երկու ականջը թեթև կերպով ծառին մեխում ու թողնում, որ հորթը լնքը քաշի, ազատուի:

Անտառում մի տեղ նստելիս՝ պէտք է թքել և ապա նստել, որ չը լինի թէ բորսոտ «ղիափի» տեղ լինի և նստողը բորսոտի:

Թէ որ մէկը մի տեղ ընկնում, իրան ցաւեցնում է, տնից մէկը, հայրը կամ մի ուրիշը, գնում է ընկած տեղը փետատով փորում. թէ որ միջից ածուխ է զուրս զալիս, տանում իմեցնում է հիւանդին որ լաւանալ:

Երբ այլիները նորից ամուսնանում են, լսողները պէտք է իրանց զլիսի տակի բարձերը տակն ու վրայ զարձնեն, որ եքոր տակը գալ, աստառը վերևը, թէ չէ հարբուխ կընկնին:

Թէ որ երկար ու ծանր հիւանդը (աւելի՝ ծեր կամ անդամալոյն) բեղրեցնում է, չի մեռնում, ծածուկ նրա հասակի չափ թել են վերցնում և մի ուրիշ մեռելի հետ զերեզման գնում, որ հիւանդը շուտ մեռնի:

Ելառի յէշտառ-լինը: Սրանք էլ, ինչպէս ամեն տեղի հայ ժողովուրդը, խորին հաւատ ունին երազի վերալ: Ընդունում են, որ երազը սուտ, դատարկ բան չէ. մի միտք, մի իմաստ առնի մարդու կեանքի և ապագայ վիճակի վերաբերմամբ: Ե-

ըազների բացատրութեան նրանք աւելի են հաւատում, քան ուրիշ որևէ է նախապաշարմունքի: Միւսները կամաց-կամաց մոռացւում, անտես են առնւում, մինչզեռ երազին համարեա ամենքը հաւատում են: Այդ բանին վկայ ունին նրանք բացի ս. Գրքում պատմուած օրինակներից, և իրանց անձնական կեանքից բազմաթիւ զէպքեր, երբ այս կամ այն երազից յետոց յայտնի բաներ են պատահել: Մեծ հետաքրքրութիւնով տեսնողը զարթնելուն պէս սկսում է պատմել տանը, հարեանին կամ ընկերոջ տեսած երազը, աշխատելով նրանց կարծիքն իմանալ: Երազը մեկնելու համար սովորաբար իւրաքանչիւրը օգտում է պապերից լսած բացատրութիւնից: Երբեմն ծանր և սարսափելի երազների համար զիմում են տէրտէրի և կամ ուրիշ խելօքների խորհրդին, իրանց յուզուած ու անհանդիսական բաւականութիւն տալու համար:

Երազում տեսած ամեն մի բան իր մեկնութիւնն ունի, որ այստեղ աւելորդ ենք համարում մէջ բերել:

Մարմնի անդամների իտուլ: Սրանք էլ են այլ և այլ բացատրութիւն տալիս մարմնի անդամների խաղին, թէև իւրաքանչիւր ոչ ոք նշանակութիւն չի տալիս այդ բանին և սովորաբար անուշաղիր են թողնում: Եզքը որ խաղայ, ասում են, չը պէտք է ուրիշին ասել, թէ չէ աչքը լաց կըլինի:

Չեռքը որ քոր գայ, թէ որ աչը լինի, մէկից փող կը գայ: Խոկ թէ որ ձախը՝ մէկին փող կըտայ:

Ոտի տակը որ քոր գայ, ճանապարհ կը գնայ: Եւ այն:

Տ Օ Կ Ե Ր

Նոր-ապրի: Նոր-տարու. նախորդ օրին (գեկտ. Յ1) «Թաղկըմուտ» են ասում: Այդ օրը կանանցից նրանք, որոնց որդիքը ծաղիկ չեն քաշել, ոչինչ չեն անիլ, իսկ առհասարակ բոլորն էլ «ուօկ» չեն մանիլ, գլխները չեն լուանալ. որ մազը չսպիտակի և ալին: Այդ օրը եօթը տեսակ կերակուր. ու տեսակ-տեսակ. հացեր են եփում. եփած կերակուրն էլ ոմանք մինչեւ երեք օր ուտում են: Այդ կերակուրներն ու հացի տեսակներն

Ե՞ն. լոբեա, եփած «լաղա» (սիմինտր), «րօնջրով ապուր», «արմով ապուր», պասուց «ճաշ», «քեաստօննա» դպոմ, չիր, «խօրոց» դիմով ու պըռասով հայ, «բաղլօմա» (սաջլ վլաւ եփած տափակ հաց), «քարհաց» (քարի մէջ եփած հաց), «փուռնիտ» (կլոր, գունաւ հաց) և ալին:

Ծաղկը մուտին՝ տուն-ելթիկ աւոմ, աւլածը չուրն են
թափում:

Այդ օրը «Ճաղուկի փուշ» (մասուրի) են հաւաքում, տան երթին ու բոլոր շէնքերի շէմերին դնում, նոյնպէս և սնդուկ-ների գրախ կտղմը, դռներին մօսիկ, որ փշի վախից չարերն ու ջատուն չը զան ու չը մտնեն ներսը:

«Ծաղկըմուտի» օրը մարդիկ լիրանց բոլոր հաշիւները պէտք է մաքրեն. առնելիքներոր առնեն, տայիրներոր տան:

Այդ օրը գիշերով զուբսը մանգայ յաւ չեն համարում:

Ասում են, որ այդ վիշերը «սօնդերքը» պէտք է փուռը զցել կամ մի խորը տեղ, և թողնել այստեղ մինչև Քրօհնէնքը, թէ չէ գիշերը դուրս ելողին «կօնտօղը» նրանով եօթն անգամ «կը սօնդերքէ»:

«Ծաղկըմուտի» զիշերը ջրերը մի ժամի չափ կանգնում են և ոսկի արձաթ դառնում, բայց այդ րոպէին՝ ջուրը գնացող մարդուն աչքեն մի սարսափելի բան կերևայ. վախից կը լիախիչը մօտից և մինչև Շանդամ ջրի վրալից չանցնի, «կօնտոյօդր» կը խփի նրան:

Այդ զիշերը ծառելին էլ ծունը թն անում, երկրպագութիւն սայիս Արարտի:

«Դաղկըմուտի» զիշերը այս սովորութիւնն էլ կայ. մինչդեռ սնեցիք ամենը բոլորուած՝ տաքանում են օջախի շուրջը, անսկարծ գրսից գլանը մի բան են խփում, դուք բացում է, ներս է ընկնում մի «Հարիկա», մէջը քար գրած, երկայն չուալից կապօւած զցողը չերևում, հեռուից սպասում է: Տանը իրարանցում է ընկնում, սկսում է ծիծաղ, ուրախութիւն: «Հարիկան զէս ու զէն են քաշքշում, բայց էլլ զցողը հեռու մնում: Յետոյ թողնում են ձեռքից, չուանը դրսից քաշում ոն, բայց չի անցնում մի քանի բոպէ, կրկնում է սոխը,

մինչև որ տեսնելով որ չի լինում, դրսեցին դադար չի տալիս, կտղին, ընկոյդ են լցնում մէջը, և ապա թէ աներեւոյթ մարդը ձեռք է քաշում, հեռանում տնից:

«Փաղկըմուտի իրիկուան մի սեղան են սարքում, վրան «իբրիկով» (աման) ջուր դնում, երկու հատ էլ «օնի» (ձառէ, րգանք) ցախի և թողնում մինչի առաւօտ: Մի խնձորի մէջ էլ, կամ թէ խնձոր ըը զտնուի, «քեաստօնի» մէջ արծաթէ փող են դնում և պահում մինչի առաւօտ: Առաւօտեան խնձորն իրար մէջ բաժնում են՝ փողն ում որ ընկնում է, մի քիչ «լազտ», լորիս ու կարմիր «լիլիկ» (կայրի ծառերի բերած կարմիր հատիկները) զրապանը լցած, վերցնում է սեղանը և մի տղի կետ գնում է գոմը, առաջ աջ ոտը դնում, յետոյ ներս մտնում: Սեղանը դնում է գետնին, զրպանից հանում լորիան ու «լիլիկը» և շաղ տալիս մալերի վրայ, ասելու՝ «իսատ ու խինչ (խատուտիկ), Եք ու բացիկ. մեղուի պէս շատնաք»: Այդ ասելուց յետոյ սեղանի վրալից մի-մի կտոր բան բերանն են դնում, յետոյ կապում են «աշառը» (որձ հօրթը) և սեղանի կետ տուն բերում «Աչառի» առաջ «եմ» (ուտեստ) են դնում, եղջլւրներին մոմ վառում, վերցն էլ նստում, գոմից բերած սեղանի հաղոր ուտում:

Նոր-ռապարին թէւ կիրակի չեն պահում և մէկէլ օրերի
պէս բանում են, բայց շատ բաներ են պատմում այդ օրուայ
առիթով։ Հուսադէմինց զեռ լոյսն ու մութը չը բաժնուած,
ամեն կողմից հրացանների տրաքտրաքոցով աւետում են նոր
կեանքն ու նոր բախտութ

Այդ օրը առհասարակ ամեն բան շնորհաւորում են, սկսած իրանցից ու լիրանց մօտիկներից տներից ու «կօրօններից» մինչև իրանց գոմերն ու մալիքը, բոլորին նոր բախտ ու աջողութիւն են մաղթում: Հնորհաւորելու եկրզներին միւմի բան տալիս են եփած «լազու», կաղին, ընկոյզ և այլն: Առաւօտը, մալերին շնորհաւորելու գնացած ժամանակը, նախապէս ծառի մի քանի ճղներ մի քիչ խօժում են կրակը և ապա տանում, մալերին նրանցով թեթև շփում:

Երար տուն շատ քցելն են զնում շնորհաւորելու. աւելի պատահում է, որ խնդրեն դրացուն, որի ոտք վորձել են, վաղ-

վաղ գայ իրանց տունը շնորհաւորելու. ում ոտք որ լաւ է զալիս, այն տարին սիյս տնից բախտն անպակաս կը լինի և հակառակը:

Այդ օրը առաջին սրս բանողը լաւ որսորդ կը լինի:

Այդ օրը նոյնպէս վաղ-վաղ, թռչունը դեռ չը զարթած, գնում են ջուրը, լուացում, որ ջրի հետ իրանց ցաւն էլ գնայ, և ապա հետներն էլ ջուր են բերում տուն: Առաւոտեան բոլորն էլ լուացում են օջախի շարջը, ում լուացուած տեղից որ մրջիւն դուրս գայ, նա բախտ կունենայ:

Այդ օրը մէկմէկու փոխ բան չեն տալ, թէ չէ՝ բախտը յետ կերթայ:

Կծու և «վառեցուկ» կերակուր էլ չեն ուտիլ, ոչ էլ իրար թթու խօսք կասեն, որ ողջ տարին քաղցր ու անուշ անցնի:

Այդ օրը ընկոյզ կամ կաղին կոտրելը լաւ չեն համարում. արօր շատ կը կոտրուի:

Այդ առաւոտը բորբկ մանզալն էլ լաւ չէ, ոտին «մէլլըմուկ» կը լինի:

Ռւրիշից բան չեն ուզիլ, որ շատ «ուզուկ» չը լինին:

Ջահէլները կացնով փայտ չեն կոտրել, կոթը կը կոտրուի և միշտ «կեօթ կոտրուկ» կը լինին:

Այդ օր լծողն էլ արօր շատ կը կոտրէ:

Նոր-տարու առաւոտը երկու տղայ անխօս վեր են կենում. մէկը վեր է ելլում տան «ծածելը» (կաղնի ճղներից հիւսուած առաստաղ, ուր սովորաբար բուն են դնում մկները) և ձեռքի փայտով, կացնով կամ քարով թըքթըք սկսում է խփել «ծածելին», առաստաղի փայտերին կամ դռան վերի շէմին: Մէկը ներքեւից հարցնում է. «Բնչ կընես»: Աերևինս ասում է. «Մուկ կըստիմ կու (կտրել)»:—«Եեօր (ուր) դրկես պիտի»:—«Ստրմբոլ, կամ թէ՝ Աւ ծովուն ինտին, կամ թէ՝ այս ինչի տունը (չը սիրած մարդու անուն է տալիս): Էլի թըքթըք իրվում է փայտին. տակից էլի հարցնում է. «Բնչ կընես»:—Ցաւ կըստեմ կու»:—«Եեօր դրկես պիտի»:—Այս ինչ տեղ, մի հեռու տեղի անուն տալով, և այն այսպէս հարց ու պատասխանով լիշտակում են տան բոլոր պակասները, աշխատելով նրանց իրանցից մի հեռու տեղ կորցնել:

Նոյն առաւոտը երկու տղայ անխօս գնում են չը բերող խնձորենու կամ տանձենու մօտ, և երբ մէկը կացնով տալու է անում ծառին ասելով՝ «մէյվա (պտուղ) բերել չես, կտրեմ պիտի», մէկը վրայ է բերում. «կտրել մի. բերէ կու»: Այդպէս կրկնում են երեք անգամ: Այն տարին ծառը անպատճառ շատ պտուղ կը տայ:

Դաստիարակութեան ժամանակակից առաջին առաւոտը առաջի օրը, առաւոտեան և երեկոյեան ժամից յետով, շատերը սովորութիւն ունին ժամանակակից առաջին ժամանակակից առաջին առաւոտը: Նրանց «քաթան» կլոր, անխմոր բաղարջ հաց է, սովորական ցորենի հացի պէս, ոչ իւղ ունի և ոչ էլ մի առանձին անուշ համ: Յորենի հետ սովորաբար սիմինդրի ալիւր էլ են խառնում. մի քիչ էլ մեղրաջուր կամ «բէքմէզ»: «Քաթան» բաժանում են նոյնպէս աւագ-հինգշաբթի օրը և մէկէլ Զատկի ճրագալոցին:

Դննդի ճրագալոցի իրիկուան «ճաշի» մէջ «տուբին» (չը մանուռղ բրդի տակուցք) են դնում ու վառում:

Այդ իրիկուն՝ տան աղջիկը մի գդալ մածուն պիտի ուտի դռան յետեր, որ կովերը էգ փուղիկ բերեն:

Էլի ասում են, ով որ այդ իրիկունը լողանայ, նրա դարգերը ջուրը կը տանի:

Ճրագալոցի իրիկուան, ինչպէս և ամեն տաղաւար նաւակատիք օրերի իրիկուններին, տանը մոմ են վառում, խունկ ծխում և ձայնով ազօթում: Հասարակ կիրակնամուտերին մոմ վառելու սովորութիւն չունին:

«Տէրընտաղ» (Տեառնընդառաջ): Պատմում են, որ Տէրընտաղի իրիկուան, առաջ, իրանց հները եկեղեցու դռու տաշեղ են տարել, տէրտէրները վառել են և ազօթել, իսկ մնացած մոխիրը իրանք տանելիս են եղել իրանց տները դեղի համար, ցաւած տեղը քսելու: Հիմա չը կայ այդ սովորութիւնը:

Զատկէ. Աւագ-հինգշաբթին ձուերն եփում են, պահում մինչև շաբաթ: Այդ օրը ճրագալոցին, ամէնքը գրապանները մէկ-մէկ ձու դրած, գնում են եկեղեցի, և երբ բոլորը վառում են մոմերը, փոքրերը գրապաններից դուրս են հանում ձուերը և ուտում: Զատկի կիրակի օրը, վաղ առաւոտեան ներկում են ձուերը. միայն կարմիր չեն ներկում, այլ ամեն դոյնի. դեղին, կարմիր,

կանաչ, կապոյտ, նարնջագոյն և աղն: Ներկելու համար օգտառում են սովորաբար մի քանի ծառերի կեղևից ու փայտից, սոխի կճեպից և մի քանի ներկերից:

Նրանց Զատիկը շատ ուրախ է անցնում. իրար մօտ շնորհաւորելու համար գնալ-գալու սովորութիւն չունին: Այդ օրուան գլխաւոր հանդէսը ձուի կռւեցնելն ու խաղն է: Մեծ, փոքր ձու են կռւեցնում, ու խաղցնում, խիելով, գլորուելով ու նշան դնելով: Այդ օրուայ ուտելիքներն են՝ ձուաձեղը, խմորեղէնն ու կաթնեղէնը:

Բայց Զատիկից աւելի աղմկալի և ուրախ է անցնում նըրանց «Մեռելոցը», որ թէ և երկուշաբթին է նշանակուած, բայց նրանց մօտ ամեն մի գիւղ իր օրն ունի ընտրած, այսքան որ նոր-կիրակին չանցնեն, իսկ երբեմն երբ լաւ օրեր չեն լինում, նրանից էլ դէնն են անցնում: Այդ օրը թէ և մեռելոց է, բայց իսկապէս նրանց համար ուրախութեան օր է, նրանց հասարակական տօնն է, երբ ամբողջ գիւղը, մեծ, փոքր, կին, տղամարդ մասնակցում են իրանց բերած հասարակական հացկերութին, տղամարդիկ ու կանայք իրարից ջոկ-ջոկ. երբեմն աւելի հանդէս տալու համար՝ զօտեմարտ, նուագ ու պար են սարքում: Զատիկի ճրագալոցի իրիկուան և առաւօտը, նորտարու պէս, հրացաններ են արձակում:

Համբարչյան օրը առհասարակ ամենքը կաթ ու կաթնապուր են ուտում: Այդ օրին նրանք «կաթ ուտիչ» են ասում: Համբարձման վերաբերեալ այս աւանդութիւններն են պատմում:

Քրիստոսի երկինք վերանալու ժամանակ, իր գերեզմանի քարն էլ է ուզել հետը բարձրանալ, բայց Քրիստոս Տէրը չէ թողել. բրով հրել է ներքեւ, և քարը անշարժ մնացել է իր տեղում:

Քրիստոս համբառնալու ժամանակ ինն օր ճամփին է մնացել, ամէն մի օր մի հրեշտակի մօտ հիւր: Այդ այցելութեան համար է, որ իննը դաս հրեշտակի պառ են պահում:



Ե. ԼԱԼԱՅՆԻ

- | | |
|---------------------------------------|----------|
| 1) Քաւակը | 1 լ. — կ |
| 2) Վարանդա | 1 » 20 » |
| 3) Սիսիան | » — 80 » |
| 4) Զանգեզուր | » — 50 » |
| 5) Գանձակի գաւառ . Ա. Հատոր | » — 80 » |

Դիմել Ե. Լալայնцу. Տիֆլիս, Սեմինարія Ներսիսյան

Բուլանըն կամ Հարք գաւառ 1 լ. 50 կ

ՀՀ Ազգային գրադարան



NL0361226

